




ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ



1557919

ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ


ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶՐԿՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1557919

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2016



ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Հ 854

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ*

Հովհաննիսյան Ա.

- Հ 854 Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությանում և քեմալական Թուրքիայում/Ա.Հովհաննիսյան – Եր.: «Գիտություն» հրատ., 2016, 151 էջ:

Մենագրությունում թուրքական փաստաթղթերի հիման վրա քննության են առնվում Օսմանյան կայսրության և քեմալական Թուրքիայի կողմից հայ ժողովրդի բռնի ունեզրկման քաղաքականության մի շարք կարևոր հիմնախնդիրներ:

Նախատեսվում է մասնագետների, ուսանողների և ընթերցող լայն շրջանակների համար:

Կազմի վրա պատկերված է Մշո Սուրբ Թադեի եկեղեցին

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-5-8080-1213-4

© Ա. Ռ. Հովհաննիսյան, 2016

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց ցեղասպանության հետևանքներից են եղել ոչ միայն մարդկային կորուստներն ու հայրենագրկումը, այլ նաև՝ հայերին պատկանած անհամար գույքի կորուստը: Բազմաթիվ փաստեր և վավերագրեր վկայում են, որ օսմանյան կառավարությունը հայերի գույքը բռնագրավելիս ունեցել է որոշակի ծրագիր: Տնտեսական շահի ապահովումը խիստ էական գործառույթ է կատարել Ցեղասպանության գործադրման ընթացքում: Հայոց Մեծ եղեռնի կազմակերպիչները, քաղաքական նպատակներ հետապնդելուց զատ, մտադիր էին նաև ազատվել հայերի տնտեսական մրցակցությունից: Բնաջնջելով Օսմանյան կայսրությունում ապրող հայերին երիտթուրքական իշխանությունները տնտեսական ասպարեզից վերացրին իրենց հզոր մրցակցին, նրանց հարստության հաշվին կարողացան հոգալ պատերազմական մեծագումար ծախսերը, վճարել արտաքին ահռելի պարտքերը: Հայոց դարերի տքնությամբ ստեղծված ունեցվածքի յուրացումով հետագայում ստեղծեցին ազգային բուրժուազիա, իսկ արդեն Թուրքիայի հանրապետության շրջանում կարողացան ամբողջապես թրքացնել երկրի տնտեսությունը:

Թուրք պատմաբան Թաներ Աքչամը արդարացիորեն համարում է, որ Թուրքիայի Հանրապետությունը ցեղասպանության արդյունք է, իսկ այսօրվա Թուրքիայի տնտեսական հզորությունը մեծապես հիմնված է հայերի, ինչպես նաև հույների և այլ փոքրամասնությունների անհատական և համայնքային սեփականության բռնագավթման ու կողոպուտի վրա¹: Այդ առումով Հայոց ցեղասպանությունը կարելի է դիտարկել որպես ապակազմավորման և կազմավորման համաժամանակյա գործընթաց, այսինքն՝ թե ինչպես է մի խմբի ոչնչացման հաշվին կազմվել, ստեղծվել մեկ ուրիշը՝ նոր թուրքական նույնականությամբ: «Նոր նույնականության կազմավորման» կամ Անատոլիայի և Արև-

¹ St' u Taner Akçam. From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide. London: Zed Books, 2004; նույնի A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility. New York: Metropolitan Books, 2006:

մըտյան Հայաստանի «համասեռացման» (ըստ էության՝ նրա թուրքացման) այդ գործընթացի հետևանքը եղան հայերի ցեղասպանությունն ու հայրենագրվումը՝ պատրիցիդը (հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից, գրկումը): Բռնի տեղահանումն ու ջարդը ուղեկցվում էին հայերի ունեցվածքի թալանով և մշակութային արժեքների ոչնչացմամբ²: Ընդհանուր առմամբ, փորձագետներն այդ գործողությունները որակում են որպես Օսմանյան կայսրության հայ բնակչության անհատական և կոլեկտիվ ունեցվածքը նորահայտ թուրքական և քրդական (մահմեդական) «սեփականատերերին» ապօրինաբար փոխանցելու պլանավորված ձեռնարկում:

Բազմաթիվ հետազոտողներ հայերի գույքի բռնագավթումը Հայոց ցեղասպանության գլխավոր դրդապատճառներից մեկն են համարում: Արևմտահայ առևտրական բուրժուազիան, դրամատերերն ու արդյունաբերողները, շնորհիվ իրենց տաղանդի ու ձեռներեցության, նույնիսկ օսմանյան բռնատիրության ու կամայականությունների պայմաններում, կարողացել էին տեր դառնալ որոշակի հարստության, ստեղծել դրամական զգալի կուտակումներ: Նրանք ակտիվ մասնակիցներն էին նաև այն մոդեռնիզացիոն փոխակերպումների, որոնք էական ազդեցություն թողեցին կայսրության սոցիալ-մշակութային և տնտեսական ոլորտների վրա՝ սկսած առևտրից և արդյունաբերական արտադրությունից, մինչև սպառողական մշակույթը, ինստիտուցիոնալ կազմակերպություններից մինչև ուրբանիզացիան և արվեստը: Տրանսֆորմացիայի կարևորագույն հետևանքներից մեկն էլ ոչ մուսուլման բնակչության շրջանում վերնախավի ձևավորումն էր: Օսմանյան արդիականացման և արևմտյան ինտեգրման առաջատար ղեկավարները մեծամասամբ այս վերնախավային համայնքի անդամներն էին: Նրանք դարձան ավանգարդային կենսակերպի ներկայացուցիչներ՝ հարստության ակնհայտ բարձր մակարդակով, քաղաքական և մշակութային նոր դիրքորոշմամբ: Այդ փոխա-

² Անուշ Ռ. Հովհաննիսյան, Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում, ՎԷՄ համահայկական հանդես, թիվ 2, 2010 թ., էջ 100-109:

կերպումները բացասական արձագանք ստացան մուսուլման բնակչության կողմից, որն իրեն համարում էր կայսրության «գերակա ազգությունը» (millet-i hakime): 19-րդ դ. վերջի-20-րդ դ. սկզբին օսմանյան մասնագիտական ամսագրերի, մամուլի էջերում, ակումբներում տարբեր հայացքներ ունեցող թուրք մտավորականներ՝ ազատականներ, իսլամականներ, էտատիստներ, ազգայնականներ աշխույժ քննարկում էին երկրի տնտեսական զարգացման հնարավոր ուղիները³: Քննարկումներից երևում է, որ ոչ մուսուլման բուրժուազիային արդյունաբերության բնագավառից, ներքին և արտաքին ասպարեզներից դուրս մղելը, շուկային միանձնյա տիրելը, տնտեսական ամուր դիրքեր նվաճելը դարձել էին բարձրացող թուրք ազգային բուրժուազիայի գլխավոր մտահոգությունը⁴: Այդ վեճերում բազմիցս անդրադարձ էր կատարվում «ազգային տնտեսություն» (milli iktisad) կառուցելու անհրաժեշտությանը: Իրականում «ազգային տնտեսությունը», ինչպես նշում են հարցով զբաղվող պատմաբաններ Ա. Աքթարը, Ս. Չետինօղլուն և այլք, ոչ այլ ինչ էր, քան «տնտեսության թուրքացում»⁵: Թյուրքականության զաղափարախոս Ջիյա Գյոքալփը մասնավորապես տնտեսության զարգացման մասին իր տեսական մտքերում առաջ էր քաշում էթնոկենտրոն թուրքական, տնտեսության զաղափարը⁶: «Օսմանյան, իմա՝ թուրք ազգի

³ Şi' u Necmettin Doğan, *The Origins of Liberalism and Islamism in the Ottoman Empire (1908-1914)*, /Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie am Institut für Soziologie. Fachbereich Politik- und Sozialwissenschaften der Freien Universität Berlin, 2006/, chapter 3 "Ottoman intellectuals in the nineteenth century", pp.55-206 https://www.academia.edu/6346089/The_Origins_of_Liberalism_and_%C4%B0slamism_in_the_Ottoman_Empire

⁴ Միմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 21:

⁵ Ayhan Aktar, "Cumhuriyetin ilk yıllarında uygulanan 'Türkleştirme' Politikaları", *Tarih ve Toplum*, No: 156, 1996, s. 4-18; Sait Çetinoğlu, "Etnik Temizlik ve Ekonominin Türkleşmesi", <http://www.birikimdergisi.com/guncel/etnik-temizlik-ve-ekonominin-turklesmesi>; Rifat Bali, "Politics of Turkification during the Single Party Period" <http://www.rifatbali.com/images/stories/dokumanlar/basel.pdf>

⁶ Ջիյա Գյոքալփի մասին տե՛ս Մաֆարյան Ալ., Ջիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

տնտեսական այդ իդեալին» հասնելու «առաքելությունը» որդեգրեցին իթթիհադականները և նրանց քաղաքական ժառանգորդ հանդիսացող քեմալականները: Համաձայն նրանց ծրագրի նորահայտ «թուրք բուրժուաներն» այլևս կարիք չէին ունենալու մըրցակցության մեջ մտնել, նոր շուկաներ հետազոտել, սեփական դրամագլուխ կուտակել, պետք էր միայն «հեռացնել» մրցակցին և տիրանալ նրա ունեցվածքին: Մ. Չեթինօղլուի խոսքերով. «1915 թ-ի ամենամերկապարանոց փաստերից և ամենաէական հետեւանքներից մեկը պատմության մեջ ամենամեծ գույքի և հարստության փոխանցման իրականացումն է: Այդ հետևանքը Թուրքիայի հասարակությանը՝ իր թուրքով, քրդով... բոլորին հուզող և մեր օրեր հասնող ամենաէական սյուներից մեկն է»⁷:

Վերջին տարիներին հայերի «լքյալ գույքի» թեման դարձել է Թուրքիայի հանրային քննարկման առարկա, հրատարակվել են բազմաթիվ փաստաթղթեր, լույս են տեսել ուշագրավ աշխատություններ: Սույն ուսումնասիրությունը, որը պատրաստվել է վերջին շրջանում Թուրքիայում հրապարակված աղբյուրների, թուրք և արևմտյան հեղինակների աշխատանքների, ինչպես նաև հայ պատմաբանների հետազոտությունների հիման վրա՝ փորձ է սեղմ և ամփոփ ձևով ներկայացնել հայերի ունեզրկման գործընթացը, դրա իրագործման մեխանիզմը և արդյունքները, ինչպես նաև այդ քաղաքականության ժառանգականությունն ու շարունակականությունը Թուրքիայում: Անդրադարձ է կատարվում նաև Հայոց պահանջատիրության շուրջ առկա իրավաբանական-փորձագիտական հայեցակարգի խնդիրներին: Առանձին ենթաբաժին է հատկացված «մշակութային ցեղասպանությանը»՝ հայկական ճարտարապետական հուշարձանների ոչնչացմանը, ինչը նույնպես հայոց կոլեկտիվ սեփականության հոգևոր և նյութական կորստի մաս է կազմում: Գնահատական է տրվում նաև Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության վերջին շրջանում ձեռնարկած «կոսմետիկ» PR-քայլերին՝ մեկ-երկու եկեղեցիների վերականգնման և կամ հայերից

⁷ Մայիթ Չեթինօղլու, «2015թ.» 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» <http://akunq.net/am/?p=30783>

բռնագրավված մեծաքանակ համայնքային գույքի չնչին մասի վերադարձի քաղաքականությանը:

Հետագոտության ժամանակագրական սահմանները միտումնավոր չեն թվագրված, թեև հասկանալի է, որ որպես մեկնակետ վերցված է 1915թ. Հայոց ցեղասպանության տարեթիվը: Հայերի, ինչպես և այլ փոքրամասնությունների թալանն ու կողոպուտը մշտական երևույթներ էին օսմանյան պետությունում: Սակայն ունեզրկման գործնթացը որպես ծրագրված քաղաքականություն և ցեղասպանության բաղկացուցիչ մաս հանդես եկավ հենց երիտթուրքերի ժամանակաշրջանում: Այդ քաղաքականության ժառանգորդը և շարունակողը դարձան քեմալականները: Հանրապետական Թուրքիայի ողջ գոյության ընթացքում այդ քաղաքականությունը հետևողականորեն շարունակվում էր՝ տարբեր գործողությունների, իրավական ակտերի և քայլերի միջոցով: Ավարտվել է արդյոք այդ գործընթացը հարցի պատասխանն է այն կվերջանա, երբ հանցագործ կողմը կդադարի օգտվել իր «ոճիրի պտուղներից»:

Ներկայացված նյութը կօգնի պատասխանել մի քանի կարևոր հարցերի.

– Արդյո՞ք ք ժամանակակից Թուրքիան պատասխանատու է Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրի համար:

– Ինչո՞ւ է Թուրքիան համառորեն ժխտում ցեղասպանության փաստը, դրանով իսկ ժխտելով սեփական պատմությունը:

– Ինչո՞ւ է Թուրքիան կատաղի պայքար մղում տարբեր երկրների խորհրդարաններում Հայկական բանաձևերի ընդունման դեմ և փորձում խնդիրը տեղափոխել «պատմական հարթություն»:

Ուսումնասիրությունը հասցեագրված է մասնագետներին, ինչպես նաև ընթերցողների լայն շրջանակին՝ նպատակ ունենալով ընդհանուր պատկերացում տալ Հայոց ցեղասպանության և հայերի ունեզրկման խնդիրների մասին:

**«ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ»
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Թեև ունեզրկման ենթարկվեցին հայության բոլոր՝ թե՛ ունեվոր, թե՛ չունևոր հատվածները, այնուամենայնիվ այդ գործընթացի կարևորագույն թիրախ էր հանդիսանում Օսմանյան կայսրության «հայկական կապիտալը», ուստի դրան արժե հատուկ անդրադառնալ:

Ու թեև վերջին շրջանում կատարվել են մի շարք նոր հետազոտություններ⁸, դեռևս դժվար է ամբողջական պատկերացում կազմել Օսմանյան կայսրությունում «հայկական կապիտալի» մեծության մասին: Արխիվային նյութերի մի հսկայական մասը դեռ ուսումնասիրված չէ (դրանք Թուրքիայում են՝ արգելանքի տակ), մի մասն էլ ոչնչացվել է հայերի ցեղասպանության ժամանակ: Այդուհանդերձ հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմն սկսվելուց առաջ հայերը Օսմանյան կայսրության տնտեսության մեջ խաղում էին կարևոր դեր, և նույնիսկ բռնապետության և կամայականությունների պայմաններում էլ ունեին մեծ կապիտալ: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Օսմանյան կայսրության արտաքին և ներքին խոշոր առևտրում, արդյունաբերական արտադրության մեջ, բանկային գործերում հայերն ազդեցիկ դիրք էին գրավում: Նրանք իրենց ձեռքում էին կենտրոնացրել երկրի տնտեսական կարևոր լծակները: Հայկականի համեմատությամբ, թուրք բուրժուազիան ածանցյալ վիճակում էր և օսմանյան տնտեսության մեջ նշանակալի տարր չէր կազմում: Հայ վաճառականներն ու գործա-

⁸ Ugur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London/New York: Continuum, 2011; Nevzat Onaran, *Emvâl-i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi*, İstanbul, Belge Yayınları, 2010; Bedross Der Matossian, "The Taboo within the Taboo: The Fate of Armenian Capital' at the End of the Ottoman Empire", in *European Journal of Turkish Studies*[online], Complete List, 2011, Online since 06 octobre 2011, URL: /index4411.html; Սատյան Ա., *Դարի կողոպուտը, Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.*, Երևան, 2013:

րանատերերը նշանակալի դեր էին խաղում երեք աշխարհագրական մակարդակներում. կենտրոնական քաղաքներում (Մոսմբուլ, Անկարա, Տրապիզոն), նահանգային քաղաքներում (Կայսերի, Խարբերդ, Թոքթաթ) և միջազգային քաղաքներում (Լոնդոն, Մանչեստր)։

Երիտթուրքական իշխանությունները խիստ մտահոգված էին, որ հայերի տնտեսական և նյութական հզորացումը հիմք է դառնալու նրանց վաղվա քաղաքական հաղթանակների համար։ Աստիճանաբար թուրք իշխանությունների մոտ ուժեղանում էր այն մտայնությունը, որ վաղ թե ուշ երեկվա հպատակ հայը տիրանալու է իրենց իշխանությանը, ինչպես դա արել էին տնտեսության ասպարեզում⁹։

Օսմանյան կայսրությունում պետական պաշտոնյաների ընտրության ժամանակ հաշվի էին առնվում ոչ թե անձերի արժանիքներն ու կարողությունները, այլ նրանց ազգային եւ կրոնական ծագումը։ Գրեթե ողջ պաշտոնեությունը, զինված ուժերը, ոստիկանությունը եւ դատական մարմինները կազմված էին մահմեդականներից, մեծամասնությամբ՝ օսմանցի թուրքերից։ Իրենց վերապահելով իշխողի դերը՝ նրանք երկրի ամբողջ տնտեսական դաշտը թողել էին ոչ թուրք տարրերին¹⁰։ Հայերն Օսմանյան կայսրության մյուս հպատակ ժողովուրդների հետ, ավելի քան հինգ դար տքնեցին կայսրության տնտեսությունը բարգավաճ պահելու համար։ Զրկված լինելով վարչական և զինվորական գործունեության հնարավորությունից՝ օսմանյան պետության մեջ առևտուրն ու արհեստները դարձան այն թույլատրված ասպարեզները, ուր հայերը կարող էին փոքրիշատե ազատ կերպով

⁹ Երիտթուրքերի այդ «վախերի» մասին գրել է և Գրիգոր Ջոհրապը։ 1913 թ. իր հոդվածներից մեկում նա կանխատեսել է, որ ազգային կապիտալի ստեղծման համար իթթիհատական իշխանությունները կփորձեն հարկադրանքի միջոցով տնտեսական ասպարեզից հեռացնել մրցակից քրիստոնյաներին՝ հետագայում նրանց մասնավոր շարժական և անշարժ գույքը յուրացնելու համար (տես Գ. Ջոհրապ, «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ», *Երկրի ժողովածու*, հ. Գ։ Ե., 2002, էջ 531-532)։

¹⁰ Լևոն Չորմիսյան, *Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմության*, Ա. հատոր., Բեյրութ, 1972, էջ 55։

դրսևորել եւ զարգացնել իրենց ցեղային-ազգային ունակությունները: XV դարից Կոստանդնուպոլսում սկսեցին բազմանալ հայ առևտրականների խանութները, առանձին շուկաները, խաներն ու վաճառատները: Միջերկրական և Սև ծովերից դեպի Իրան և Հնդկաստան տարանցիկ առևտուրը հիմնականում կատարում էին հայ վաճառականները¹¹: Կայսրության մյուս տնտեսական կարևորագույն կենտրոնի Զմյուռնիայի հայ առևտրականները կապված էին եվրոպական երկրների հետ: Հայ վաճառականները տիրապետում էին եվրոպական լեզուներին և եվրոպական առևտրի մեթոդներին, այդ իսկ պատճառով կարողացան դառնալ թուրք-եվրոպական առևտրի միջնորդներ¹²: Թուրք-եվրոպական առևտրի մեջ գլխավոր բաժինը պատկանում էր հայ վաճառականներին: Բազմաթիվ հայ առևտրականներ, չգոհանալով եվրոպացիների ներկայացրած ապրանքների ընտրությամբ, իրենք կապեր հաստատեցին Եվրոպայի արդյունաբերական կենտրոնների և առևտրական ընկերությունների հետ: Նրանցից շատերը նույնիսկ հաստատվեցին եվրոպական քաղաքներում, գրասենյակներ բացեցին և մասնաճյուղեր հիմնեցին: Նեղ գտնելով Օսմանյան կայսրության շուկան՝ սկսեցին դիրքեր գրավել միջազգային առևտրում՝ էապես նպաստելով Ասիայի և Եվրոպայի միջև ապրանքափոխանակությանը¹³: Եվրոպական դրամազիխի և գործարանային արտադրությունների մուտքով կարճ ժամանակահատվածում հայերի տնտեսական վիճակի մեջ արագ բարելավում տեղի ունեցավ:

Պետք է նշել, որ հայերի տնտեսական առաջընթացն ու զարգացումը կատարվում էր երկրում տիրող կամայականու-

¹¹ Ալբերտ Խառատյան, *Կոստանդնուպոլսի հայ գաղութը, (XV-XVIIդդ.)*, Երևան, 2007, էջ 51-67:

¹² Հայկ Ղազարյան, *Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.*, Երևան, 1967, էջ 403:

¹³ Հովհաննիսյան Ա., «Արտոնյալ վաճառականության» (Hayriye tüccarları) նախաձեռնումից մինչև «տնտեսության թուրքացման» քաղաքականություն (19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում թուրք/մուսուլման ձեռներեցությունը խթանելու փորձի մասին)», *Արևելագիտության հարցեր* /Գիտական հոդվածների պարբերական ժողովածու, ԵՊՀ/ No.10 (սկիզբված ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի ծննդյան 60-ամյակին), Երևան 2015, էջ 17-50:

թյունների պայմաններում: Նույն եկամուտն ունեցող թուրք վաճառականից պետությունը երեք անգամ պակաս հարկ էր վերցնում, քան հայ վաճառականից: Կողոպուտներն ու կանխամտածված հրդեհները ավերածության էին ենթարկում Վանի, Խարբերդի, Ադանայի և այլ կենտրոնների շուկաները: Հակառակ իրենց դեմ գոյություն ունեցող թուրքական ատելության և հալածանքների՝ հայերը շարունակում էին առաջնային տեղ գրավել կայսրության առևտրի մեջ:

Այսպես. 20-րդ դարի առաջին տասնամյակում Սեբաստիայում, որի բնակչության 35 %-ը հայեր էին, 166 ներմուծող վաճառականներից 141-ը, 150 արտահանողներից 127-ը, 9800 մանր առևտրականներից և արհեստավորներից 6800-ը հայեր էին: 150 ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը թուրքական էին կամ խառը կապիտալով, 17700 աշխատավորներից 14000-ը հայեր էին: Այսպիսով՝ առևտրականների 85 %-ը, արհեստավորների 70 %-ը, ձեռնարկատերերի 85 %-ը, աշխատավորների 80 %-ը հայեր էին: Ամբողջ երկրի մասշտաբով հայերը վերահսկում էին ներմուծման 60 %-ը, արտահանման 40 %-ը և ներքին առևտրի 80 %-ը¹⁴:

Հայերի նախաձեռնությունը զուտ վաճառականության մեջ չսահմանափակվեց: Նրանք իրենց ճարտարությունը ցուցաբերեցին տնտեսության տարբեր ոլորտներում: Գտնվեցին նաև առևտրականներ, ովքեր եվրոպական սարքավորումներ, մեքենաներ փոխադրեցին երկիր և տեղում սկսեցին կազմակերպել եվրոպական որակ և արտաքին տեսք ունեցող ապրանքների արտադրություն: Աստիճանաբար փոխվում էր կապիտալի բնույթը: Առևտրական կապիտալը փոխակերպվում էր արդյունաբերականի: XX դարի սկզբին, օրինակ, Արաբկիրում, որտեղ կտավագործությունը հայ ազգաբնակչության հիմնական զբաղմունքն էր, արդեն գոյություն ունեին մանուսայի՝ 15, մանրաթելի՝ 9 և սփռոցի և սավանի պատրաստման 18 ձեռնարկություններ:

¹⁴ Инджикян О.Г., *Буржуазия Османской империи*, Ереван, 1977; Bedross Der Matossian, "The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire," in *TURCICA*, Issue # 39, Fall 2007, pp.147-174.

Արդյունաբերության որոշ ճյուղերում նկատվում էր անցում մանուֆակտուրային արտադրությունից դեպի գործարանային արտադրություն: Կարինում, Վանում, Բաղեշում շալագործական, պղնձագործական և այլ ձեռնարկությունների արտադրանքը սպառվում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում¹⁵: Եվրոպական սարքավորումներով հագեցած էր Ֆարքիկատորյան եղբայրներին պատկանող՝ 1870 թվականին Խարբերդում հիմնված մետաքսի գործարանը, որն իր տեսակով միակն էր երկրի ասիական մասում: Այստեղ արտադրված որակյալ մետաքսը մեծ համբավ ուներ եվրոպական շուկայում: Այն մրցանակներ էր շահել միջազգային ցուցահանդեսներում և իր որակով չէր զիջում Լիոնի համբավավոր մետաքսին¹⁶:

Թուրքերն իրենք իսկ, անուղղակի կերպով, նպաստել են հայերի տնտեսական հզորացմանը, քանզի արհամարհելով տընտեսական ասպարեզը՝ առևտրի և արհեստների ասպարեզները թողել էին ոչ թուրք տարրերին: Թուրքերի հիմնական զանգվածը մշտապես ձգտել է դառնալ պաշտոնյա կամ զինվորական և թողել է, որ ուրիշ ազգերը տքեն և բարիքներ ստեղծեն իրենց համար:

«Բոլոր չարիքների արմատն այն է, - իր հիշողություններում խոստովանել է գահընկեց արված Աբդուլ Համիդ II-ը, - որ ոչ մի օսմանցի չի աշխատում իրական արժեքներ ստեղծելու համար: Օսմանցին սովոր է պարոն լինել և աշխատանքը ուրիշներին թողնել: Նա ապրում է և զվարճանում: Մեր երիտասարդները կարծում են, թե իրենք չեն կարող այլ բան դառնալ, քան սպա և պաշտոնյա»¹⁷:

XIX դարի կեսերից օսմանյան տնտեսության մեջ հայերի աստիճանական հզորացումը սկսեց առաջացնել օսմանյան իշխանությունների լուրջ մտահոգությունը, որոնք տնտեսական տեռոր սկսեցին հայերի և ողջ քրիստոնյա բնակչության հանդեպ, որի ընթացքում վերջիններս կորցրեցին մեծ քանակությամբ

¹⁵ Ա. Աստոյան, «Հայերն օսմանյան տնտեսության մեջ»
<http://hetq.am/arm/news/31209/hayern-osmanyanyan-tntesutyan-mej.html>

¹⁶ Հայկ Վահե, *Խարբերդը և անոր ոսկեդեղն դաշտը*, Նյու Յորք, 1959, էջ 640-643:

¹⁷ Ա. Աստոյան, նշվ. աշխ:

շարժական և անշարժ գույք և մշակելի հողերի հսկա տարածություններ¹⁸։ Անօրինականությունների և կամայականությունների ալիքը հազիվ էր հանդարտվել, երբ ծայր առան 1894-1896թթ. հայկական ջարդերը, որոնք բերեցին նոր ավեր, թալան ու մի շարք շրջանների առևտրական կապերի խզում, արտադրության նվազում և տնտեսական անկում։

Անգլիացի դիվանագետ Պիրսը կոտորածների դրդապատճառներից ամենանշանակալի էր համարում այն հանգամանքը, որ հայերը կարողացել էին իրենց ձեռքում կենտրոնացնել երկրի տնտեսական կարևոր լծակները և տնտեսության զարգացման գործում հանդես էին գալիս առաջամարտիկների դերում¹⁹։

1894թ. Սասունի կոտորածից անմիջապես հետո սուլթան Աբդուլ Համիդը Բ.-ն Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպան Ռատոլնիի հետ հանդիպման ժամանակ ասել է հետևյալը. «Ես կնախընտրեմ մեռնել, քան թե թույլ կտամ, որ Հայաստանում բարենորոգումներ լինեն, որովհետև բարենորոգումների պարագայում հայերը հավասարության իրավունք կունենան և իրենց խելքով, աշխատասիրությամբ այնքան առաջ կգնան, որ մենք՝ թուրքերս, հայերի հպատակը կդառնանք»²⁰։

1894-1896թթ. հայկական կոտորածները ազդանշան եղան թուրք հաջորդ սերունդների համար։ 1908թ. իշխանության եկած երիտթուրքերը գտնում էին, որ Աբդուլ Համիդը անկատար գործ է արել՝ ողջ հայությանը չոչնչացնելով, քանի որ հայերն, այդքան կորուստներ կրելուց հետո, քսան տարի անց, ոչ միայն վերագտել էին իրենց, այլև հզորանալով՝ «սպառնալիք» դարձել թուրքերի համար։ Հայերի նկատմամբ թուրքերի վախը և ատելությունը շեշտվեց 1912-1913թթ. Բալկանյան պատերազմում կայսրության պարտությունից և Հայկական բարենորոգումների հարցի բարձրացումից հետո։ Բարենորոգումների համար հայերի պայքարը, երիտթուրքական կուսակցության պարագլուխներից մեկի՝ դոկ-

¹⁸ Ջոն Կիրակոսյան, *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ*, Երևան, 1982, էջ 50։

¹⁹ Նույն տեղում, էջ 132։

²⁰ Վահագն Շատրյան, *Ակնարկներ Հայկական ցեղասպանության մասին*, Երևան 2004, էջ 8-9։

տոր Նազըմի կարծիքով, դառնալու էր հայոց անկախության սկզբնավորումը, իսկ արևելյան նահանգների վրա հայկական պետության կազմավորումը նա համարում էր թուրանական ծրագրի տապանաքարը²¹: Դրա վկայությունը ըստ Նազըմի այն էր, որ 1908թ. Մահմանադրության հռչակումից հետո հայերը բռնել են ազգային, մշակութային, տնտեսական անօրինակ վերելքի ճամփան: Հայոց պետության կազմավորմամբ թուրքերը ոչ միայն հրաժարվելու էին թուրք ցեղերի միավորման գաղափարից, այլև թուրքական պետությունը սահմանափակվելու էր Կոնիայի սելջուկ սուլթանների նեղ հողատարածքների վրա: Սրա մեջ Նազըմը տեսնում էր թրքության մահացման սկիզբը: Նա գտնում էր նաև, որ հայերի վերացումով Հայկական հարցին վերջ դնելուց զատ, թուրքերը կազատվեն նրանց տնտեսական մրցակցությունից, և լայն գործունեության ասպարեզ կստանան, իսկ հայերի հարստությանը տեր կդառնան օսմանյան պետությունն ու թուրքերը²²:

Միայն ուժեղ մրցակցի վերացումով կարելի էր ապահովել թուրքերի ապագան²³:

Թուրքերը երկրում չունեին այլ առավելություն, քան իրենց ձեռքում կենտրոնացած զորքը և պետական կառավարման մյուս լծակները, որոնց վրա հենվելով, նրանք ձեռնամուխ եղան իրենց գոյությանը, ներկային, ապագային և իդեալներին՝ Մեծ Թուրանի ճանապարհին վտանգ ու խոչընդոտ ներկայացնող հայությանը, Հայաստանը և Հայկական հարցը հրապարակից վերացնելու գործին:

²¹ Նույն տեղում, էջ 11

²² Մելիկան Զադե Ռեֆաթ, Օսմանեան յեղափոխութիւնը ևւ մութ ծայրերը, Բեյրութ, 1938, էջ 160:

²³ Զոն Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 91:

ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵՋՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայերի ունեցվածքը բռնագրավվեց 1915 թ., երիտթուրքերի կառավարության կողմից: Ի լրումն ավելի քան 1,5 միլիոն հոգիների սպանդի և հայերին՝ իրենց 4000-ամյա հայրենիքից արտաքսման, Թուրքիայի կառավարությունը թուրք և քուրդ բնակչության միջոցով գողացավ հայկական ակտիվները, բռնագրավեց հայկական գույքը և ոչնչացրեց հայկական պատմական հուշարձանները: Ըստ Տիգրան Քոյունջյանի «միասին վերցրած այդ գործողությունները կարելի է դիտարկել որպես մանրակրկիտ ծրագրված հսկայածավալ հանցագործություն և «դարի կողոպուտ»²⁴:

Գործընթացը, որն սկիզբ էր առել երիտթուրքերի օրոք Օսմանյան կայսրությունում, շարունակվեց հետագա իշխանությունների կողմից արդեն նոր հանրապետական Թուրքիայում: Տասնամյակներ շարունակ հանրապետական Թուրքիայի իշխանություններն օգտագործելով տարբեր օրենսդրական հրամանագրեր, կամ Ուղուր Ունգյորի սահմանմամբ «օգտագործելով արդարադատության համակարգն անարդարության» համար՝ վերջ դրեցին հայերի և նրանց տնտեսական ներկայությանը Արևմուտյան Հայաստանում և Անատոլիայում²⁵:

Հայերի ցեղասպանությունը, որպես լայնամասշտաբ հանցագործություն իրականացվում էր մի շարք գործընթացների՝ հայ վերնախավի ներկայացուցիչների ձերբակալություն և սպանություն, հայ բնակչության տեղահանում, ջարդ, բռնի ձուլում, նյութական մշակույթի ոչնչացում և սեփականագրվում, համադրմամբ: Չնայած այդ գործողությունները տարբեր վայրերում տարբեր ձևերով և տարբեր գերատեսչությունների կողմից էին

²⁴ Dicran Kouyumjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", <http://armenianstudies.csu/fresno.edu>

²⁵ Uğur Üngör, "Confiscation and Colonization: The Young Turk Seizure of Armenian Property" <http://www.armenianweekly.com/2011/04/22/confiscation-and-colonization-the-young-turk-seizure-of-Armenian-property/html>

իրականացվում, դրանց վերջնականատակը մեկն էր՝ ոչնչացում:

Ջելալ Բայարի հուշագրություններից ակնհայտ է դառնում, որ երիտթուրքերը կազմել էին Անատոլիայի էթնիկական գտման և թուրքացման եղանակների մասին մանրամասն զեկույցներ: Երկիրը քրիստոնյաներից «մաքրելու» այդ ծրագրերը չէին սահմանափակվում միայն հայերով և իրագործվում էին դեռ առաջին համաշխարհային պատերազմից առաջ, իսկ Անատոլիայի թուրքացումը, հատկապես՝ Բալկանյան պատերազմներից (1912–1913 թթ.) հետո, դարձավ կառավարության հիմնական քաղաքականությունը²⁶:

Երբ սկսվեց համաշխարհային պատերազմը, բարեփոխումների պահանջի պատրվակով արտաքին միջամտության սպառնալիքը վերացավ, և այդ պայմաններում ավելի հեշտ ու հանգիստ հնարավոր դարձավ ավարտել Անատոլիայի թուրքացումը: Իգուր չէ, որ երիտթուրքերի գաղափարախոսներն ամեն առիթով պնդում էին, թե «Ժամանակակից պետության ստեղծումը հնարավոր է միայն միասնական էթնիկական ընդհանրության պայմաններում»²⁷:

Պատերազմի ավարտին ավելի քան 2,900 հայկական բնակավայրեր (գյուղեր, քաղաքներ, թաղամասեր) դատարկված էր, իսկ դրանց բնակիչների մեծամասնությունը՝ մահացած:

Հայերի բռնի տեղահանումն սկսվեց 1915 թ. փետրվարին: «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեին անհրաժեշտ էր օրինականացնել այդ տեղահանությունները, ուստի 1915 թ. մայիսի 27-ին Օսմանյան կայսրության իշխանություններն ընդունեցին մի ժամանակավոր օրենք, որը «իրավական» քող ծառայեց հայ ժողովրդի կանխամտածված զանգվածային տեղահանության և ոչնչացման՝ ցեղասպանության համար: Օրենքը վերնագրված էր հետևյալ կերպ «Պատե-

²⁶ "Türnak içindeki tüm ifadeler": Celal Bayar, *Ben de Yazdım*, Cilt 5, İstanbul 1967, s.1573.

²⁷ Ziya Gökalp, "Millet Nedir, Milli İktisat Neden İbarettir", İst. 1915 ; Zafer Toprak, *Türkiye'de «Milli İktisat» (1908-1918)*, Ankara, 1982, s.32; Zafer Toprak, *Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950) İttihat-Terakki ve Devletçilik*, İstanbul, 1995.

710515
րազմի ժամանակ կառավարության գործողությունների դեմ հանդես եկողների նկատմամբ ռազմական տեսանկյունից իրականացվելիք միջոցառումների վերաբերյալ ժամանակավոր օրենք»։ Թուրքական պատմագրության մեջ ընդունված է այն անվանել *Tehcir kanunu* (Տեղահանության մասին օրենք) կամ էլ՝ «*Sevkiyât kanunu* (Տարահանման մասին օրենք)։ Մի քանի օր անց՝ 1915 թ. հունիսի 1-ին, կառավարությունը հրապարակեց օրենքը, որն արդեն իսկ փաստացի գործում էր, «Թաքվիմի վաքայի» պաշտոնաթերթի առաջին էջում²⁸։ Նշենք, որ Թալեաթ փաշան 1915 թ. մայիսի 26-ով թվակիր՝ Ներքին գործերի նախարարության գրության մեջ հայտնում է, որ ինքը հայերի աքսորին մեկնարկ է տվել նախքան օրենքի հրապարակումն ու վարչակազմի որոշում ընդունելը²⁹։


Այդ օրենքում հայերն ուղղակիորեն չէին հիշատակվում։

²⁸ Ինչպես նշում է հայ թուրքագետ Ռ.Մաֆրաստյանը, ցայսօր այդ օրենքի և բովանդակության, և՛ հրապարակման առանձնահատկությունների հետ կապված շատ հանգամանքներ ինչպես մեզանում, այնպես էլ արտերկրում մնում են չպարզաբանված՝ նպաստելով իրարամերձ մոտեցումների դրսևորմանը։

Վիճահարույց խնդիրներից է, օրինակ, օրենքի ընդունման և հրապարակման ամսաթվերի հարցը։ Որոշ աշխատություններում, օրինակ, նշված է 1915 թ. մայիսի 26-ը։ Այլ գրքերում կարող ենք կարդալ, որ այդ օրենքը մամուլում հրապարակվել է 1915թ. մայիսի 27-ին։ Միևնույն թուրքական պաշտոնական վավերագրերը փաստում են, որ առաջին ամսաթիվը վերաբերում է ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնի գեկուցագրին, որով նա դիմել է կառավարությանը և պահանջել, որ ընդունվի օրենք հայոց տեղահանության մասին, իսկ երկրորդը՝ օրենքի ընդունման ամսաթիվն է, այլ ոչ թե մամուլում հրապարակման, ինչը տեղի է ունեցել հինգ օր ավելի ուշ, 1915 թ. հունիսի 1-ին։

Ակնհայտ է, որ նույնացվում է «Տեղահանության օրենքը» և հայերի տեղահանությունը սկսելու վերաբերյալ կառավարության որոշումը, ինչը սխալ է։ Կառավարության «Տեղահանության որոշումը» ընդունվել է Նախարարների խորհրդի (*Meclis-i Vükelâ*) մայիսի 30-ին տեղի ունեցած նիստի ընթացքում, այսինքն՝ «Տեղահանության օրենքի» ընդունումից երեք օր անց։ Մանրամասն տես՝ Ռուբեն Մաֆրաստյան, «Օսմանյան կայսրության 1915թ. «Տեղահանության օրենքը», *Պատմա-բանասիրական հանդես*, 2007, № 2, էջ. 72-81։

²⁹ Nevzat Ogün, "Türk milliyetçiliğinin 'kanlı' ekonomi politiği" <http://akunq.net/tr/?p=1411>



Օրենքը չէր ներառում դրույթ հայերի սեփականության մասին: 1915 թ. հունիսի 10-ին ընդունվեց «Հայերի գույքի մասին» հրահանգը և անմիջապես նաև համապատասխան «Ժամանակավոր» օրենքը: Այդ այսպես կոչված, «Լքյալ ունեցվածքի մասին» օրենքը պարունակում էր ցուցումներ «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված «անձերի» (eshas) թողած շարժական և անշարժ կայքի» հետ վարվելու մասին: Մյուս որոշումը՝ 1331 (1915 թ.) սեպտեմբերի 13/26-ի «Լքված գույքի մասին օրենքը»³⁰ (Emval-i Metruke Kanunu), արդեն անմիջականորեն վերաբերում էր հայերին: Այն նպատակաուղղված էր հայերի բռնի տեղահանությանը, որոնք, ինչպես ասված էր, «գրադվում են այնպիսի վտանգավոր գործունեությամբ, ինչպիսին է թշնամու հետ համագործակցությունը, սպանում են անմեղ մարդկանց և ապստամբություն են հրահրում» և նրանց գույքի բռնագրավմանը: Ի տարբերություն նախորդ օրենքի, դրա մեջ ներառվեցին նաև ունեցվածքի մասին հողվածներ: Դրանցում կային դրույթներ՝ ուղղված «լքված սեփականության պաշտպանությանը», «սեփականատերերի վերադառնալուն պես այդ սեփականության անվանական արժեքը նրանց վերադարձնելուն» և այլն: Բացի այդ, տվյալ օրենքով նախատեսվում էր անշարժ գույքի օբյեկտների և հողատարածքների տեսակների, արժեքի ու քանակի գնահատում ու գրանցում: Այս իմաստով, իրավացի է ցեղասպանագիտության հիմնադիրներից պրոֆ. Վ. Տաստյանը, երբ այն բնութագրում է որպես «Էվֆեմիստիկ արտոնագիր՝ թալանելու և ուրախությամբ յուրացնելու զոհաբերվող ազգաբնակչության կուտակած հարստությունը»³¹: Այդ օրենքը մնաց ուժի մեջ մինչև 1918 թ. նոյեմբերի 4-ը:

Դրանից հետո անշարժ գույքը, այդ թվում՝ հողերն ու

³⁰ «Թողնված», «լքված» կամ «տիրագուրկ գույք» (Emval-i Metruke), տերմինը կիրառվել է Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության օրենսդրության մեջ, որում, սակայն, չկա կոնկրետ նշում, թե ով է հրաժարվել այդ սեփականությունից:

³¹ Vahagn N. Dadrian. "The Complicity of the Party, the Government and the Military: Select Parliamentary and Judicial Documents", *Journal of Political and Military Sociology*. Vol. 22, № 1, p. 29.

ունեցվածքը, հանձնվեցին Բալկաններից և Կովկասից գաղթածների (մուհաջիրների) տնօրինությանը: Այլ կերպ ասած, կառավարությունը այդ օրենքն օգտագործեց գաղթական-մահմեդականների հետ կապված խնդիրների կարգավորման համար՝ նրանց տրամադրելով բոնի տեղահանված հայերի տները: Մնացած ամբողջ ունեցվածքը, ներառյալ՝ ձիթենու, թթի, խաղողի, նարնջի այգիները, արհեստանոցները, առևտրի կրպակները, գործարաններն ու խանութները աճուրդի հանվեցին: Աճուրդից ստացված գումարները պետք է իբր պահվեին «ֆինանսական մարմինների կողմից», որպեսզի հետագայում «վերադարձվեին սեփականատերերին»: Օրենքով նաև նախատեսվում էր ստեղծել այսպես կոչված կառավարման հանձնաժողովներ (idare komisyonlar), որոնց նպատակը պետք է լիներ «լքված ունեցվածքի պաշտպանությունը», վերահսկումն ու տնօրինումը³²: Կեսարիայի հասարակական վայրերից մեկում, օրինակ, փակցված էր հունիսի 15, 1915թ. թվագրված հետևյալ հայտարարությունը. «Թողե՛ք ձեր բոլոր իրերը, ձեր կահույքը, անկողնային պարագաները, ձեր կահկարասին: Փակե՛ք ձեր խանութները, թողնելով ամեն ինչ ներսում: Ձեր խանութների դռները կնքվելու են հատուկ դրոշմանիշով: Ձեր վերադարձին դուք կստանաք այն ամենը, ինչ թողել եք: Մի՛ վաճառեք ձեր գույքը կամ որևէ թանկարժեք իրը: Կազմե՛ք ձեզ պատկանող գույքի, այդ թվում, անասունների ցանկը և հանձնե՛ք այն հատուկ նշանակված պաշտոնյայի, այնպես, որ ձեր ամբողջ գույքը հնարավոր լինի վերադարձնել ձեզ հետագայում: Դուք ունեք տասը օր սույն հրամանագիրը կատարելու համար»³³:

Համաձայն վերը նշված կարգադրության, տեղական մակարդակով հատուկ հանձնաժողովներ էին կազմվելու՝ 2 վարչական (mülkiye) և 1 ֆինանսական (maliye) ներկայացուցիչներից,

³² Հիշատակված օրենքների, շրջաբերականների, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ գաղտնի հրամանների տեքստերը տես Nevzat Onaran, *Emvâl - i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi*, İstanbul, Belge Yayınları, 2010.

³³ Mac M.Derdarian, *Vergeen: A Survivor of the Armenian Genocide*, Los Angeles: Atmus, 1996, p.38

որոնք պետք է մանրամասն գույքագրեին հայերի ունեցվածքը (3 օրինակից): Պատճեններից մեկը տրվում էր գույքի տիրոջը, մյուսը պահվում էր տեղական համայնքում (որպես կանոն դա եկեղեցին էր, այդ է նաև պատճառը, որ ի թիվս այլ հանգամանքների, եկեղեցիները առաջին թիրախն էին դառնում՝ հարձակումների, հրկիզումների և այլն – Ա.Հ.), երրորդը՝ ուղարկվում էր Օսմանյան պետական գանձարան: Այդպիսի թղթեր հայերին տրվեցին: Շարժական գույքը՝ անասուններ, կահկարասի և այլն՝ վաճառվում էր աճուրդով և գումարը դրվում հայերի անունով: Այս պաշտոնական գրությունները հետագայում հրատարակել էր Յուսուֆ Հալաջօղլուն, Թուրք պատմագիտական ընկերության նախկին նախագահը, փորձելով ցույց տալ, թե որքան «հոգատար» է եղել օսմանյան կառավարությունը տեղահանվող հայերի նկատմամբ³⁴:

Թե ինչպես էր իրականացվում նմանատիպ աճուրդը նկարագրում է Օսմանյան կայսերական բանկի կառավարիչը քրիտանական համապատասխան մարմիններին ուղարկած իր գաղտնի զեկուցագրում. «Հայերի ունեցվածքի հարկադիր վաճառքը տակնուվրա է արել ամեն ինչ: Միայն էրգրումում 400.000 ֆունտ արժողությամբ ապրանքը վաճառվել է (աճուրդի միջոցով) 20.000 ֆունտով, միննույն ժամանակ ոչնչացվել են հայերին պատկանող ձեռնարկություններ, ջուլիակահաստոցներ և այլ պարագաներ և, հետևաբար, արդյունաբերական կյանքը կանգ է առել»³⁵:

Անգլիական հետախուզության տվյալներով, միայն Մարդինում և Դիարբեքիրում կողոպտվել էր 6.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ ակնեղեն, գորգեր, հնաճ իրեր և 1.500.000 թուրքական ֆունտ արժողությամբ ոսկի: Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Դիարբեքիրի նահանգապետը,

³⁴ Yusuf Halacoglu, *Facts, Relating to the Armenian Displacement (1915)*, TTK Publication, Ankara, 2001.

³⁵ Տ.Մարտիասյան, «Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդիրը և Մեծ Բրիտանիան (1915-1924թթ.)», *Պատմա-քաղաքական հանդես*, 2002, No.1, էջ 52:

Կ. Պոլիս գնացքով տեղափոխել էր ոսկերչական իրերով 48 արկղ և թանկարժեք քարերով լի երկու սնդուկ³⁶:

4 ամիս անց, 1915 թ. սեպտեմբերի 26-ին, հրապարակվում է նոր հրամանագիր, որով կարգավորվում էր աճուրդից դժգոհ անձերի՝ հանձնաժողովների գործողությունները բողոքարկելու և ունեցվածքը՝ ըստ պահանջի ետ ստանալու կարգը, որի համար նախատեսված էր 15 օր:

Օրենքում, իհարկե, նշված չէր, թե ինչպես կարող էին Դեր-Ջոր թշվածները, սպանվածները հետևեն այդ ընթացակարգին: Սարգիս Չերկեզյանը իր «Աշխարհը բոլորիս է բավարար» գրքում հուշագրություն է գետեղել, որի համաձայն Քարամանում իր ունեցվածքին տեր կանգնել ցանկացած իր հորը՝ Ղազարոսին փաստաբանը երկու ճամփա է ցույց տալիս՝ կամ լռել, կամ կախաղան բարձրանալ³⁷:

Իրականում թալանը տեղի էր ունենում տեղն ու տեղը. գորգերը, արծաթյա և ոսկե իրերը, հագուստը՝ ոստիկաններն ու ժանդարմներն էին վերցնում, մանր կահկարասին՝ տեղի խուժանը: Որոշ դեպքերում աճուրդ իսկապես իրականացվում էր, բայց գոյացած գումարը իշխանավորներն իրենք էին գրպանում, այլ ոչ թե դնում հայերի հաշվին: Զավեշտական պատկեր է ներկայացնում արաբ Ֆայեզ ալ Ղուսեյնը. «5 լիրա արժեք ունեցող կոստյումը վաճառվում էր 2 մեջիդիյեյով, թանկարժեք սպասքը մանրադրամ արժեք, իսկ հին արժեքավոր դաշնամուրը որևէ մեկը չէր գնում: Մանրանկարներով զիրքը տրվեց պանրավաճառին՝ շուկայում վաճառելիս պանիր փաթաթելու համար»³⁸: Անշարժ գույքը օգտագործվելու էր պետության հայեցողությամբ՝ երբեմն տրվում էր բանակին, որպես կայանատեղի, դառնում էր

³⁶ Յու. Բարսեղով, *Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը* (ոնպարացիայի և փոխհատուցման խնդիրներ), Երևան, 1999, էջ 8:

³⁷ Sarkiz Çerkezian, *Dünya Hepimize Yeter*, Gedik: Belge Yayınları, İstanbul, 2003, s. 59.

³⁸ Ֆայեզ ալ Ղուսեյն, *Զարդերը Հայաստանի մեջ* (ակնատեսի վկայություններ), Կահիրե, 1960, էջ 25-30:

հոսպիտալ, պահեստ, Բալկաններից տեղահանվածներին տեղավորում էին հայերի տներում:

1915 թ. սեպտեմբերի 27-ի նոր՝ «Այլ վայրերում վերաբնակեցված (տեղահանված – Ա. Հ.) անձանց լքված տների, պարտքերի և վարկերի մասին» երկար անվանումով ժամանակավոր օրենքը չեղյալ հայտարարեց ունեցվածքի հետ կապված բոլոր գործարքները, այդ թվում՝ ունեցվածքի զիջումը կամ փոխանցումը այլ մարդկանց (feragat): Դա պետք է կանխեր ապագա զոհերի համար կեղծ գործարքների հնարավորությունը, այսինքն՝ պետությունը փաստորեն քաղաքացիներից խլում էր իրենց սեփական ունեցվածքը տնօրինելու իրավունքը (ինչը հակասում էր օսմանյան օրենքներին)³⁹:

Հայկական համայնքային բարեգործական հիմնադրամների և ընկերությունների սեփականությունը փոխանցվել էր Բարեգործական ֆոնդերի վարչության (այսպես կոչված վակուֆային գերատեսչության) հաշվեկշռին, իսկ դպրոցների և վանքերի նյութական արժեքների օգտագործման իրավունքները հանձնվել էին կրթության նախարարությանը:

1915 թ. նոյեմբերի 8-ին ընդունվեց նոր որոշում՝ բոլոր տվյալները հատուկ գրանցման գրքերում (defter) գրառելու անհրաժեշտության մասին: Տվյալ գրքերում ըստ ընդհանուր ձևանմուշի գրանցվում էին լքված ունեցվածքի տեսակները, ներառյալ՝ փողը, շարժական և անշարժ գույքը, պարտքերն ու վարկերը:

Պատմության մեջ, թերևս, աննախադեպ այդ «օրենսդրական ակտերը» թույլ էին տալիս բռնագրավելու տեղահանված

³⁹ «Լքված գույքի մասին» օրենքի ընդունման ժամանակ Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր, սենատոր Ահմեդ Ռեզան, որը «Իթթիհատ» կուսակցության հիմնադիրներից մեկն էր, անգամ վրդովվել է. «Օրենքում տրված սահմանումը, որն է՝ «լքված գույք» ինքնին հակաօրինական է: Որովհետև հայերը, որոնք այդ ունեցվածքի սեփականատերերն էին, իրենց կամքով չեն թողել այն: Եթե ես համաձայն չեմ իմ սեփականությունը վաճառելուն, ոչ որ չի կարող այն վաճառել բռնությամբ: Հիմնական օրենքի (Սահմանադրության) 21-րդ հոդվածն արգելում է դա: Եթե այս երկրում Հիմնական օրենք և Սահմանադրություն կա, ապա դա անհնար է», տես Bayur, Yusuf Hikmet, *Türk İnkilâbı Tarihi*, Cilt III, Ankara, Türk Tarih Kurumu, 1983, s.48.

հայերի «լքյալ» ունեցվածքը, անգամ՝ բանկային հաշիվները: Բացի բանկային հաշիվների բռնագրավումից, Թուրքիայի կառավարությունը փորձ է արել տիրանալ նաև հայերին պատկանող այլ արժեթղթերին, մասնավորապես, ապահովագրական վկայականներով նախատեսված գումարներին: 1916 թ. Թալեաթ փաշան ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուիի հետ գրույցում հարցնում էր, կարող է արդյոք վերջինս իրեն ներկայացնել Ամերիկյան Ապահովագրական ընկերություններում ընդգրկված հայերի ցուցակը: «Նրանք բոլորը մահացել են, չթողնելով ժառանգներ»: «Ուրեմն, — այդ ապահովագրերի գումարները օրինաբար պետք է անցնեն օսմանյան պետությանը», — եզրակացրել էր նա⁴⁰: Մինևոյն ժամանակ, օսմանյան կառավարությունը հայտարարություններով դիմել էր այլ ընկերություններին, հայերի անունների վերաբերյալ տեղեկություններ ստանալու խնդրանքով: Մանրամասն տեղեկություններ էին հավաքվել՝ ինչպիսի սեփականություն ունեին հայերը՝ դեպոզիտ, ապահովագրեր, արժեթղթեր, տներ, հողային կալվածքներ, գործարաններ, խանութներ, ընկերություններ⁴¹:

Այդ բոլոր ժամանակավոր օրենքները, որոշումները, գաղտնի շրջաբերականներն ու կարգադրությունները հետապնդում էին երկու հիմնական նպատակ.

1. հայերի ունեցվածքի բռնագրավում մինչև վերջին մանրուքը,
2. հանուն պետության տնտեսական շահերի ձեռնարկված բռնագրավման ու սեփականագրվման ընթացքի լիովին վերահսկման ապահովում և պետական պաշտոնյաների ու տեղական խաժամուժի կաշառակերության ու գողության կանխում գոնե ինչ-որ չափով:

Զուր չէր, որ գերմանացի գիտնական իրավաբաններն ու Ստամբուլի գործարար շրջանների ներկայացուցիչներն այդ

⁴⁰ Henry Morgenthau, *Memoires*, Paris 1919, p.292.

⁴¹ Kévork Baghdjian, *La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens... dits « abandonnés »*, Montreal, 1987, pp. 270-280.

օրենքներն անվանեցին «Թալանի օրինականացում» (*Legalisierung Des Raubes*)⁴² :

Այն, որ ահռելի ծախսեր պահանջող պատերազմը մասամբ մղվում էր ցեղասպանության դատապարտված հայ ժողովրդի ունեցվածքի հափշտակման և դրա վաճառքից ստացված միջոցներով, քաջ հայտնի էր Օսմանյան Թուրքիայի դաշնակից կայսերական Գերմանիային: Ինչպես նշում է այդ խնդիրն ուսումնասիրած հայ պատմաբան Տիգրան Սարուխանյանը, դրա մասին տեղակ էին նաև Լոնդոնում: Դա ապացուցվում է, գրում է Տ. Սարուխանյանը, ղեկավարների 24-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ու. Լանգլիի՝ արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյին և ֆինանսների նախարարին ներկայացրած «Թուրքիայի ֆինանսական կացությունը» վերնագիրը կրող զեկուցագրից: Փաստաթուղթը ստացվել էր Օսմանյան կայսերական բանկի Կ. Պոլսի վերոհիշյալ կառավարչից, իսկ տեղեկությունը Թուրքիայից հնարավոր էր դարձել դուրս բերել բանկի վտարված իտալացի աշխատակիցներից մեկի միջոցով: Փաստաթղթում խնդրանք է արտահայտվում՝ չփշտակել այդ ամենին մասնակից դարձած որևէ անձի անուն:

Այն ասում է. «Օսմանյան կառավարությունը հուլիս ամսին թողարկեց 5.000.000 թուրքական ֆունտ արժողությամբ գանձապետական պարտամուրհակներ: Այս պարտամուրհակներն ապահովագրված են ոսկով դեպոզիտագրված (պահ տրված)՝ Բեռլինում և Վիեննայում: Միևնույն ժամանակ, գերմանական կառավարությունը Բեռլինում օսմանյան կառավարության տրամադրության տակ է դրել 1.500.000 թուրքական ֆունտ, որպեսզի այն վճարի Գերմանիայի զինագործական ձեռնարկություններին՝ կատարված պատվերների համար»: Ինչ վերաբերում է օսմանյան պաշտոնական պարտքին, ապա բանկը ստացել էր հետևյալ տեղեկությունը, որը ցույց է տալիս, որ գերմանացիները շահագործում են Թուրքիան բացարձակապես իրենց սեփական

⁴² Uğur Ümit Üngör and Mehmet Polatel, *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property*, London/New York: Continuum, 2011, pp. 41-59.

շահերից ելնելով: Թուրքիայի 750.000 ֆունտ պարտքը Դոյչե բանկին (Deutsche Bank) մարվեց 450.000 ֆունտի չափով, իսկ մնացած 300.000-ը պետք է վճարվեր «այն բանից հետո, երբ դա հնարավոր լիներ հավաքել նահանգներից»⁴³:

Եթե Բեռլինում պահ տրված ոսկե հաշվեհամարի ծագման աղբյուրների մասին քաջատեղյակ կայսերական Գերմանիայի կառավարությունը, ելնելով իր քաղաքական և տնտեսական շահերից, պետք է լռությամբ հետևեր դաշնակից Թուրքիայի վայրագություններին, ապա նույնը չէր կարելի ասել գերմանական բազմաթիվ մասնավոր ձեռնարկությունների մասին, որոնք գործում էին Թուրքիայում, գլխավորապես՝ Արևմտյան Հայաստանում:

Այսպես, Կիլիկիայում գործող Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը խիստ բողոք ներկայացրեց Ադանայի գերմանական հյուպատոսությանը՝ թուրքական կառավարության կողմից իր պարտատեր հայերի բռնագաղթի և, մասնավորապես, նրանց ունեցվածքի բռնագրավման և վաճառքի վերաբերյալ:

Ձեռնարկությունը Թուրքիայում իր գործունեությունը ծավալելուց հետո, վերջին մի քանի տարում, կարողացել էր բամբակի արտադրությունը 40.000 բեռնափակից հասցնել տարեկան 100.000 հակի: Այն լայնորեն օգտագործում էր հայ գյուղացիների վարկավորման մեթոդը և չէր կարող չընդվզել այն միջոցների դեմ, որի հանգամանքներում պետք է տեղի ունենար պարտատեր հայերի ունեցվածքի օտարումն ու յուրացումը: Կից փաստաթղթում ֆինանսական հաշվետվության մեջ բերվում է ֆինանսական կորուստների մանրամասն հանրագումարը 1.628.626 թուրքական լիրա, որ կրել էր ձեռնարկությունը հայերի բռնագաղթի կազմակերպման և ունեցվածքի առգրավման հետևանքով⁴⁴:

Մեկ այլ՝ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հոհենլոե-Լանգենբուրգին Գերմանական արևելյան բանկի կողմից հղված նամակից պարզ է դառնում, որ բանկը ահռելի կորուստներ է կրում

⁴³ Տ. Սարուխանյան, նշվ. աշխ. էջ 53:

⁴⁴ В.А. Микаелян, *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913- 1919)* - Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, Ереван, 1995, с. 199-203.

իր կողմից վարկավորված և այնուհետև բռնագաղթված և ֆիզիկապես բնաջնջված հայերի մահվան արդյունքում⁴⁵:

Գերմանիայի ռայխսկանցլեր Բեռտան-Հոլվեգին ուղղված գեկուցագրի մեջ Կ. Պոլսում հավատարմագրված գերմանական դեսպան Մետերնիխը, ի մի բերելով Թուրքիայի ողջ տարածքից ստացված հաղորդագրությունները, Բեռլին ուղարկված իր գեկուցագրերից մեկում նշում է, որ հայ պարտատերերի անհետացման կամ սնանկացման հետևանքով, գերմանական ընկերությունների կրած կորուստները և վնասը ահռելի են: Դրանցից՝ Գերմանական բանկը կրել էր՝ 1.500.000, Մերձավոր-արևելյան բանկը՝ 2.000.000, Գերմանա-լևանտական բամբակի ընկերությունը՝ 500.000, Անատոլիական առևտրային ընկերությունը՝ 20.000 մարկ վնաս⁴⁶:

Գերմանական ձեռնարկությունների և ֆինանսական կազմակերպությունների կրած նյութական ողջ վնասը 1915թ. և 1916թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով գնահատվում էր շուրջ 5.000.000 գերմանական մարկ⁴⁷:

«Լքված գույքի» մասին օրենքում մինչև 1918 թ. Շնդունվել է միայն մեկ ուղղում, համապատասխան որի՝ հայերի բռնի տեղահանումն իրականացվում էր իրենց իսկ հաշվին:

Թուրքիայում այսօր էլ գործածվում է «*Gâvur malı*» (զավուրի ունեցվածք), այսինքն՝ ունեցվածք, որը կարելի է հեշտությամբ վերցնել, յուրացնել) արտահայտությունը, որն առաջացել է այդ ձեռնարկումների ազդեցությամբ:

Այսպիսով՝ հայերի ունեցվածքի վերաբաշխումը համապատասխանում էր օսմանյան հասարակության լայն շրջանների տնտեսական շահերին և հնարավորություն էր տալիս «բաժին ստանալու» այդ յուրօրինակ բուրգի տարբեր մակարդակներում.ա/ պետության տնտեսական շահեր,բ / բարձրագույն վերնախավի տնտեսական շահեր, գ/ տեղի վերնախավի

⁴⁵ Նշվ. աշխ., էջ 220-221:

⁴⁶ Նշվ. աշխ., էջ 325:

⁴⁷ Նույն տեղում: Անհրաժեշտ է նշել, որ մեկ թուրքական ոսկե ֆունտը հավասարագոր էր գրեթե 18 գերմանական մարկի, տես Նշվ. աշխ., էջ 384:

տնտեսական շահեր, դ/նյութական շարժառիթավորում, ուստի և քաղաքացիական բնակչության աջակցություն:

Պետք է նշել, որ հայերի, ինչպես նաև հույների սեփականությանը տիրանալու ծրագրերը կազմվել էին շատ ավելի վաղ: 1908-1909 թթ. օսմանյան ֆինանսների նախարարության տվյալներով Թուրքիայի պարտքը գերազանցում էր բյուջեի 1/3-ը: Մինչդեռ Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմանների, հետևյալ աննախադեպ աճն արձանագրեց. 1913-14 թթ.՝ 35 մլն օսմ. ոսկի, 1915-16 թթ.՝ 38 մլն, 1917-18 թթ.՝ 85 մլն: 1918 թ. կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին 19 մլն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Պարզ է, որ պետական գանձարանը լցվել էր հայերի ինքների և կալվածքների հաշվին⁴⁸:

Բալկանյան պատերազմը վերջնականապես քամել էր բյուջեն, Թուրքիան գրկվեց իր հարկատու շատ տարածքներից: Դրան հետևեց եռյակի հեղաշրջումը 1913 թ., որոնք ամեն ինչ առան իրենց ձեռքը: Նրանք սկսեցին իրականացնել Ջիյա Գյոքալփի նախանշած «*milli iktisad*»՝ տնտեսության թուրքացման ծրագիրը:

Ծխախոտի, շաքարի մենաշնորհի վերահսկումը նրանց աստղաբաշխական եկամուտներ ապահովեց: Հատուկ հանձնաժողովներ ստեղծվեցին, որոնք թիրախային խմբերի փորձագիտական ուսումնասիրություններ անցկացրին՝ «ազգայնացումը» արագ իրագործելու համար: Այդ ծրագրի համակարգողն էր Շյուքրյու Քալան: Հայտնի կեղծարար Էսադ Ուրասը զբաղվում էր հայերով, Ջելալ Բայարը՝ հույներով, Ջեքերյա Մերտելը՝ ալեվիներով⁴⁹: Այդ ծրագրի հեռահար նպատակն էր տնտեսական լծակները վերցնել ալյազգիների ձեռքից: Պատերազմը «նվեր էր» նման ծրագիրն իրականացնելու համար:

Այդ նպատակին էր ուղղված, մասնավորապես, Թալեաթ փաշայի 1916 թ. հունվարի 6-ի հրամանագիրը, համաձայն որի,

⁴⁸ Uğur Üngör, *A Reign of Terror; CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923*, Amsterdam, 2005, p. 61, pdf.

⁴⁹ Կազմակերպությունը կոչվում էր «*Milli Türk Talebe Birliği*», տե՛ս Uğur Üngör, *A Reign of Terror...*, pp. 20, 61-63.

հայերի ընկերություններից պետք է ստեղծել մահմեդական կամ-պանիաներ, վաուչերներ (բաժնետոմսեր) թողարկել և բաժանել «ազնիվ մուսուլմաններին», որպեսզի կապիտալը չընկնի օտար-ների ձեռքը:

Օրինակ, Դիարբեքիրի մետաքսի գործարանի տեր Թրփնջ-յանը տանջամահ եղավ բանտում, տեղի վելի Նեջդերը տիրացավ նրա շքեղ տանը, իսկ գործարանը անմիջապես անցավ մուֆթիի որդուն՝ Մուֆթիզադե Հուսեյնին⁵⁰:

Ի դեպ, երբ Դիարբեքիրում հայերի տեղահանությունը իրա-կանացրած դոկտոր Մեհմեդ Ռեշադին հարցնում են, թե արդյոք նրա բժիշկ լինելու հանգամանքը չի խանգարել նրան իրակա-նացնել ոճիրները, նա շատ հանգիստ պատասխանել է «ես թուրք եմ, ես պետք է ոչնչացնեմ ոչ թուրքերին, չսպասելով, որ նրանք ինձ ոչնչացնեն և հետո, մի թե բժշկի գործ չէ միկրոբներից ազատվելը»⁵¹:

Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշան իր «Սև տետ-րում» (փաշայի օրագիրը նրա այրին փոխանցել էր թուրք պատ-մաբան Մուրադ Բարդակչիին, որն էլ այն հրատարակեց 2008 թ.)⁵² նշում է, որ միայն 1915 թ. հայերից խլված ակտիվներից մահմեդական նորաբնակներին հատկացվել է 20545 շենք, 267536 ակր հողատարածություն, 76942 ակր խաղողի, 703941 ակր ձիթենու և 4573 ակր թթի այգի: Եթե հիմնվենք այն փաստի վրա, որ հայ բնակչության թիվը նվազել էր 1,5 միլիոնով, իսկ ընտանիքում եղել է միջինը 10 մարդ, ապա հայերի կորցրած տների թիվը կկազմի նվազագույնը 150000: Լիովին ամայացել էին 2900 հայկական բնակավայրեր, որոնցում կային 2300 եկեղեցի ու վանք և 700 դպրոց՝ ենթակա Ստամբուլի Հայոց (Հայ Առաքելական Եկեղեցու) պատրիարքության տնօրինությանը: Եթե այդ թվին ավելացնենք հայկական կաթոլիկ և բողոքական եկեղեցիներն ու դպրոցները, ապա դրանց թիվը կգերազանցի

⁵⁰ Uğur Üngör, *A reign of Terror: CUP Rule in Diyarbekir Province, 1913-1923*, Amsterdam 2005, p. 62.

⁵¹ Mithat Şükrü Bleda, *İmparatorluğun Çöküşü*, İstanbul, Remzi, 1979, s. 59.

⁵² Murat Bardakçı, *Talât Paşa'nın Evrak - 1 Metrûkesi*, İstanbul: Everest, 2008, p. 95.

4000-ը⁵³: Այդ եկեղեցիների և դպրոցների մեծ մասն ուներ իր բարեգործական հիմնադրամը՝ պահպանման և սպասարկման համար շահույթ ստանալու նպատակով: Բոլոր այդ ակտիվները, բացառությամբ Ստամբուլի երկու հիվանդանոցի և մի քանի հայկական եկեղեցիների ու դպրոցների, 1915 թ. հետո անհետացան:

Վերջին հաշվով հայերի ունեցվածքը ծառայեց մի քանի նպատակի. օգտագործվեց փախստական-մահմեդականների պահանջմունքները բավարարելու, մահմեդական բուրժուական դաս ստեղծելու, տարբեր ռազմական կարիքներ բավարարելու, հայերի բռնի տեղահանության հետ կապված կառավարական ծախսերը փակելու, կառավարության ծախսերն ու պարտքերը ծածկելու, և, վերջապես, քեմալական շարժման ժամանակ աշխարհագր կազմավորելու համար⁵⁴:

⁵³ Dicran Kouyumjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", in *Anatomy of Genocide: State - Sponsored Mass - Killings in the Twentieth Century*, Alexandre Kimenyi and Otis L. Scott, eds. (Lewiston, N.Y.: Edwin Mellen Press, 2001), pp. 307 - 319.

⁵⁴ Թաներ Արչամ. «Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե՛ այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են», <http://akunq.net/am/7p=26815>

**ՀԱՅՈՑ «ԼՔՅԱԼ ԳՈՒՅՔԻ» ԽՆԴԻՐԸ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ**

1918 թ. հոկտեմբերի 30 Մուղրոսի զինադադարը նշանավորեց օսմանյան Թուրքիայի լիակատար պարտությունը Առաջին աշխարհամարտում:

«Լքված գույքի» հարցը դրվել է Օսմանյան կայսրության հետպատերազմյան խորհրդարանի, ինչպես նաև Օսմանյան ռազմական տրիբունալների օրակարգում դեռ մինչև Թուրքիայի Հանրապետության հռչակումը⁵⁵: Այսպիսով՝ պատերազմի ավարտից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը տևած փուլը բացառիկ կարևոր է, որպեսզի հասկանանք, թե ինչպես տարբեր մրցակցող ուժեր (կենտրոնը Ստամբուլում՝ սուլթանի գլխավորությամբ և կենտրոնն Անկարայում՝ Արթայուրքի գլխավորությամբ) վերաբերվեցին հայերի «լքված գույքի» ճակատագրին:

Ուսումնասիրելով 1918 թ. օսմանյան խորհրդարանում տեղի ունեցած վիճաբանությունները՝ թուրք պատմաբան Այհան Արթարը շեշտում է, որ այն ժամանակ պատգամավորներից ոչ մեկը կասկած անգամ չի հայտնել հայերի կազմակերպված զանգվածային կոտորածի հարցում՝ այն անվանելով «մարդկության և խղճի դեմ ուղղված հանցագործություն», ինչպես նաև նրանց ունեցվածքի բռնագրավման անօրինականության վերաբերյալ⁵⁶:

Սուլթան Մեհմեդ VI-ի կառավարման նորանշանակ կաբինետի Ներքին գործերի նախարար Ահմեդ Իզզեթ փաշայի նույնմեթերի 1-ի հրամանագրով նախատեսվում էր հայերից բռնագրավված հողերի և գույքի վերադարձը իրենց օրինական տերերին՝ դրանց վերադարձի պահանջ ներկայացնելու դեպքում: Այդ հրամանագիրը կարելի է որպես ճակատագրի հեգնանք

⁵⁵ Taner Akçam, Vahakn N. Dadrian, *"Tehcir ve Taktik": Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması (1919 - 1922)*, İstanbul : Bilgi Univesitesi Yayinlari 2008.

⁵⁶ Ayhan Aktar, "Son Osmanlı Meclisi ve Ermeni Meselesi: kasım - aralık 1918" *Toplum ve Bilim*, 91, Kış 2001/2002 s.142-165.

գնահատել, քանզի այնտեղից, ուր «ուղարկվել էին» հայերը, վերադարձ չկար:

1920 թ. հունվարի 8-ի որոշմամբ Ստամբուլում օսմանյան խորհրդարանը (պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո) չեղյալ հայտարարեց բնակության այլ վայրեր արտաքսված մարդկանց ունեցվածքի բռնագրավման մասին երիտթուրքերի կառավարության ընդունած օրենքը: Ընդ որում, ոչ միայն չեղյալ էին հայտարարվում բռնագրավման գործողությունները, այլև հայտարարվում էր, որ մշակվում են օրինական տերերին բռնագրավված ունեցվածքի վերադարձման համար անհրաժեշտ միջոցներ:

Սակայն այն հեռանկարը, որ եղեռնից մահապուրծ եղած թեկուզև փոքրաթիվ հայությունը կարող է հնարավորություն ստանալ վերադարձնել իր ունեցվածքը, հանգիստ չէր տալիս ազգայնական ուժերին:

Հայտնի է, որ պատերազմում պարտվելու պարագայում, երիտթուրքերը մշակած ունեին այսպես կոչված պլան «Բ», այն է՝ դիրքավորվել երկրի ասիական մասում և կոչ անել «ազգային ազատագրական պայքարի»: Այն պետք է իրականացնեին «երկրորդ էշելոնի» իթթիհադականները՝ «Իրավունքների պաշտպանության կոմիտեների» միջոցով: Շարժման ղեկավար դարձավ Քեմալ Աթաթյուրքը⁵⁷:

Նորաստեղծ «շարժումը» մարդկային և նյութական ռեսուրսի խիստ կարիք ուներ: Դեռևս Սվասի համաժողովի ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել որոշ քուրդ առաջնորդների հետ, ի պատասխան նրանց օժանդակության, հետագայում թուրք-քրդական դաշնային պետություն ստեղծել: Շարժումը համարվեց նաև երիտթուրքերի դեմ սկսված դատավարություններից խուսափած, փախուստի դիմած հանցագործներով:

Անկարայում մեջլիսն սկսեց գործել ապրիլի 23-ին, և նոր-ընտիր մեջլիսի գործադիր կոմիտեն իր առաջին որոշմամբ

⁵⁷ Անուշ Հովհաննիսյան, «Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո)», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. IV, Երևան, 2006, էջ 124-129:

(1920 թ.) արգելեց հայերի ազատ տեղաշարժը. նման որոշում ընդունելու կարևորագույն շարժառիթը հրաշքով փրկված հայերին իրենց տները վերադառնալու և կորցրած սեփականությունը հետ պահանջելու հնարավորությունից զրկելն էր: Անկարայում հրավիրված մեջլիսը 1920 թ. ապրիլին նամակ է հղում Լենինին, իսկ ապրիլի 23-ի թիվ 336, հունիսի 14 թիվ 769 որոշումներով արձանագրում է հայերի վերադարձին խոչընդոտելու անհրաժեշտությունը: Սևրի պայմանագրի (օգոստոսի 10) ստորագրումից հետո, որտեղ 144 հատվածով նախատեսվում էր անշարժ գույքի վերադարձը տերերին, բիզնեսի վերականգնումը, բռնագանձված ունեցվածքի վերադարձը, «շարժան» կողմնակիցների շարքերը համալրում են նրանք, ովքեր վախենում էին կորցնել այն ամենը, ինչը դիզել էին հայերին կողոպտելով⁵⁸:

1921 թ. օգոստոսի 7-ին Մ. Քեմալը, որպես «ազգային» բանակի գլխավոր հրամանատար, իր մոտ հրավիրված գաղտնի ժողովի 10 կետից բաղկացած որոշմամբ հրամայում է միջոցներ ձեռնարկել *«թշնամու դեմ պայքարը ֆինանսապես ապահովելու նպատակով՝ երկիրը թողած անձերի գանձարան անցած գույքը բռնագրավել՝ բանակի կարիքների համար»*⁵⁹:

Այդ գաղտնի հրամանը ուժի մեջ մտավ 1922 թ. Անկարայի պայմանագիրը ստորագրելուց հետո, երբ ֆրանսիացիները լքեցին Կիլիկիան և «ազատագրված» տարածքում (իսկ իրականում կլիկիահայության շարդից հետո) կոնֆիսկացվեց հայերի դեռևս մնացած ունեցվածքը⁶⁰:

Արդեն 1922 թ. սեպտեմբերի 14-ին քեմալականները հայտարարեցին, թե չեն ճանաչում սուլթանական կառավարության կողմից ընդունված՝ «լքված գույքի» մասին ժամանակավոր օրենքը անվավեր համարելու ակտը, իսկ 1923 թ. ապրիլի 15-ին Լոզանի խաղաղության պայմանագրի կնքումից անմիջապես առաջ ուղղումներով վերականգնվեց նշված իրթիհաղական

⁵⁸ Sait Çetinoğlu, "Ankaranın ilk kararı: Ermenilerin ülkelerine/ evlerine dönmeleri yasaktır!", www.mavidefter.org/index.php?

⁵⁹ Sait Çetinoğlu, "Ankaranın ilk kararı..."

⁶⁰ İbrahim Halil Er, "Ermenilerin mallarına ne oldu", <http://agdistanbul.wordpress.com/2007/04/25>

օրենքը, ըստ որի՝ հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր՝ անկախ այն բանից, թե երբ, ինչու և ինչ հանգամանքներում են նրանք լքել երկիրը⁶¹ :

Հիմնվելով այդ օրենքի դրույթների վրա՝ թուրքական կառավարությունը հավակնություն ներկայացրեց թուրքական բանկերում և արտասահմանյան բանկերի բաժանմունքներում հայերի ավանդների, ինչպես նաև այդ մասնաճյուղերի կողմից Եվրոպա փոխանցված ավանդների նկատմամբ, և այդպիսով խոչընդոտեց իրենց օրինական տերերին տվյալ գումարների վերադարձմանը⁶²:

Այնուամենայնիվ, Լոզանի պայմանագիրը ամրագրում էր Թուրքիայի քաղաքացի հանդիսացող հայկական փոքրամասնության իրավունքները: Ուստի, 1923 թ. սեպտեմբերին փոփոխություն մտցվեց «Mahsub-i Umumi kanunu»-ի 2-րդ կետում, որի համաձայն Կիլիկիայի և Արևելյան վիլայետների հայերին, որոնք «արտագաղթել» էին, արգելվեց վերադառնալ Թուրքիա:

1926 թ. փետրվարի 2-ին օրենք ընդունվեց առ այն, որ վերադարձի ենթակա չէ 1923թ. հուլիսի 24-ին կնքված Լոզանի պայմանագրի ուժի մեջ մտնելուց առաջ (1924 թ. օգոստոսի 19-ը) բռնագրավված գույքը:

1927 թ. մայիսին հրապարակվեց կառավարության օրենքը, համաձայն որի Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում բոլոր նրանք, ովքեր չեն եղել երկրի տարածքում «ազատագրական պայքարի» տարիներին, ինչպես նաև արտասահմանում եղածները՝ 1923-ից (Լոզան) մինչև սույն օրենքի (մայիս 1927 թ.) ընդունումը: Այս որոշումները գրոյի հասցրեցին հայերի պահանջները սեփականության նկատմամբ: Հայ փախստականների Կենտրոնական կոմիտեի միջոցով Ազգերի Լիգային ուղղված բողոքները արդյունքի չէին բերում, դրանք մերժվում էին Թուրքիայի կողմից: Հայաստանի խորհրդայնացումից հետո դաշնա-

⁶¹ Անուշ Ռ. Չովհաննիսյան, «Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը», *ՎԷՄ համահայկական հանդես*, Երևան, 2011, հունվար - մարտ թիվ 1, էջ 168 - 182:

⁶² Юрий Барсегов, «Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину» <http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html>

կիցների շահերը այլևս հայերի հետ չէին: Հայկական գույքի պահանջը լռեցվեց, ինչպես և Հայկական հարցը⁶³:

1923 թ. ապրիլին (քեմալական շրջան) բռնի տարահանված անձանց ոչ միայն շարժական, այլև անշարժ գույքի վերջնական բռնագրավման նպատակով Թուրքիայի Մեծ ազգային ժողովը օրենքի սկզբնական տեքստում որոշակի փոփոխություններ մտցրեց՝ այն վերանվանելով «Լուծարման մասին օրենք» (Tasfiye kanunu): Այդ անվանումով այն գործում էր մինչև 1988 թ. նոյեմբերը⁶⁴:

Լրագրող Նևզաթ Օնարանը «Լքյալ գույքի դեպքը. Հայկական և հունական ապրանքների թուրքացումը օսմանյան ու հանրապետական շրջաններում» վերնագրով գրքում վերլուծում է այն տնտեսական քաղաքականությունը, որը տարվել է Անատոլիայում 1915 թ. և հետագա տարիներին: Վեց մասից բաղկացած այդ ուսումնասիրության գլխավոր նյութն են կազմում օրենքներն ու կարգադրությունները, դրանց կապակցությամբ մեջլիսում կատարված քննարկումները: Թուրք լրագրող Նևզաթ Օգյունի հետ հարցազրույցում նա նկատում է, որ «թուրքական բուրժուազիայի հարստության կուտակման մեջ նշանակալի տեղ է գրավում «ուրիշի» տնտեսական աղբյուրը: Բռնագրավված «ուրիշի» ապրանքը զավթվում է, բաժանվում և վաճառվում... 1915 թ. մայիսի 27-ի Տեղահանության օրենքով իրենց տնից, տեղից և հողից արքսրված ու «կյանքի անվտանգության» խնդիր ունեցած հայերը 1915 թ. սեպտեմբերի 26-ին հրապարակված «Լուծարման օրենքով» (Tasfiye Kanunu) էլ իրենց տների, այգիների, պարտեզների, արտերի և գործարանների կողոպուտով հանդիպեցին «գույքի անվտանգության» խնդրին, որն արվում էր հանուն զանձարանի...»⁶⁵:

⁶³ Նույն տեղում:

⁶⁴ Nevzat Onaran, *Emvâl - i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türkleştirilmesi*, İstanbul, Belge Yayınları, 2010, s.30-31.

⁶⁵ Թուրք ազգայնականության «ալյունոտ» տնտեսական քաղաքականությունը <http://akunq.net/am/?p=3874>

Հանրապետական ժամանակաշրջանում գործողության մեջ է դրվում Լուծարման հանձնաժողովը (Tasfiye Komisyonu), որը պարտավորվում է կատարել հայերի և հույների գույքերը լուծարելու գործը։ Սույն օրենքը ուժի մեջ է մտնում մինչև 1988 թ. նոյեմբեր, այսինքն՝ 73 տարի։ Այդպիսով թեև այդ ընթացքում սահմանադրությունը փոխվում է 5 անգամ, սակայն Լուծարման մասին այդ օրենքը միշտ մնում է ուժի մեջ։ Հենց միայն դա ցույց է տալիս, թե որքան ամուր կարող է լինել *կողոպտիչների միասնական կամքը*։

Ըստ օրենքի՝ օսմանյան ու հանրապետական ժամանակաշրջաններում գործած լուծարման հանձնաժողովների պահած «ընթացիկ և հիմնական» գրանցամատյաններից և ոչ մեկը չի հրապարակվել։ Այդ գրանցամատյանների վրայից պաշտոնական քողի վերացմամբ կբացահայտվի, թե ինչ արժողությամբ և քանի «ուրիշի» գույք է լուծարվել կամ փոխանցվել։ Օսմանյան պետությունում եղել են 33 հանձնաժողովներ, սակայն անհայտ է, թե քանիսն են ստեղծվել հանրապետական շրջանում։ Եթե 33 հանձնաժողովներից յուրաքանչյուրն ունեցած լինի մեկական «ընթացիկ և հիմնական» գրանցամատյան, ապա պետք է որ եղած լինի 66 գրանցամատյան, բայց չկա, իբրև թե չկա...

Թուրքական «ազատագրական» պատերազմի ժամանակ 1921 թ. օգոստոսի 5-ին Ազգային մեծ ժողովի նախագահ և գլխավոր հրամանատար Մուստաֆա Քեմալի հրամանով հավաքված պատերազմական հարկի փոխհատուցումն ապահովվում է 1924 թ. ապրիլի 3-ին հրապարակված 459 թվակիր Հաշվարկի ընդհանուր օրենքով։

Սակայն այդ վճարման ժամանակ բացառություն են համարվում *քաղաքացի հույներն ու հայերը*։ Այդ բացառությունն ապահոված 2-րդ հոդվածի վերաբերյալ մեջլիսի գաղտնի նիստում պատգամավորներին տեղեկություններ հաղորդած Հանձնախմբի նախագահ Հասան Ֆեհմին հետևյալ կերպ է հիմնավորում նման հոդվածի պատրաստումը. «*Հոդվածի նպատակն է չներառել հույների և հայերի՝ Ազգային և ռազմական հարկերի արձանագրությունները... Մի միջոց է մտահոգվել, որպեսզի հույներն ու հայերը չօգտվեն Ազգային և ռազմական հարկերի*

արձանագրությունների վճարումներից: Մակայն չէինք կարող բացահայտ ասել, որ դա ուղղված է հայերին և հույներին: Առաջարկվեցին տարբեր ձևեր և ձևակերպումներ... Ի վերջո, գտանք այս ձևը, որն ամենաքիչը կարող էր արգելվել կամ չարգելվել...»⁶⁶: Ահա այդքան պարզ բացատրություն: Ու քանի որ քաղաքացիների փոխհատուցումները վճարվելու էին պետական զանձարանից, որը մեծապես համալրվել էր փոքրամասնություններից բռնագրավված «լքյալ գույքի» հաշվին, ստացվում էր, որ սպանված, երկրից վտարված, կամ էլ «բախտի բերումով» կենդանի մնացած հայերն ու հույներն էին վճարելու իրենց իսկ դեմ մղված քեմալական «ազատագրական» պատերազմի համար (Kurtuluş Savaşı):

Ֆինանսների նախարար Մուստաֆա Աբդուլհալիքը, որն արտքի ժամանակ եղել է Բիթլիսի նահանգապետը, ինչպես նաև՝ Թալեաթի փաշայի քենակալը, «Մեզ չպատկանողների համար հնարավորինս շատ արգելքներ ենք հարուցելու» ասելով՝ վերջակետ է դնում այդ քննարկումներին:

Օրենքում նշված արտահայտությամբ հայերի գույքերը, որպես մի տեսակ «արյան գին», բաժանվում են այն իթթիհադական «շեֆերին», որոնք հայտնի են որպես Հայոց ցեղասպանության մեջ մեղավորներ, և որոնք սպանվել էին արտասահմանում կամ մահապատժի ենթարկվել երկրի ներսում: Իզմիրի մահափորձի դատաքննությունից (1926 թ. հունիսի 26) առաջ՝ 1926 թ. մայիսի 31-ին հրապարակված 882 թվակիր օրենքով Թալեաթը, Ջեմալը և Բեհաեդդին Շաքիրն էլ ներառյալ՝ 12 իթթիհադականի ընտանիքներին, առանց մի դրուշ պակասի, ուղիղ 20 հազար լիրա արժողությամբ հայկական գույք է բնձայվում: Արգելք է դրվում՝ այդ գույքերը 10 տարի չվաճառելու համար: Իթթիհադական այն ընտանիքների ցուցակում, որոնց տրվելու էին հայերի գույքերը, տեղ չի գտնում Էնվեր փաշայի անունը, որը հայտնի էր որպես Միություն և առաջադիմություն կուսակցության երեք առաջնորդներից մեկը՝ Թալեաթի և Ջեմալի հետ մեկտեղ: Այդ ցուցակում ընդգրկված մի իթթիհադական էլ մահապատժի է ենթարկ-

⁶⁶ Նույն տեղում:

վում Իզմիրի մահափորձի դատավարության արդյունքում⁶⁷։ Հայտնի է, որ Քեմալ Աթաթյուրքը խիստ հակակրանք ուներ Էնվերի հանդեպ, նրա անվան բացակայությունը ցուցակում հուշում է, որ «արյան գնի» մասին որոշումներն ընդունում էր անձամբ Քեմալը։

Ուշագրավ է, որ հրապարակախոս Մուրադ Բարդակչըն, որը խիստ քննադատել է Ջեմալ փաշայի թոռան վերջին գիրքը՝ 1915 թ. Հայոց ցեղասպանության վերաբերյալ, հիշեցրել է նրան, որ նրա ընտանիքը ևս «արյան գին» է ստացել հայերի գույքից։ Մուրադ Բարդաքչըն Haberturk կայքում գետեղված իր հոդվածում ներկայացրել է կառավարության որոշման արխիվային մի փաստաթուղթ՝ Աթաթյուրքի և կառավարության բոլոր անդամների ստորագրությամբ։ Այդ փաստաթղթով որոշվել է, որ պետության կողմից բռնագրավված Ստամբուլի Բեյոզլու, Ֆարիքքյոյ և Ֆրանսիական գերեզմանոցի դիմաց՝ Թաթավլա պողոտայի Վիզեն Հոկուչյանի կողմից «թողնված» անշարժ գույքը պետք է տրամադրվի հայ վրիժառուների կողմից սպանված թուրք պետական գործիչների ընտանիքներին։ Փաստաթղթից նաև պարզ է դառնում, որ 1450 քառ.մ. հողատարածքը և 200 քառ.մ. շինությունները տրամադրվել են Թիֆլիսում սպանված Ջեմալ փաշայի ընտանիքին⁶⁸։

Տեղահանված հայերի ունեցվածքի վաճառքին ու բաշխմանը վերաբերող կարգավորումներն ակտիվանում են 1930-ական թթ.։ 1915 թ. արժեքավոր իրերի վաճառքը նախատեսող կանոնակարգումից (1926 թ. մարտի 13-ի 781 թվակիր օրենքը) հետո օրակարգում է այդ իրերը վերցրածների կամ զավթածների անունների արձանագրումը գրանցամատյանների մեջ։ Այդ հարցն էլ է կանոնակարգման ենթարկվում։

1929 թ. ճգնաժամի սրման ժամանակ բռնագրավված աղբյուրներից մեկն էլ դառնում է այն դրամը, որը որպես «ավանդ»

⁶⁷ Խոսքը դոկտ. Նազըմի մասին է։

⁶⁸ Murat Bardakçı, "Atatürk, 1915'e 'soykurim' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parasi' olarak Ermeni gayrimenkullerini bağışlamıştı" <http://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/793024-ataturk-1915e-soykurim-diyen-hasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-gayrimenkullerini-bagislamisti>

թողել էին արքայալսերը Ֆինանսների նախարարությունում: 1928 թ. մայիսի 24-ի 1349 թվակիր օրենքով այդ ավանդից բյուջե է փոխանցվում 300 հազար լիրա: Ի դեպ, եթե միայն բյուջեի քանակային աճը ի նկատի ունենանք, ապա այն կկազմի այսօրվա 300 միլիոն նոր (տրիլիոն հին) թուրքական լիրա: Նման փոխանցումները շարունակվում են նաև հետագա տարիներին⁶⁹:

Պատմաբան Մայիթ Չեթինօղլուն, որը նույնպես զբաղվում է փոքրամասնություններից բռնագրավված գույքի խնդիրներով, արձանագրում է. «Այդ առումով այսօր որ ունեցվածքի վերին շերտը մաքրեք, տակից, գրեթե առանց բացառության, լրիվ Ցեղասպանությունից մնացած հարստությունը դուրս կգա: «Թուրքական կապիտալիզմի հարստության առաջացման գործընթացի սկզբում, գրեթե յուրաքանչյուր օրինակում կա մ հայկական, կա մ էլ հունական գույքի կհանդիպեք: Ինչ-որ կերպ 1913-23 թվականների դեպքերի ժամանակ ձեռք բերված մի շարք հարստությունների կհանդիպեք: Սակայն երբ դրա մասին խոստովանում են, հաճախ աչքաթող են անում մի ավելի կարևոր հանգամանք: Միակուսակցական ժամանակաշրջանում եթե մեկ առ մեկ անդրադառնաք Թուրքիայի Ազգային մեծ ժողովում կամ Ժողովրդական կուսակցության (*Halk Partisi, հետագայում՝ CHP-Ժողովրդադաժանրապետական կուսակցություն - Մ.Զ.*) բարձրաստիճան դեկավարության կազմում գտնվող անձանց, կտեսնեք, որ նրանք բոլորն էլ՝ գրեթե առանց բացառության, Ցեղասպանության միջոցով հարստացածներ են: Աթաթյուրքն էլ բացառություն չի կազմում նրանց մեջ: Պատկերացրեք, որ նախագահական պալատը հանդիսացող Չանքայան Քասափյանների ապարանքն է⁷⁰: Այլ բան ասելու կարիք էլ չի մնում. եթե ասեք՝ համառոտ կերպով ներկայացրեք Թուրքիայի Հանրապետությունը, հենց միայն այդ նախադասությունն էլ բավարար կլինի. Չանքայան Քասափյանների՝ ապարանքն է: Գիտեք, որ երկրի բոլոր կողմերում առկա են Աթաթյուրքի ապարանքներն ու տները: Ես ինքս հաշվում եմ մոտ

⁶⁹ Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը <http://akunq.net/am/?p=3874>

⁷⁰ Ներկայումս Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի նստավայրն է նորակառույց շքեղ և ահռելի չափերի հասնող Աքսարայ պալատը:

20-25 հատ՝ Տրապիզոնում, Բուրսայում, այստեղ-այնտեղ, Ադանայում, Տարսուսում, ամենուր։ Այսինքն՝ աննախադեպ երևույթ է, դրանք բոլորն էլ՝ առանց բացառության, ոչ մուսուլմանների կոտորածի կամ տեղահանության միջոցով ձեռք բերված գույք են»⁷¹։

Այս իրադրությունը հնարավոր է նաև ներկայացնել թվերով. Ջաֆեր Թոփրաքի ուսումնասիրության մեջ 1908-1913 թվականների միջև հնգամյա նախապատերազմյան ժամանակաշրջանում գոյություն ունեցող բաժնետիրական ընկերությունների ընդհանուր թիվը 113-ն է, որոնց հարստությունն ընդհանուր կազմել է 10.596.562 օսմանյան լիրա, իսկ պատերազմի տարիներին՝ այդ քառամյա ժամանակաշրջանում (1914-1918 թթ.), հիմնված բաժնետիրական ընկերությունների թիվը բարձրացել է 123-ի, և հարստությունն էլ ընդհանուր կազմել է 18.545.000 օսմանյան լիրա, այսինքն՝ գրեթե 2 անգամ ավելացել է⁷²։ Այն դեպքում, երբ ընկերությունների թիվն աճել է, թուրքական կապիտալով ընկերությունների հարստությունն էլ անցել է Առաջին աշխարհամարտի առաջին տարվա բյուջեի կեսը։ 1914 թ. բյուջեն կազմել է 35.329.950 օսմանյան լիրա։ Երբ այդ թվերին ենք հավելում նաև դարձյալ Ջաֆեր Թոփրաքի՝ 1919 թ. հիմնված, բայց վերը հիշված փնտրտուքների ժամանակ որպես բաժնետիրական ընկերություն չհանդիպած և 1927 թ. գործող 15 ընկերությունների (ենթադրվում է, թե դրանք 1918 թ. հետո վերածվել են բաժնետիրական ընկերությունների) 2.294.000 լիրայանոց կապիտալը⁷³, տեսնում ենք, որ թվերն ավելի են մեծանում։ Այդ թվերին ավելացնենք նաև իթթիհադականների՝ 1918 թ. 19 միլիոն օսմանյան լիրայանոց պետական կոնվերսիան ներքին շուկայում իրացնելու հաջողությունը՝ չնայած պատերազմի վերջին տարին լինելու փաստին։ Ի դեպ, Օսմանյան պետությունն առաջին անգամ էր ներքին շուկայում կոնվերսիա իրացնում։ Մենք չենք կարող անցնել՝ առանց հետևյալ հարցը բարձրաձայնելու. այդ ջրաղացի

⁷¹ Սայիթ Զեթինոլլու, «2015 թ.» 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» <http://akunq.net/am/?p=30783>

⁷² Zafer Toprak, *Türkiye’de Milli İktisat*, Yurt Y.1982, s. 358-365.

⁷³ Նույն տեղում, s 365.

շուրը որտեղի՞ց է այստեղ եկել արդյոք: Այդ թվերը համեմատել կարողանալու և գաղափար կազմելու համար հայտնենք, որ օսմանյան բյուջեն 1913-14 թվականներին կազմել է 35.329.950 օսմանյան լիրա, 1914-15 թվականներին՝ 57.841.339 օսմանյան լիրա⁷⁴, իսկ 1916-17 թվականներին՝ 82.980.780 օսմանյան լիրա⁷⁵:

Հանրապետության հոչակմամբ քեմալիստական իշխանությունը հարստության այս զավթումն օրինականացրել է *քաղաքակիրթ օրենքով*⁷⁶:

Միություն և առաջադիմություն կուսակցության առաջնորդներից Հալիլ Մենթեշեի այն խոսքը, թե «*Այս տեղահանության գործի հետ չառնչված թուրք շատ քիչ կա Անատոլիայում*», մատնանշում է Ցեղասպանության համար այն հավաքական պատասխանատվությունը, որի կրելուց այդքան վախենում են Թուրքիայում⁷⁷:

«Հայկական կապիտալի» բռնագրավման գործընթացը կարևոր դեր է խաղում այն հաստատությունական ժառանգորդության ըմբռնման մեջ, որով նշանավորվեց անցումը կայսրությունից հանրապետության: Այդ ժառանգորդությունն ակնհայտ է, քանի որ այն սկսվում է Օսմանյան կայսրության շրջանում (բռնագրավում) և ավարտվում Թուրքիայի Հանրապետության ժամանակներում (յուրացում):

⁷⁴ Çavdar Tevfik, *Türkiye Ekonomisi Tarihi*, İmge K. 2003, s. 124.

⁷⁵ Sait Çetinoğlu, «Sermayenin Türkleştirilmesi», *Resmî Tarih Tartışmaları* -2, Ed. Fikret Başkaya, 2. Baskı 2009, s. 130-131.

⁷⁶ Սայիթ Չեթինօղլու, «2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» <http://akunq.net/am/?p=30783>

⁷⁷ Taner Akçam, *İnsan Hakları ve Ermeni Sorunu*, İmge Yayınevi, Ankara 1999, s. 587.

**ՀԱՅԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ՇԵՏՈ**

Հայոց ցեղասպանության մասին խոսելիս շեշտը դրվում է առաջին հերթին հայ ժողովրդի մարդկային կորուստների վրա, քանզի մարդկային կյանքը գերագույն և բացառիկ արժեք է, այն անգին է: Մակայն ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդն ունեցել է նաև հսկայական նյութական կորուստներ: Հայոց ցեղասպանության գլխավոր փուլում (1915-1918թթ.) Օսմանյան կայսրությունում իշխանությունը զավթած Միություն և Առաջադիմություն Կոմիտեն (երիտթուրքեր), ծրագրեց և ղեկավարեց մոտ 1,5 միլիոն հայերի բնաջնջումը, իսկ մնացած 1 միլիոնը դարձան փախստականներ ու սփռվեցին աշխարհով մեկ: Անվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը: Ցեղասպանության ընթացքը զուգորդվում էր հսկայական տառապանքներով՝ բռնաբարություններով և սպանված հայերի գրեթե ամբողջ ունեցվածքի թալանով՝ սկսած փողից, ոսկեղենից ու հողից մինչև խոհանոցի պարագաներ ու հագուստ: Երկրորդ փուլում (1919-1923թթ.) թուրք ազգայնամոլները ներխուժեցին 1918թ.-ին հիմնադրված Հայաստանի Հանրապետություն և բռնազավթեցին նրա տարածքի մեծ մասը՝ այն միացնելով նոր ստեղծվող Թուրքիայի Հանրապետությանը, իսկ մյուս մասն էլ դարձավ Խորհրդային Միության մաս: Ազգայնամոլների ուժերն ու նրանց կողմնակիցները նաև արգելեցին հայերին Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադառնալ իրենց նախկին բնակավայրերը⁷⁸:

Հայկական հողով ու գույքով է ստեղծվել թուրքական հանրապետությունն ու նրա տնտեսությունը, այսինքն՝ թուրքական պետությունը ստեղծվել է հայկական ունեցվածքի հիման վրա, իսկ հազարավոր հայեր զրկվել են ամեն ինչից և մատնվել աղ-

⁷⁸ Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը, <http://www.arfd.info/hy/?p=21459>

քառության: Այսինքն, ցեղասպանության պես ծանր ոճիրից թուրքիան օգուտ է քաղել: Միջազգային իրավունքը հռչակում է «ex injuria non oritur jus»⁷⁹, այսինքն՝ հանցագործը չպիտի վայելի իր հանցագործության պատուհանները, ուստի և հանցագործության հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել⁸⁰:

1918թ. նոյեմբերի 11-ին Առաջին աշխարհամարտում ռազմական գործողությունները վերջնականապես դադարեցնող զինադադարը պաշտոնապես մտավ ուժի մեջ: Երկու ամիս անց՝ 1919թ. հունվարի 18-ին, Փարիզում իր աշխատանքներն սկսեց Փարիզի Խաղաղության վեհաժողովը (The Paris Peace Conference), որի նպատակն էր համապարփակ քննության ենթարկել պատերազմին առնչվող հարցերը և նախապատրաստել խաղաղության պայմանագրերը: Կարևորագույն հարցերի թվին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղավոր երկրների կողմից նյութական կորուստների փոխհատուցումը (reparations): Ըստ այդմ, Փարիզի վեհաժողովի կազմում ստեղծված էր փոխհատուցումների հարցով հատուկ հանձնաժողով: Գրեթե 2 ամիս տևած աշխատանքներից հետո պարզ դարձավ, որ նյութական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմիջականորեն մասնակցած երկրները: Ուստի, մարտի 7-ին նշյալ հանձնաժողովը ձևավորեց առանձին մարմին՝ Հատուկ հանձնախումբ (Special Committee), որի նպատակն էր ի մի բերել հանձնաժողովում չներկայացված երկրների և ժողովուրդների նյութական կորուստները և դրանց փոխհատուցմանը տալ պաշտոնական ընթացք: Հանձնախմբի ձևավորման հաջորդ իսկ օրը՝ մարտի 8-ին, այն դիմեց Բոլիվիայի, Բրազիլիայի, Չինաստանի, Էկվադորի, Գվատեմալայի, Հայիթիի, Հեջազի (ներկայումս՝ Սաուդյան Արաբիա), Պանամայի, Պերուի, Սիամի (ներկայումս՝ Թաիլանդ) և Հայաստանի Հանրապետության (Delegation of the Armenian Republic of the Conference of Peace) պատվիրա-

⁷⁹ Լատ. «Իրավախախտումից իրավունք չի կարող առաջանալ»:

⁸⁰ De Zayas A., *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005, p.41.

կություններին՝ խնդրելով տեղեկություններ կրած նյութական կորուստների վերաբերյալ⁸¹:

Մեկ ամսվա ընթացքում Հատուկ հանձնախումբն ամփոփեց պատվիրակությունների ներկայացրած, ինչպես նաև այլ միջոցներով հայթայթած, փաստաթղթերը և 1919թ. ապրիլի 14-ին ներկայացրեց իր նախնական զեկույցը: Փարիզի խաղաղության վեհաժողովում հայկական պատվիրակության ղեկավարներ Ավետիս Ահարոնյանը և Պողոս Նուբար փաշան ներկայացրել էին զեկույց «Tableau approximatif des Réparations et indemnités pour les dommages subis par le Nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase»: Թեև արևմտահայության և արևելահայության համար հաշվարկները կատարվել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացված էին միասնական վերջնական թվով⁸²:

Ըստ այդմ, հայության ամբողջական նյութական կորուստը 1914-1919թթ.-ին 1919թ.-ի գներով կազմել է. 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ կամ 3.693.239.768 ԱՄՆ դոլար:

Ըստ զեկուցագրի, հայության նյութական կորուստներն ունեին հետևյալ պատկերը.

1. Արևմտահայաստան (կամ ինչպես փաստաթղթում է գրված՝ Turkish Armenia).

ա) գյուղաբնակների անհատական նյութական կորուստներ՝ 4.601.610.000

բ) քաղաքաբնակների անհատական նյութական կորուստներ՝ 3.235.550.000

գ) ոչ անհատական նյութական կորուստներ՝ 6.761.350.000
Ընդամենը՝ 14.598.510.000 ֆրանկ

2. Հայաստանի Հանրապետություն և Կովկասի այլ հայաբնակ տարածքներ.

⁸¹ Արա Պապյան, «Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ», *Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները*, Երևան, 2007, էջ 22:

⁸² Kévork Baghdjian, *La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens... dits « abandonnés »*, Montreal, 1987, pp. 270-280.

ա) այն բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակաչությունն ամբողջությամբ տեղահանվել է՝ 1.831.872.000

բ) այն բնակավայրերի կորուստները, որոնց բնակչությունը չի տեղահանվել՝ 1.293.600.000

գ) այլ նյութական կորուստներ՝ 1.407.000.000 Ընդամենը՝ 4.532.472.000 ֆրանկ Համընդհանուր նյութական կորուստները՝ 19.130.982.000 ֆրանկ⁸³:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս թվի մեջ ներառված չեն հայերի 1920թ., 1921թ., և 1922թ. (համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Զմյուռնիա և այլն) նյութական կորուստները: Եթե հաշվառվեն նաև նշյալ ժամանակահատվածի կորուստները, ապա, բնականաբար, վերոնշյալ թիվն առնվազն պետք է 15-20%-ով մեծացվի:

Պետք է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի հրաժարվել իրեն հասանելիք հատուցումից (reparation): Անգամ հայոց պետականության կորստից հետո, երբ այն ռազմակալվեց օտարերկրյա զինված ուժերի կողմից (ռուսական 11-րդ բանակ + թուրքական 3-րդ բանակ), Հայաստանի Հանրապետության օրինական ներկայացուցիչները շարունակել են պնդել հայ ժողովրդի իրավունքների, մասնավորապես նյութական փոխհատուցման վրա⁸⁴: Բնչպես նշում է «Modus vivendi» վերլուծական կենտրոնի ղեկավար Արա Պապյանը, Լոզանի պայմանագրի կնքումից (24 հուլիսի, 1923թ.) անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ (8 օգոստոսի 1924 թ.) դիմել է Գլխավոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահաստատել հայոց իրավունքներին հավատարիմ մնալը: Վերլուծաբանը նաև անհնրաժեշտ է համարում առանձնացնել մի կարևոր հանգամանք փոխհատուցումների հարցով՝ ժամանակային գործոնը բնավ հիմք չէ նյութական պարտավորություններից խուսափելու համար: Ֆինլանդիան ԱՄՆ-ի նկատմամբ Առաջին համաշխար-

⁸³ Արա Պապյան, նշվ. աշխ. էջ23:

⁸⁴ Նույն տեղում:

հային պատերազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումն ամբողջացրեց միայն 1969-ին, Մեծ Բրիտանիան միայն 1965թ.: Ներկայիս Ռուսաստանը դեռևս խնդիրներ ունի ցարական Ռուսաստանի նյութական պարտավորությունների առումով: Թուրքիայի Հանրապետությունն ինքը, չնայած հսկայական զիջումներին, Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944թ. հունիսին⁸⁵:

«Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերությունն (NYLIC) իր 1875-1915թթ. շահառուների ժառանգներին փոխհատուցման հանձնառության մասին հայտարարեց միայն 2004թ. հունվարին, այն էլ երկարատև դատավարությունից հետո: Սույն դատավարությունը, թեև անմիջականորեն չի վերաբերում Հայոց ցեղասպանության ընթացքում մեր ընդհանրական նյութական կորուստների փոխհատուցմանը, այնուհանդերձ խիստ կարևոր է: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մեկ ֆրանսիական ֆրանկը ներկայումս հավասար է 2.17 ԱՄՆ դոլարի: Այսինքն, դատական նախադեպի կիրառմամբ, մենք կարող ենք հաշվարկել հայության նյութական կորուստների չափը Հայոց ցեղասպանության հետևանքով՝ 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ $\times$ 2.17 = 41.514.230.940 ամերիկյան դոլար:

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի, կազմում է առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար⁸⁶:

Հայոց ցեղասպանության նյութական կորուստների հատուցման պահանջով առաջին անգամ միջազգային վեհաժողովին ներկայացված վերոհիշյալ փաստաթղթի նշանակությունը որևէ կերպ չնսեմացնելով հանդերձ, պետք է նշենք, որ նրանում արված հաշվարկները, որոշ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներից ելնելով չեն կարող համարվել վերջնական և ենթակա

⁸⁵ Նույն տեղում:

⁸⁶ Արա Պապյան, նշվ. աշխ. էջ 24:

են ճշգրտման: Վեհաժողովին ներկայացված հուշագրում, բացի կոնկրետ կորուստներից, նախատեսված էին հաշմանդամների, վիրավորների, անբուժելի վնասվածքներ ստացածների աքսորյալների, աքսորը վերապրած և արտասահմանում գործազուրկ մնացածների, կաշառակերության և բռնագրավման դեպքերի, ինչպես նաև ազգային և կրոնական կառույցների ավերման համար հատուցումներ:

Որպես նյութական կորուստ, սակայն, հաշվառված չէր բռնագաղթից առաջ ու դրա ընթացքում թուրքերին գրոշներով հարկադրաբար վաճառած հայության ունեցվածքի իրական արժեքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փարիզի վեհաժողովին ներկայացված հայերի նյութական վնասների հատուցման վերաբերյալ հուշագիրը մնաց անհետևանք, իսկ քեմալականները փաստորեն շարունակում էին հայերի ցեղասպանության քաղաքականությունը, որին զուգահեռ ընթանում էր նրանց ունեզրկման գործընթացը, փորձ կատարվեց հարցի լուծումը տեղափոխել Ազգերի լիգա⁸⁷:

Մակայն, Ազգերի լիգայի Խորհուրդը ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդի զանգվածային ունեզրկման փաստերին քաղաքական ու իրավական գնահատական տալու փոխարեն, հայ գաղթականների՝ իրեն հղած բոլոր զանգատներն ու բողոքները (ըստ ընթացակարգի) հանձնեց Թուրքիայի Հանրապետության կառավարությանը:

Ի պատասխան Ազգերի լիգայի Խորհրդի՝ իրենց վերահասցեագրված բողոքների, թուրքական իշխանությունները նշում էին, որ թե՛ հայ գաղթականների և թե՛ «լքյալ գույքի» հարցն արդեն ենթակա չէ քննարկման, քանզի «հայ գաղթականներ» կոչվածները «ինքնակամ փախուստի դիմած անձինք» են (Ֆր. «fugitifs»), որոնք թուրքական նոր օրենքի համաձայն զրկվել էին Թուրքիայի քաղաքացիությունից, ուստի նրանց նկատմամբ կի-

⁸⁷ Յու.Բարսեղով, *Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը* (ոեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ), Երևան, 1999, էջ 17-29

րառելի չեն Լոզանի պայմանագրի համապատասխան դրույթները⁸⁸։ Ազգերի լիգայի կրավորական պահվածքի պայմաններում թուրքական իշխանությունների նման պատասխանը միանգամայն սպասելի էր։

Ազգերի լիգայի անգործությունից հիասթափված՝ Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն փորձում էր պարզել հայության խախտված իրավունքների վերականգնման հնարավորություններն ըստ տվյալ պահին գործող միջազգային իրավունքի։

Հաշվի առնելով Ազգերի լիգայում Հայկական հարցի փակուղի մտնելը, ինչպես նաև Թուրքիայի մերժողական կեցվածքը 1929 թ. հունիսի 5-ին Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն խորհրդատվական եզրակացություն տրամադրելու խնդրանքով դիմեց ժամանակի հեղինակավոր իրավաբան-միջազգայնագետներ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին՝ առաջ քաշելով հետևյալ հարցադրումները.

1) Արդյոք միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները և գործող նորմերը թույլ են տալիս օսմանահպատակ հայերին գրկել Թուրքիայի քաղաքացիությունից այն հիմքով, որ նրանք չեն մասնակցել այսպես կոչված «ազատագրական պայքարին»։

2) ա-Արդյոք միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը թույլ են տալիս, որ Թուրքիան իրականացնի իր սահմաններից դուրս գտնվող հայերի, ինչպես նաև Թուրքիայի հայկական համայնքի ունեցվածքի բռնագրավում, որն սկսվել է իրականացվել դեռ Լոզանի պայմանագրի ստորագրումից առաջ և շարունակվել է դրանից հետո։

բ-Եթե պատասխանը բացասական է, ապա այդ նույն նորմերն ու սկզբունքները պարտավորեցնում են արդյոք Թուրքիայի կառավարությանը վերադարձնել երկրից դուրս գտնվող հայերին նրանց ունեցվածքը, իսկ երկրի ներսում հայկական համայնքին։

⁸⁸ Նշվ. աշխ. էջ 22։

3) Արդյոք Թուրքիայի կառավարության և Լոզանի պայմանագիրը ստորագրած ցանկացած այլ պետության կամ Ազգերի լիգայի Խորհրդի անդամ-պետությունների միջև ծագած վեճերը, համարվու մ են միջազգային բնույթի և Լոզանի պայմանագրի 44-րդ հոդվածի համաձայն ենթակա են փոխանցման Միջազգային արդարադատության մշտական պալատի (այսուհետ՝ ՄԱՄՊ) քննությանը կողմերից մեկի պահանջով:

Իրավաբան-միջազգայնագետները գործող միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների հիման վրա երկու ամիս հանգամանորեն քննության առան վերը նշված հարցերը և 1929թ. օգոստոսի 2-ին ներկայացրեցին խորհրդատվական եզրակացություն, որում առաջին հարցին միանշանակ տրվել էր բացասական պատասխան ընդգծելով, որ անկախ հայերի՝ Օսմանյան կայսրությունը լքելու պատճառներից Թուրքիայի կառավարությունն իրավունք չունի նրանց գրկել քաղաքացիությունից ու վերադառնալու իրավունքից: Միաժամանակ նշվում էր, որ թուրքական կառավարության այսպես կոչված համաներման ակտը բացարձակապես կապ չունի արտագաղթածների վերադառնալու իրավունքի հետ և որ համաներում կոչվածը կարող էր իրականացվել արտագաղթածների՝ իրենց օջախները վերադառնալուց հետո միայն:

Իրավախորհրդատուները նշում էին, որ նախկին քաղաքացիներին իրավունքներից զրկելը նրանց նկատմամբ կրում է քրեական պատժի բնույթ, ինչը, սակայն, պետք է ունենար բավական լուրջ հիմնավորում, որովհետև պետությունները ծայրահեղ դեպքերում են իրենց քաղաքացիներին զրկում քաղաքացիությունից: Տվյալ դեպքում, ըստ մասնագետների, դա բացարձակապես անհիմն ու անօրինական էր, որովհետև բռնագաղթի ենթարկված հայերի «ազատագրական պայքարին» չմասնակցելը չէր կարող հիմք հանդիսանալ նրանց քաղաքացիական իրավունքներից զրկելու:

Թուրքիան, մասնագետ իրավաբանների կարծիքով, այս հարցում չէր կարող արդարանալ անգամ այն փաստարկով, որ քաղաքացիություն տրամադրելը ցանկացած պետության ինքնիշխան իրավունքն է, քանի որ պետության բացառիկ իրա-

վատությունները սահմանափակվում են միջազգային իրավունքի նորմերով:

Երկրորդ հարցի առաջին մասին նույնպես տրվել էր բացասական պատասխան՝ նշելով, որ ոչ միջազգային իրավունքի գործող նորմերը, և ոչ էլ, առավել ևս, Լոզանի պայմանագիրը թուրքական կառավարության իրավունք չեն տալիս բռնազավթելու հայերի ունեցվածքը՝ անկախ այն բանից մինչև Լոզանի պայմանագիրը, թե դրանից հետո է կատարվել այդ անօրինական գործողությունը:

Սրանից ելնելով՝ մասնագետները դրական էին պատասխանում երկրորդ հարցի երկրորդ մասին՝ ընդգծելով, որ թուրքական կառավարությունը պարտավոր է վերականգնել հայերից բռնագրավված ունեցվածքը և որպես ասվածի հիմնավորում մեջբերում էին հետպատերազմյան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վնասված կամ բռնագրավված ունեցվածքի վերականգնման պարտադիր սկզբունքը:

Ինչ վերաբերում է երրորդ հարցին, ապա մասնագետները նշում էին, որ հայերից բռնագրավված ունեցվածքի հարցը սկզբունքորեն կարող է ստանալ միջազգային վեճի բնույթ և Լոզանի պայմանագրի 44-րդ և Ազգերի լիգայի կանոնադրության 14-րդ հոդվածների համաձայն՝ դառնալ Ազգերի լիգային կից ՄԱՄՊ-ի քննության առարկա: Մակայն դա կարող էր կատարվել այն դեպքում, եթե թուրքական կառավարության տեսակետից տարբերվող մոտեցում ունեցող որևէ պետություն դիմեր ՄԱՄՊ-ին⁸⁹: Այսպիսով՝ հեղինակավոր իրավաբան միջազգայնագետները դեռ 1929 թ. լիովին բացահայտել են Թուրքիայի հակաիրավական քաղաքականության էությունը՝ հայերի նկատմամբ, ինչը միանշանակ հակասում էր այդ ժամանակ գործող միջազգային իրավունքի նորմերին:

Անվանի իրավաբան-միջազգայնագետ Յու. Բարսեղովը, իր հոդվածներից մեկում անդրադառնալով քննարկվող հարցերին ընդգծում է, որ *ստորագրելով Սևրի պայմանագիրը սուլթանա-*

⁸⁹ Յու. Բարսեղով, նշվ. աշխ., էջ 23-29:

կան կառավարությունը ճանաչել է Թուրքիայի պատասխանատվությունը Հայոց ցեղասպանության համար՝ միջազգային բոլոր իրավական հետևանքներով⁹⁰:

Հիշեցնենք, որ Սևրի հաշտության պայմանագրի «Հայաստան» բաժինն ընդգրկում էր 88-93- ռդ հոդվածները: Թուրքիայի սուլթանական կառավարությունը ճանաչում էր Հայաստանն իբրև ազատ և անկախ պետություն: Թուրքիան ու Հայաստանը համաձայնում էին էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում երկու պետությունների միջև սահմանազատումը թողնել ԱՄՆ որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և բոլոր առաջարկները Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տարածքների ապառազմականացման վերաբերյալ: Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները որոշվելու էին այդ պետությունների հետ ուղղակի բանակցությունների միջոցով: Անօրինական էր հայտարարվում լքյալ գույքի մասին օսմանյան կառավարության 1915թ. օրենքը: Թուրքիայում մնացող փոքրամասնությունների պաշտպանությունը, կյանքը, ազատությունն ու հավասարությունը օրենքի առաջ պետք է ապահովվեին կառավարության կողմից: «Պատիժներ» մասում թուրքական կառավարությունը ճանաչում էր դաշնակից տերությունների իրավունքները՝ ռազմական ատյանին հանձնելու պատերազմի օրենքներն ու կանոնները խախտած մեղավոր անձանց, ինչպես նաև նրանց կողմից իրագործված հանցագործությունների մասին տեղեկություններն ու փաստաթղթերը⁹¹:

Սակայն, գրում է Բարսեղովը, *քեմալական թուրք ազգայնականների հետ բոլշևիկյան Ռուսաստանի գաղտնի գործարքի*⁹²

⁹⁰ Юрий Барсегов, «Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину» <http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html>

⁹¹ Ա. Կիրակոսյան, *Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը* (պատմաիրավական եռալեզու տեղեկանք), Երևան, «Նորավանք» ԳԿԶ, 2006, էջ 24-25:

⁹² Խոսքը գնում է 1921թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված բարեկամության և եղբայրության պայմանագրի մասին, տես Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 28:

հետևանքով, ինչպես նաև արևմտյան տերությունների քաղաքական շահարկումների արդյունքում Սևրի պայմանագիրն այդպես էլ կյանքի չկոչվեց:

Անգլիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ կառավարությունները փորձում էին Հայկական հարցը ծառայեցնել իրենց ծրագրերին և երբեք լռելու և չմտախոհվելուն հայ ժողովրդի ճակատագրով: 1921թ. հունվարին Փարիզում, Անտանտի գլխավոր խորհրդի նիստում, Ֆրանսիան հանդես եկավ Սևրի պայմանագիրը վերանայելու պահանջով: 1921թ. փետրվար-մարտին Լոնդոնում կայացած Անտանտի պետությունների և պատերազմում պարտված Գերմանիայի և Թուրքիայի մասնակցությամբ կայացած կոնֆերանսում Ֆրանսիայի և Բուլղարիայի առաջարկով քննարկվեց Սևրի հաշտության պայմանագրի վերանայման խնդիրը:

Օգտվելով միջազգային նոր իրավիճակից և Անտանտի տերությունների միջև եղած հակասություններից՝ Անկարայի կառավարությունը պահանջեց վերականգնել նախապատերազմական սահմանները, բացառությամբ Կարսի մարզի: Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբարի ղեկավարած պատվիրակություններն ապարդյուն փորձում էին համոզել Անտանտի տերությունների ներկայացուցիչներին՝ իրագործել Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող հոդվածները և «վարչական ինքնավարություն» ստանալ ֆրանսիական ազդեցության ոլորտում գտնվող հայկական Կիլիկիայի համար: Մակայն կոնֆերանսը բավարարվեց միայն Թուրքիայի արևելյան նահանգների սահմաններում «Հայկական ազգային օջախ» ունենալու իրավունքի անորոշ ձևակերպմամբ, որը չընդունվեց թուրքական պատվիրակության կողմից:

1920-21թթ. ընթացքում Կիլիկիայի ֆրանսիական վարչությունը որևէ միջոց չձեռնարկեց հայ բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Օգտվելով այդ հանգամանքից՝ տեղի թուրք պետական պաշտոնյաներն ու քեմալական զորքերը կազմակերպեցին 25 հազար հայերի կոտորածը և հայ բնակչության արտագաղթը Կիլիկիայից: 1921թ. հոկտեմբերին Անկարայում ստորագրված թուրք-ֆրանսիական համաձայնագրով Կիլիկիան հանձնվեց Թուրքիային:

Ֆրանսիացի դիվանագետ Ժակ Բարդուն իր հուշերում խոստովանում էր, որ Ֆրանսիայի առաջնակարգ խնդիրը Արևելյան Միջերկրականի շրջանում տեղաբաշխված ֆրանսիական կապիտալների ետ ստանալն էր: Ֆրանսիական կառավարության քաղաքականությունը, Անկարայի դեկավար շրջանների հետ «լեզու գտնելու» նրա բազմաթիվ փորձերը վկայում էին հենց այն մասին, որ Ֆրանսիայի նպատակն էր պահպանել ֆրանսիական խոշոր դրամատերերի նախապատերազմական դիրքերը Թուրքիայում և ձեռք բերել շահագործման ու հարստացման նոր աղբյուրներ:

«Թուրքական պայմանագիրը,- գրում էր Պուանկարեն,- ստորագրվեց Սևրում՝ ճենապակու գործարանի գտնվելու վայրում: Եվ նա ինքը փխրուն է, գուցե և ջարդված սափոր»⁹³:

Այսպիսով, Ֆրանսիայի տիրապետող շրջանների թուրքասիրությունը, որը խարսխվում էր նրանց աներկբա տնտեսական և դրամական շահերի վրա Թուրքիայում, կարևոր գործոն հանդիսացավ Առաջին աշխարհամարտի ավարտից հետո սկիզբ առած ֆրանսիական թուրքանպաստ անջատ քաղաքականության գործում, ինչը կործանիչ ազդեցություն ունեցավ կիլիկիահայության հետագա ճակատագրի համար:

1922-23թթ. Լոզանի միջազգային կոնֆերանսն ավարտվեց մի շարք փաստաթղթերի ստորագրմամբ, որոնցից ամենակարևորը Լոզանի հաշտության պայմանագիրն էր, որով հաստատվեցին Թուրքիայի արդի սահմանները՝ փաստորեն փոխարինելով Սևրի հաշտության պայմանագրին: Կոնֆերանսի աշխատանքների ընթացքում քննարկվեց նաև Հայկական հարցը: Հայաստանի Հանրապետության պատվիրակությանը պաշտոնապես չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, քանի որ նա այլևս չէր ներկայացնում Հայաստանը: Այդուհանդերձ, Ազգային պատվիրակության հետ համատեղ կոնֆերանսին ներկայացվեց մի հուշագիր, որն առաջարկում էր Հայկական հարցի երեք հնարավոր լուծում. ա) Հայկական ազգային օջախի ստեղծում, բ) Հայաս-

⁹³ Սահակյան Ռ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երևան, 1970, էջ 20:

տանի ընդարձակում՝ նրան կցելով Արևմտյան Հայաստանի մի մասը դեպի ծով ելքով, գ) հայկական ազգային օջախի ստեղծում Կիլիկիայում: Ազգային փոքրամասնությունների հարցի կապակցությամբ 1-ին հանձնաժողովն ու ենթահանձնաժողովը մի քանի նիստերում անդրադարձան Հայկական ազգային օջախի զաղափարին: Չնայած Անտանտի տերությունների ներկայացուցիչների հայանպաստ արտահայտություններին, թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց հայկական ազգային օջախ ստեղծելու զաղափարը՝ պատճառաբանելով, որ Թուրքիայի ո՛չ արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չկա որևէ տարածք, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեն: Թուրքական պատվիրակությունը նաև նշում էր, որ Թուրքիան միջազգային իրավունքին համապատասխան պայմանագրեր է կնքել և «բարեկրթացիական հարաբերություններ» հաստատել Խորհրդային Հայաստանի հետ:

Վերջին անգամ Հայկական հարցը շոշափվեց 1-ին հանձնաժողովի 1923-ի հուլիսի 17-ի նիստում և, վերածվելով հայ զաղթականության հարցի, փոխանցվեց Ազգերի լիգային: Եվ արդեն կնքված պայմանագրում հիշատակություն անգամ չկար ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ հայերի մասին: Պայմանագրի 42-րդ հոդվածով թուրքական կառավարությունը պարտավորվում էր ապահովել Թուրքիայի ազգային փոքրամասնությունների աղոթարանների, գերեզմանոցների ու կրոնական մյուս հաստատությունների պաշտպանությունը⁹⁴:

Այսպիսով, 1923 թ. Լոզանի պայմանագիրը, որն ըստ էության Սևրի շրջանցման փորձ էր, չէր պարունակում որևէ դրույթ, որով Հայաստանը և հայ ժողովուրդը կկարողանային պաշտպանել իրենց գույքային իրավունքները:

Մեծ տերությունների վերաբերմունքը հայերի թալանին նույնպես կանխորոշված էր իրենց վերաբերմունքով Հայկական հարցին, նշում է Յու. Բարսեղովը վերոհիշյալ հոդվածում: Վերջնականապես փակել հարցի քաղաքական և ֆինանսական պատասխանատվության խնդիրը ձգտել է ոչ միայն Թուրքիան:

⁹⁴ Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 30-31:

Գործնական առումով այդ հարցն առնչություն ուներ թե՛ Գերմանիայի հանցակցության, թե՛ Անտանտի տերությունների թողտվության հետ, ինչի շնորհիվ էլ հնարավոր էր դարձել Հայոց ցեղասպանության իրագործումը, եզրակացնում է իրավագետը⁹⁵:

Լոզանի խորհրդաժողովի ամբողջ ընթացքը հաստատում է այդ գաղափարը, ապացուցում, որ տերությունները խառնելով փոքր ժողովուրդների ճակատագրերը, փակում էին նաև այդ լաբիրինթոսից դուրս գալու ուղիները, ցավով նշում է սփյուռքահայ քաղաքական գործիչ, հրապարակախոս Գ.Ահարոնյանը: Ահա թե ինչու նա դատությամբ զրույն էր. «Մեծ պետութեանց ներկայացուցիչները Պիղատոսի պես լուացին իրենց ձեռքերը, եւ ընդունեցին թուրքական տեսակետը՝ որովհետեւ իրենց քաղաքական բարոյականը այնքան ինկած էր՝ որքան թուրքինը: Քաղաքակրթության համար սեւագոյն օր մըն էր Լօզանի դաշնագրութեան ստորագրութեան օրը: Ցեղասպաններու մեծ յաղթանակի օրն էր անիկայ: Այդ օրը աշխարհի մեծերը հանդիսաւոր կերպով թաղեցին «Հայկական հարցը» ...Սակայն նոյն առթիւ անոնք թաղած եղան նաեւ պատիւն և արժանապատուիւն, հանդիսաւոր խոստում եւ երդում, սկզբունք եւ արդարութիւն, իրաւունք եւ օրէնք...»⁹⁶:

Այստեղ անհրաժեշտ է հիշատակել, որ գիտական գրականության մեջ գոյություն ունի կարծիք, համաձայն որի հայ ժողովրդի ունեցվածքի յուրացումը տեղի ունեցավ ոչ միայն բնաջնջող թուրքական պետության և նրա դաշնակիցների կողմից, այլև Առաջին աշխարհամարտում հայերին «դաշնակից» համարվող Անտանտի տերություններից՝ Մեծ Բրիտանիայի կողմից: Մասնավորապես, մի քանի հրապարակումներով այդ խնդրին է անդրադարձել պատմաբան Տ. Սարուխանյանը⁹⁷:

⁹⁵ Юрий Барсегов, «Державы, причастные к Геноциду армян, должны испустить свою вину» <http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html>

⁹⁶ Գերսամ Ահարոնյան, *Մեծ երազի ճամբուն վրայ (Ալեքանդր Հայկական հարցի պատմութեան վրայ)*, Պէյրոս, 1964, էջ 171:

⁹⁷ Տ. Սարուխանյան, «Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդիրը և Մեծ Բրիտանիան (1915-1924թթ.)», *Պատմաբանասիրական հանդես*, 2002, No.1, էջ 50-64; նույնի «Մեծ Բրիտանիայի և

Պնդումներն այն մասին, որ Մեծ Բրիտանիան մասնակից է դարձել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո բնաջնջման դատապարտված հայերի ունեցվածքի մասնակի յուրացմանը, տեղ են գտել անմիջապես Հայկական հարցի պատմությանը և պատմաբանների քննարկմանը հանձնելուն զուգընթաց: Այդ պնդումներից շատերը կրել են անուղղակի բնույթ և շարունակվել զրեթե ինը տասնամյակ՝ այդպես էլ չիմնավորվելով որևէ հավաստի, արժանահավատ և վավերական պաշտոնական վավերագրով:

Այդ հանգամանքին է անդրադարձել անգամ մեծ բնեռախույզ Ֆրիտիոֆ Նանսենը, ով 1920-ական թվականներին, Ազգերի Լիգայի շրջանակներում եռանդուն աշխատանք էր տանում Ցեղասպանությունից մազապուրծ գաղթականներին և որբացած հայ մանուկներին փրկելու ուղղությամբ: Հետամուտ լինելով նյութական միջոցների հայթայթմանը, թերևս, աշխարհում Նանսենն առաջինը հանդես եկավ, իր պնդմամբ, հայերից յուրացված 5 միլիոն ոսկե ֆունտի մասին, և ով հայտնվել էր Մեծ Բրիտանիայում հայերին վերադարձնելու նախաձեռնությամբ: Հարցին վերաբերող պաշտոնական վավերագրերը Տ. Սարուխանյանը հայտնաբերել է 2002թ. Լոնդոնում Մեծ Բրիտանիայի արխիվային հաստատություններում գիտական հետազոտությունների իրականացման ընթացքում:

Հեղինակի խոսքերով. «Առանց այդ վավերագրերի անհնարին կլինեք մեկնաբանել՝ մինչ օրս բավարար չափով չուսումնասիրված, ինչպես Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության բացակայության առեղծվածը, այնպես էլ հայերից թալանված, իսկ հետագայում՝ Մեծ Բրիտանիայի կողմից զավթված 5.000.000 թուրքական ոսկե ֆունտի ճակատագիրը»⁹⁸:

Մեծ եղեռնի ողջ ընթացքում Մերձավոր Արևելքը, Արևելյան

ցեղասպանության ընթացքում հայերի կրած նյութական և ֆինասական վնասների մի շարք հարցերի շուրջ» <http://168.am/2012/10/18/137006.html>

⁹⁸ Տ. Սարուխանյան, «Մեծ Բրիտանիայի և ցեղասպանության ընթացքում հայերի կրած նյութական և ֆինասական վնասների մի շարք հարցերի շուրջ» <http://168.am/2012/10/18/137006.html>

Հայաստանն ու Անդրկովկասը հեղեղված էին հարյուր-հազարավոր հայ գաղթականներով: Դրանց մի մասը սովամահ եղավ կամ մահացավ տարբեր մահաբեր ու համաճարակային հիվանդություններից: Այդ օրերին, հայ ժողովրդի «ղաշնակից» Անգլիայում որոշ անհատներ փորձեցին կառավարության միջոցով մասնակից լինել տարազիր հայերի փրկության կազմակերպման գործին: Բրիտանա-հայկական կոմիտեի անդամ լորդ Ջեյմս Բրայսը 1915թ. սեպտեմբերին վարչապետին հղած նամակում ներկայացնելով միայն Թիֆլիսում և նրա շրջակայքում կուտակված հարյուր-հազարավոր «բացարձակապես ընչազուրկ, հիվանդություններից և սովից մեռնող» հայ գաղթականների վիճակը, օգնություն կազմակերպելու համար կառավարությունից աղերսում էր 40.000 անգլիական ֆունտ ստեռլինգի հասնող նվիրատվություն:

1916թ. փետրվարին Լոնդոն հասավ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի՝ հայ գաղթականներին օգնելու ռուսական կառավարության առաջարկը, որը փոխանցվեց անգլիական կառավարության քննարկմանը Մեծ Բրիտանիայում հավատարմագրված Ռուսաստանի դեսպան կոմս Բենկենդորֆի միջոցով: Համաձայն ռուսական ծրագրի՝ ռուսական և անգլիական կառավարությունները պետք է հավասարապես կիսեն Թուրքիայում հայերի օգնության համար հատկացված 1.000.000 ֆրանկ նվիրատվությունը:

Ընդ որում, անգլիական կառավարությունը պետք է հատկացներ 20.000 անգլիական ֆունտ ստեռլինգ: Ֆինանսների նախարարության կողմից արտաքին գործերի նախարար Էդ. Գրեյին փոխանցված նամակում Ջոն Բրեդբորին նշում էր, որ «քանի դեռ չի ծագել քաղաքական կարևոր շահագրգռվածություն, իրենք ազգային շահերի տեսանկյունից կասկածելի են համարում» այն ճանապարհը, որով առաջարկվում էր օժանդակել հայերին: Հենվելով կառավարության, ֆինանսների և իր նախարարության համատեղ կարծիքի վրա՝ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ջ. Լոկոկը կոմս Բենկենդորֆին հղած պատասխան-նամակում մերժեց «փոքր ազգերի ազատագրության համար կովող» Մեծ Բրիտանիայի կողմից հայ տարագիրներին չնչին նյութական

միջոցներով օժանդակելու առաջարկությունը՝ պատճառաբանելով այն «իրատապ ու անհետաձգելի աղերսագրերով, որոնք ուղղվում են Ֆինանսների նախարարությանը, կարիքից մահացող բրիտանացի և դաշնակից երկրների հպատակների կողմից»⁹⁹:

Ճշմարտությունն այն է, որ Թուրքիայի դեմ մղված պատերազմի ընթացքում անգլիական կառավարությունը ոչ մի լուրաչիսակացրեց անգամ մեկ հայի փրկության համար: Կառավարությունը ոչ միայն մերժում էր իր միջոցներից գումար հատկացնել, այլև մասամբ խոչընդոտում էր նույնիսկ անգլիական մասնավոր ընկերությունների կողմից մինչ պատերազմը հայերի նկատմամբ ստանձնած ֆինանսական և նյութական պարտավորությունների կատարմանը: Խոսքը վերաբերում է Օսմանյան Թուրքիայում գործող կյանքի և ունեցվածքի ապահովագրման մի շարք ընկերությունների գործունեությանը: Դրանք գլխավորապես ամերիկյան էին, կային նաև ֆրանսիական և անգլիական տարբեր ընկերություններ: Ինչպես, օրինակ՝ անգլիական Գրեշամ (Gresham) և Մթար Աշուրանս (Star Assurance Company) ապահովագրական ընկերությունները:

Տակավին 1916թ. նոյեմբերին Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն (որը մինչ Թուրքիային ԱՄՆ-ի կողմից պատերազմ հայտարարելը համատեղության կարգով ներկայացնում էր նաև Մեծ Բրիտանիայի շահերը) Անգլիայի արտաքին գործերի նախարարությանը հղած հաղորդագրության մեջ նշում է, որ Մամուտնի ամերիկյան հյուպատոսական աշխատակցից ստացել է համոզիչ ապացույցներ այն մասին, որ ցեղասպանության ժամանակ զոհված Հովակիմ Գևորգի Մասաթյանը հասցրել էր ապահովագրել իր կյանքը 3000 ֆրանկ գումարով անգլիական «Մթար Աշուրանս» ընկերության հետ կնքված N114645 պայմանագրով: Հ. Մորգենթաուն անգլիական իշխանություններին

⁹⁹ Ա. Նասիպեան, *Բրիտանիա և Հայկական Հարցը* (1915-1923), Պեյրուք, 1994, էջ 84: «այստեղից կարելի է ենթադրել, որ մեկ անգլիական ֆունտ ստեռլինգը 1916թ. սկզբին առկա արտաբծությանին փոխարժեքով հավասար է եղել 25 ֆրանսիական ֆրանկին», տես Տ. Սարուխանյան, «Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդիրը...», էջ 55:

միաժամանակ խնդրում էր՝ զոհված անձին հասանելիք գումարը վճարել ցեղասպանությունից մազապուրծ եղած նրա որբացած երեխաներին:

Էդ. Գրեյի անունից արտաքին գործերի նախարարի տեղակալ Հարոլդ Նիկոլսոնը առևտրի նախարարին հղած նամակում գրում էր, որ անգլիական ապահովագրական ընկերությունները պետք է ձեռնպահ մնան ցանկացած փոխհատուցման գումարի վճարումից, քանի որ «բռնագաղթված հայերի մահվան առնչությամբ ներկա պայմաններում որևէ բացարձակ ապացույց չի կարող ներկայացվել»¹⁰⁰: Հ. Նիկոլսոնի նամակը պետք է փոխանցվեր Լոնդոնում ամերիկյան դեսպան Վ. Փեյջին:

Նամակում Հ. Նիկոլսոնի արտահայտած այս կարծիքը հետագա տասնամյակների ընթացքում ընկավ Անգլիայի կողմից որդեգրած հայերի նկատմամբ ստանձնած պարտականությունների ուրացման խորխորատը, գրում է Տ. Սարուխանյանը¹⁰¹: Հենվելով առևտրի նախարարի տեղակալ Հ. Մ. Վինեբալսի կարծիքի վրա՝ Հ. Նիկոլսոնը ԱՄՆ դեսպանին ուղղված պատասխան-նամակում նշում է, որ պատերազմի ընթացքում արգելվում է որևէ գումար վճարել այն անձին, որը հանդիսանում է թշնամի երկրի քաղաքացի: Նա հնարավոր էր համարում վճարել ապահովագրական պայմանագրով նախատեսված գումարը միայն այն անձին, ով Անգլիայի մշտական բնակիչ էր, կամ նախքան պատերազմը բնակվել էր այնտեղ: Վերջում Հ. Նիկոլսոնն ավելացնում էր, որ «ապահովագրական ընկերությանը չի թույլատրվում որևէ գումար վճարել Մասաթյանի երեխաներին, անգամ, եթե քննարկվող ընկերությունը ցանկություն ունի վճարել ապահովավճարը մահվան դիմաց»:

Անգլիան պատերազմում էր Թուրքիայի դեմ՝ վերջինիս լծի տակ հեծող «փոքր ազգերի ազատագրման համար»¹⁰²: Եվ ահա,

¹⁰⁰ Տ. Սարուխանյան, նշվ. աշխ. էջ 56:

¹⁰¹ Նույն տեղում:

¹⁰² Քերզոկի զեկուցումից. «Երբ դաշնակիցները ներգրավվեցին պատերազմի մեջ, նրանց նպատակներից մեկը Փոքր Ասիայում զգալի թիվ կազմող քրիստոնեական փոքրամասնությունների պաշտպանությունը և, հնարավորության դեպքում, նրանց ազատագրումն էր: Դա առանձնապես վերաբերում է

այդ գործին իր բուռն ավանդը ներդնող հայը վերածվել էր «թշնամի քաղաքացու»։ Մամուլի էջերում և պառլամենտում բազմիցս դեմագոգիկ հայանպաստ հայտարարություններով հանդես եկող անգլիական կառավարության անդամները նույնիսկ մասնավոր ընկերություններին խոչընդոտում էին կատարել իրենց իսկ կողմից ստանձնած պարտականությունները։ Անգլիական արխիվներում մինչ օրս պահպանված նախքան Առաջին աշխարհամարտը հայերի հետ կնքած տարատեսակ ունեցվածք ու մարդկային կյանքն ապահովագրող իրավական այդ փաստաթղթերը այդպես էլ առ այսօր մնում են՝ որպես, մեծի մասամբ, պատմական մոռացված արձանագրություններ։

Անգլիայի և Թուրքիայի միջև 1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված զինադադարով ազդարարվեց Առաջին համաշխարհային պատերազմում վերջինիս պարտությունը։ Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության, հայ ժողովրդի համար կենսական այլ հիմնահարցերը տեղափոխվեցին Փարիզի խորհրդածողով, մեծ տերությունների միջև շարունակաբար ընթացող երկարատև բանակցությունների և տարբեր կոնֆերանսների ու պատերազմի ավարտին ստեղծված, Անգլիայի ձեռքերում խաղալիք հանդիսացող՝ Ազգերի լիգայի քննարկման ոլորտը։

Նախքան Լոզանի կոնֆերանսը, հայ ժողովրդի արդարացի պահանջները, այդ թվում՝ նյութական փոխհատուցման հարցերը, լայն քննարկման առարկա էին դարձել Ազգերի լիգայում։ Ազգերի լիգան, որի լույս աշխարհ գալու գաղափարը անգլիական քաղաքական խոհանոցում ծագել էր դեռևս Առաջին աշխարհամարտի ավարտին, հիմնադրվեց 1919թ. Վերսալի հաշտության պայմանագրով։ Այդտեղ էլ ազդարարվեց վերջինիս հիմնադիր փաստաթղթի (ստատուտի) ընդունումը։ Լիգայի խորհուրդը բաղկացած էր չորս մշտական անդամներից, դրա կազմի

Հայաստանին», տես *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, փաստաթղթերի ժողովածու (պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, կազմ. Ջ. Կիրակոսյան, Ռ. Մահակյան), Երևան, 1972, էջ 736։

մեջ էին մտնում Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան:

Բնական էր, որ գլխավոր որոշումների ընդունման և դրանց իրականացման լծակները, ինչպես նաև՝ ամբողջ աշխարհում հետպատերազմյան միջազգային նոր իրավահամակարգի հաստատման բանալին գտնվում էին Անգլիայի ձեռքերում: Ազգերի լիգան 1922թ. քննության առավ հայ փախստականների և ցեղասպանության արդյունքում թուրքական քաղաքացիությունից զրկված հայ գաղթականների խնդիրը, առաջարկելով, ի գիտություն միջազգային հանրության, ընդունել «նանսենյան անձնագիր»՝ անձը հաստատող փաստաթղթի հասկացությունը, որը թույլ կտար հայրենիքը կորցրած յուրաքանչյուր հայի օգտվել որոշակի արտոնություններից, այդ թվում՝ Ազգերի լիգայի հովանու ներքո Թուրքիայում ստեղծվելիք «Ազգային օջախ» վերադառնալու հնարավորությունից:

Սակայն, ինչպես արդեն նշվեց, մեծ տերությունները, մասնավորապես՝ Անգլիան, վիժեցրեցին ոչ միայն Հայաստանի ազատագրման, այլև իրենց իսկ կողմից որպես այլընտրանք առաջադրված «Ազգային օջախ» ստեղծելու գաղափարը: 1923թ. ի վեր, ընդհուպ մինչև 1925թ.՝ Ազգերի լիգան արդեն քննարկում էր 320.000 «նանսենյան անձնագրեր» տրամադրել հայ գաղթականներին՝ նորաստեղծ ՀԽՍՀ-ում վերաբնակվելու համար: Ֆրիտիոֆ Նանսենը 1925թ. Խորհրդային Հայաստան կատարած այցից հետո, հանրապետության կացության վերաբերյալ հատուկ զեկուցագիր ներկայացրեց, որտեղ պնդում էր, որ, անհրաժեշտ ֆինանսական աջակցության դեպքում, երկիրն ի վիճակի կլինի ընդունել 25.000-30.000 փախստական: Այս նախաձեռնության կյանքի կոչումը հնարավոր կլիներ միայն ֆինանսական միջոցների առկայության պարագայում¹⁰³:

¹⁰³ 1927 թ-ին նորվեգերեն հրատարակվել է Ֆ. Նանսենի «Հայաստանում» ծավալուն գիրքը, որը թարգմանվել է անգլերեն ու ֆրանսերեն՝ «Հայաստանը և Մերձավոր Արևելքը», զերմաներեն՝ «*Israhelische Ostpolitik*» վերնագրերով: Ընդ որում, գրքի վրա կարմիր տառերով գրված է. «Մեղադրանք Անտանտի ու Ազգերի լիգայի դեմ», <http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1482>

Այդ իսկ պատճառով Ֆ. Նանսենը բարձրացրեց ցեղասպանության ընթացքում հայերից թալանված և ապա անգլիացիների կողմից առգրավված 5.000.000 թուրքական ոսկե ֆունտի ճակատագիրը: Այն սերտորեն կապված էր Առաջին աշխարհամարտում պարտություն կրած կայսերական Գերմանիայի նկատմամբ հաղթանակ տարած Անտանտի տերությունների կողմից գանձվելիք ռեպարացիաների խնդրի հետ: Համաձայն Վերսալի հաշտության պայմանագրի՝ ստեղծվեց Միջդաշնակցային ռեպարացիոն հանձնաժողով:

Բուն Վերսալի հաշտության պայմանագիրը չամրագրեց գերմանական ռեպարացիաների չափը: Այսինքն՝ Գերմանիան պետք է իր վրա պարտականություն վերցնեք վճարելու այն ռեպարացիոն գումարը, որն արդյունքում սահմանելու էին դաշնակիցները:

Նախատեսվում էր, որ Գերմանիան պարտավոր է դաշնակիցներին վճարելու այն ոսկին ու թանկարժեք իրերը, որոնք նա պատերազմի ընթացքում ստացել էր Թուրքիայից, Ավստրո-Հունգարիայից և Ռուսաստանից: Միանշանակ էր, որ դրա մեջ էր մտնում այն 5.000.000 թուրքական ոսկե ֆունտը, որը Գերմանիայի պարտությունից հետո անգլիացիները գերմանական Ռայխսբանկից տեղափոխել էին Անգլիա¹⁰⁴:

Վերսալի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո հիմնահարցը փոխադրվեց անգլիական պառլամենտ և դարձավ «հայանպաստ ուժերի» նախաձեռնած բուռն քննարկումների առարկա: Հայ ժողովրդին պատկանող և նրանից բռնագավթված սեփականության գրպանման հիմնահարցը սերտորեն կապված էր կառավարության և պառլամենտի անդամների միջև ծավալված ռեպարացիոն հարցերի շուրջ բանավեճերի հետ:

Այսպես, 1921թ. փետրվարին գերմանացիների կողմից պատերազմի ընթացքում պատճառած վնասների նյութական փոխհատուցման առնչությամբ պառլամենտի անդամ պրն Ռապերը հանդես եկավ հարցադրմամբ՝ փորձելով պարզել, թե արդյոք Գերմանիան պարտավոր է բավարարել իր և իր դաշնակիցների

¹⁰⁴ Տ. Տիգրանեան, *Անգլիան և Հայերը*, Երևան, 1994, էջ 86:

նկատմամբ բրիտանացի քաղաքացիների կողմից ներկայացված բոլոր պահանջները: Խոսքը Թուրքիայի և Բուլղարիայի մասին էր: Պատասխանող՝ արտաքին առևտրի նախարարի պառլամենտի գծով տեղակալ Պ. Լյոդ Գրինը նշեց, որ Բրիտանացի քաղաքացիների հայտարարագրված պահանջները Թուրքիայի նկատմամբ կազմում են 23.000.000 ֆունտ և, որ Վերսալի պայմանագրով Գերմանիան չի կրում որևէ պարտավորություն թշնամի կամ նախկինում թշնամի եղած այն պետությունների քաղաքացիների նկատմամբ, որոնք պարտք են բրիտանացի քաղաքացիներին, այսինքն՝ կառավարության անդամը քողարկում էր Գերմանիայից Անգլիա ապօրինաբար տեղափոխված 5 մլն թուրքական ոսկե ֆունտի փաստը:

1921թ. հունվարի 31-ի դրությամբ Գերմանիան ռեպարացիաների տեսքով հասցրել էր Անտանտի դաշնակից երկրներին փոխանցել 6.055.000.000 ոսկե մարկ (303.000.000 անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգ) տուգանք, որից 22%-ը նախքան այդ կնքված Սպայի համաձայնագրով պետք է բաժին ընկներ Բրիտանական կայսրությանը: Պառլամենտի անդամ՝ ռազմածովային ուժերի կապիտան-լեյտենանտ Յունգը հոխորտում էր՝ քննադատելով կառավարության ռեպարացիոն քաղաքականությունը: Նա իր դիրքորոշումն ամրապնդում էր նրանով, որ միայն 1920թ. դեկտեմբերի 31-ի տվյալներով՝ գրավված տարածքներում անգլիական զորքերի պահպանման ծախսը կազմել էր 3.530.000.000 ոսկե մարկ (177.000.000 անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգ) և, որ բոլոր ծախսերը հանած, հաղթանակած Անգլիան 1921թ. Հունվարի 31-ի տվյալներով կարողացել էր ստանալ միայն 100.000.000 ֆունտ ռեպարացիոն գումար¹⁰⁵:

Այս առումով առաջին լուրջ հարցադրումը բարձրացվեց և ուղղվեց Անգլիայի ֆինանսների նախարար Ռ. Հորնին՝ խորհրդարանի անդամ Վալսի կողմից: Վերջինս պահանջում էր բացատրել, թե արդյո՞ք այն ոսկին, որ փոխանցվել էր Վիեննայից

¹⁰⁵ 1921 դրությամբ արտարժույթային փոխարժեքով մեկ անգլիական ոսկե ֆունտ ստեռլինգը հավասար է եղել 20 գերմանական ոսկե մարկի, տես Տ. Սարոլիսկյան, նշվ. աշխ. էջ 59:

Լոնդոն (խորհրդարանի անդամը, ինչպես և շատ-շատերը տեղ-
յակ չէին, որ գումարը փոխանցվել էր Բեռլինից) ուղղվելու էր
օսմանյան պետական պարտքի մարմանը: Անգլիական պաշտո-
նական անձանցից առաջինը ֆինանսների նախարար Ռ. Հորնը
հրապարակայնորեն ընդունեց, որ գումարը ոսկով դեպոզիտա-
գրված է եղել Ավստրո-հունգարական բանկում՝ ապահովա-
գրելու համար թողարկված թուրքական առաջին թղթադրամները
և քննարկվող ոսկին (5.000.000 թուրքական ոսկին) տեղափոխվել
է Լոնդոն: Այն չպետք է ներկայացվեր ռեպարացիոն հանձնա-
ժողովի քննարկմանը և չպետք է օգտագործվեր Թուրքիայի կող-
մից Բրիտանական կայսրության նկատմամբ մինչ այդ գոյություն
ունեցող պետական պարտքի մարման համար: Փաստորեն,
կառավարության խոսնակը պառլամենտի առջև բացեիքաց հայ-
տարարում էր, որ ոչնչով չհիմնավորված ոսկե հաշվեհամարում
գտնվող գումարի անօրինական փոխանցումը Լոնդոն և դրա
յուրացումը հանդիսանում էր կառավարության կողմից որդե-
գրած պետական ֆինանսական հափշտակիչ քաղաքականու-
թյան բաղկացուցիչ մասը:

Այստեղ առկա հակասությունը՝ կապված հողվածի
սկզբում անգլիական պաշտոնական արխիվների փաստաթղթե-
րում հիշատակվող 1915թ. վերջին Գերմանիա տեղափոխված
5.000.000 թուրքական ոսկու ճակատագրի հետ և, թե ինչու և
ինչպե՞ս արդեն 1921թ. անգլիական պառլամենտում, ինչպես նաև
այլ աղբյուրներում գերմանական Ռայխսբանկի փոխարեն
այլ Ավստրո-հունգարական բանկը, Ս. Սարոլխանյանը բա-
նշվում է Լոնդոն-հունգարական բանկը, 1. կամ անգլիական կառավարությու-
նը փորձում էր մոլորության մեջ գցել հանրությանը՝ թաքցնելով
այն վայրը, որտեղից Լոնդոն էր փոխանցվել և ապա անգլիացի-
ների կողմից յուրացվել հայերին պատկանող թուրքական ոսկին,
2. կամ պատերազմում Թուրքիայի դաշնակից Ավստրո-Հունգա-
րիայի և Գերմանիայի միջև կայացած որևէ համաձայնությամբ,
նախքան պատերազմի ավարտը, ոսկին Ռայխսբանկից տեղա-
փոխվել էր Ավստրո-հունգարական բանկ: Հավանաբար, այն
մտահոգությամբ, որպեսզի հնարավոր լիներ քողարկել գումարի
ստացման սկզբնական վայրը և ծագման աղբյուրը՝ այն հետա-

գայում Թուրքիա վերադարձնելու կամ Անտանտի տերությունների ռեպարացիոն գանձումներից թաքցնելու համար¹⁰⁶:

Մեծ Բրիտանիայի պաշտոնատար անձինք Լոգանի դաշնագիրը Թուրքիայի կողմից վավերացնելուց անմիջապես հետո 1924թ. սեպտեմբերի վերջերին, բարձրացրեցին իրենց իսկ պետության կողմից յուրացված 5.000.000 ոսկու հետագա ճակատագրի հարցը:

Անգլիայի պահպանողական կուսակցության առաջնորդ լորդ Սթենլի Բոլդուինը, լիբերալ կուսակցության ղեկավար Շերբերո Ասքոչիքը և պառլամենտի անդամ Նոել Բեքսթոնը կազմեցին և իրենց ստորագրությամբ հուշագիր ներկայացրեցին վարչապետ ընտրված լեյբորիստական կուսակցության առաջնորդ Ռամզեյ Մակդոնալդին: Այդ հուշագրում մասնավորապես ասվում էր, որ Մեծ Բրիտանիան պարտավոր է մի մեծ գումար տալ օգնելու Հայաստանում, Բալկաններում և այլ երկրներում գտնվող հայ զաղթականներին:

Այդ պահանջը նրանք հիմնավորել են մի շարք դրույքներով, որոնք հանգում էին հետևյալին. «1) պատերազմի ընթացքում և զինադադարից հետո դաշնակից և նրանց հարող տերությունների պետական գործիչները մի քանի անգամ երաշխիք են տվել հայ ազգի ազատագրման ու անկախության մասին: 2) ... 5.000.000 ֆունտ ստեռլինգը (թուրքական ոսկի), որ թուրքական կառավարությունը 1916թ. պահ էր տվել Բեռլինում, և զինադադարից հետո վերցվել էր դաշնակիցների կողմից, մեծ մասամբ (գուցե և ամբողջովին) հայերի դրամն է»: Հուշագիրը կազմողները փաստաթղթի վերջում նշում էին, որ հայերին տրված, բայց երբեք չիրականացված խոստումների համար իրենք կրում են բարոյական պատասխանատվություն՝ պահանջելով բրիտանական կառավարությունից «մի կարևոր շնորհ» անել հայերին՝ վերադարձնելով առգրավված ոսկին: Այս դիմումը ներկայացնելուց շատ չանցած, երբ Սթենլի Բոլդուինը, որը փոխարինեց Ռամզեյ Մակդոնալդին վարչապետի պաշտոնում, այնուամենայնիվ, հրաժարվեց որևէ գումար տրամադրել հայերին, որոնց իր իսկ

¹⁰⁶ Տ. Սարուխանյան, նշվ. աշխ. էջ 59:

կազմած հուշագրով «Բարոյապես պարտք էր» որոշ փոխհատուցում»¹⁰⁷:

Անգլիացիների կողմից առգրավված 5.000.000 ոսկե ֆունտի ճակատագրին երկու տասնամյակ անց՝ 1944թ. հոկտեմբերի 10-ին, Սթենլի Բոլդուինին հղած նամակով անդրադարձավ Մարի Թերզյանը, ով խնդրում էր իրեն տրամադրել Ս. Բոլդուինի՝ Հ. Ասքուիթի ստորագրությունը կրող այն հուշագրի պատճենը, որը նրանք ներկայացրել էին Ռ. Մակդոնալդին, որպեսզի ինքը կարողանա օգտագործել այն իր գրքի մեջ: Մարի Թերզյանի նամակը ստանալուն պես Բոլդուինը, հանկարծակիի գալով, շտապ նամակ է գրում այն ժամանակ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Ջ. Կադոգանին:

Կցելով հայ կնոջ նամակը՝ Բոլդուինն արդեն «ողջ պատմությունն անհեթեթություն» է համարում: Կադոգանն, իր հերթին, խորհուրդ է տալիս վերջինիս՝ Թերզյանին չտրամադրել 1924թ. կազմված հուշագրի պատճենը: Բայց քանի որ Մարի Թերզյանը կարող էր ձեռք բերել փաստաթուղթը ԱՄՆ Կոնգրեսի արխիվներից, առաջարկում է որքան հնարավոր է մոլորության մեջ գցել հեղինակին՝ որակելով հայերին իրավամբ պատկանող դրամը, որպես գումար, որն իսկապես 1916թ. Թուրքիայից տեղափոխվել է Բեռլին և Վիեննա՝ ապահովագրելու համար թուրքական կառավարության կողմից թողարկվող առաջին թուրքական թղթադրամների արտադրությունը և, «որ որևէ հավանականություն գոյություն չունի, որ այն հանդիսանում է բռնագաղթված հայերի սեփականությունը»:

Երկրորդ նամակը, որը վերաբերում է Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդրին, նույնպես պահվում է Մեծ Բրիտանիայի պաշտոնական արխիվներում: Այն շարադրվել է 1945թ. հունիսի 30-ին: Այն ժամանակ, երբ արդեն Երկրորդ համաշխարհային պատերազմում հաղթանակած դաշնակիցները Պոտսդամի կոնֆերանսում վճռում էին Հրեական ողջակիզման կազմակերպիչներին և մեղսակիցներին միջազգային արդարադատությանը հանձնելու և հրեա ժողովրդի

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 61:

կրած նյութական, ինչպես նաև բարոյական կորուստների և վնասների փոխհատուցման հարցերը:

Օրիորդ Զեորջիա Գաթլերը Վաշինգտոնում հավատարմագրված Անգլիայի դեսպան լորդ Հալիֆաքսին ուղարկած գրության մեջ փորձում էր պարզաբանումներ ստանալ, թե ի՞նչ եղավ 1916թ. Թուրքիայից Բեռլին Ռայխսբանկ, այնուհետև Լոնդոն փոխանցված այն «5.000.000 ֆունտը, որը պատկանում է հայերին»¹⁰⁸: Հայերի ունեցվածքի ու սեփականության վերադարձմանն ուղղված այս և նմանատիպ դիմումներն ու խնդրագրերը անգլիական իշխանությունների կողմից մնում էին կամ անպատասխան, կամ էլ, ինչպես Մարի Թերզյանի դեպքում, բացառիկ կարգով կեղծված և ճշմարտությունը թաքցնելուն միտված: Ցեղասպանության հետևանքով հայ ժողովրդից թալանված և այնուհետև անգլիացիների կողմից յուրացված նյութական կորուստների և դրա համար պատասխանատվության ենթարկման խնդիրն այլևս չբարձրացվեց անգլիական պառլամենտում:

Այսպիսով ավարտվեց Մեծ Բրիտանիայի կողմից Հայկական հարցի միջազգայնացումից ի վեր տրված ոչ միայն քաղաքական խոստումներից հրաժարումը, այլև հայերի բնաջնջման հետևանքով կրած նյութական պատասխանատվության և փոխհատուցման հայ ժողովրդի իրավացիորեն ներկայացրած պահանջների ուրացումը:

Ի դեպ, Գերմանիայի կայսերական բանկում դեպոզիտացված 30 000 կգ ոսկու հարցը հայերի կողմից առաջին անգամ բարձրացրել է 1984 թ. Տիգրան Քույումճյանը Ժողովուրդների Մշտական դատարանում Հայոց ցեղասպանության հարցը քննարկելու ժամանակ, երբ վերջինիս հանձնվեց «Հայոց սեփականության բռնագրավումը և հայկական պատմական հուշարձանների ոչնչացումը որպես ցեղասպանության գործընթացի արտահայտություն» վերնագրով զեկույցը¹⁰⁹:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 62:

¹⁰⁹ Զեկույցի լրամշակված տարբերակը տես Dickran Kouymjian, "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", <http://armenianstudies.csufresno.edu/text/css>

2012թ.-ին Թուրքական պատմագիտական ընկերությունը (Türk Tarih Kurumu) հրապարակելով իր երկու տարի տևած հետազոտության արդյունքները, հանդես եկավ զեկույցով, որում հաստատվում էին վերը շարադրված փաստերը: Միևնույն ժամանակ զեկույցի հեղինակները խորհուրդ էին տալիս հատուցման հարցերով դիմել ոչ թե Թուրքիային, այլ «հայերի ոսկին որպես ռազմատուգանք բռնագրաված» Դաշնակից պետությունների կառավարություններին¹¹⁰:

Այսպիսով, մեծ տերությունները, ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանը վերջնական լուծարման ենթարկեցին Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության հարցը, իսկ արդարությանն ու փոխհատուցմանը հասնելու հայության ջանքերը մնացին անհետևանք:

Բայց և այնպես, բռնազավթված ունեցվածքի նկատմամբ հայության իրավունքների վերականգնման ուղղությամբ տարված անցած տարիների այս փորձն ու դասերն անպայման պետք է հաշվի առնվեն մեր հետագա պայքարում:

¹¹⁰ *Lost Armenian gold located by Turkish Historical Society* <http://www.hurriyetdailynews.com/PrintNews.aspx?PageID=383&NID=23794>

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

Ցեղասպանությունը ոչ միայն որևէ էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջումն է, այլև՝ նրա մշակութային ժառանգության (հոգևոր և նյութական արժեքների ամբողջություն) ոչնչացումը, քանի որ էթնոս կամ ժողովուրդ հասկացությունն ամբողջական իմաստ և նկարագիր է ստանում իր ստեղծած մշակութային արժեքներով: «Մշակութային ժառանգության ոչնչացումը բերում է ինքնության ոչնչացման. սպանված մարդը մեկն է մեզանից, ոչնչացված մշակութային կոթողը՝ մենք բոլորս ենք, կարծես չենք էլ եղել պատմության մեջ», - ասում է անգլիացի հետազոտող Պամելա դե Կոնդապան¹¹¹:

«Ցեղասպանություն» հասկացության ձևակերպումը առաջին անգամ տրվել է քրեական և միջազգային իրավունքի մասնագետ Ռ. Լեմկինի «Առանցքի տերությունների կառավարումը օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ¹¹² : Համադրելով հունարեն *genos* (ռասա կամ ցեղախումբ) և լատիներեն *cide* (սպանել) բառերը, նա կազմել է «գենոցիդ» եզրը՝ սահմանելով այն ոչ միայն որպես էթնիկ կամ կրոնական խմբի ֆիզիկական բնաջնջում, այլև՝ նրա ազգային, հոգևոր մշակույթի ոչնչացում: Ռաֆաել Լեմկինի «գենոցիդ» եզրն է ընկած ՄԱԿ-ի 1948թ. «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հիմքում: 20-րդ դարի առաջին այդպիսի հանցագործություն էր, Լեմկինի կարծիքով, Հայոց Մեծ Եղեռնը, որն անպատիժ էր մնացել:

Դեռևս 1933 թ. Մադրիդում կայանալիք քրեական օրենսդրության ունիֆիկացիային նվիրված գիտաժողովի համար երիտասարդ իրավաբանը պատրաստել էր մի գեկույց, որում առաջարկվում էր միջազգային օրենսդրության սահմաններում դիտարկել 2 տեսակի հանցագործություն. բարբարոսություն, որի

¹¹¹ de Condapa P., «Destroying Heritage, Destroying Identity», www.traumwerkstanford.edu

¹¹² Lemkin R., *Axis Rule in Occupied Europe*, Washington, 1944.

դրսևորումներն են կոտորածները, պոգրոմները և / կամ էթնիկ և կրոնական խմբերի հանդեպ տնտեսական խտրականության կիրառումը. վանդալիզմ, որն արտահայտվում է մշակութային և գեղարվեստական արժեքների ոչնչացման գործողություններում: Նշված գեկույցում, ըստ էության, առաջին անգամ քննարկման առակա էր դառնում «մշակութային ցեղասպանություն» եզրը: Հետագայում, երբ ՄԱԿ-ում քննարկվում էր ցեղասպանության մասին կոնվենցիան, Լեմկինը ընդհանուր տեքստի մեջ ներառել էր նաև «մշակութային ցեղասպանություն» հասկացությունը՝ Նախագծում վերջինիս վերաբերող սահմանումներն էին.

ա) Խմբի երեխաների բռնի տեղափոխումն այլ խմբեր:

բ) Այն մարդկանց բռնի և սիստեմատիկ արտաքսումը, ովքեր ներկայացնում են տվյալ մշակութային խումբը:

գ) Մայրենի լեզվի օգտագործման արգելումը նույնիսկ նեղ շրջանակներում:

դ) Մայրենի լեզվով լույս տեսած գրքերի կամ կրոնական աշխատությունների սիստեմատիկ ոչնչացումը և վերահրատարակելու արգելքը:

ե) Պատմական ու կրոնական հուշարձանների սիստեմատիկ ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակով, պատմական, գեղարվեստական, կրոնական արժեք ունեցող փաստաթղթերի կամ կրոնական ծեսերում օգտագործվող առարկաների ոչնչացումը և տարրալուծումը (այսինքն՝ գրքերի, մշակութային և հոգևոր արժեքների ոչնչացումը, մայրենի լեզվի օգտագործման արգելքը, հետապնդվող խմբից երեխաների ստիպողաբար փոխանցումը այլ խմբերին)¹¹³:

Մշակութային ցեղասպանությունը բնորոշող և դատապարտող վերոնշյալ սահմանումները թեպետ կոնվենցիայի վերջնական տարբերակում տեղ չգտան, սակայն ժամանակակից միջազգային իրավունքում հաստատագրվեցին որպես միջազգային իրավական պարտավորություններ, որոնք վերաբերում են մշա-

¹¹³ Lyndel V. Protz, "Ethnocide", *Encyclopedia of Genocide and Crimes against Humanity*, [ed. in chief Dinah L. Shelton], vol. 1, Thomson Gale, 2005, p. 309.

կութային ժառանգության պահպանմանն ու դրանց ոչնչացման համար պատասխանատվության ենթարկելուն¹¹⁴:

Այնուամենայնիվ, բազմաթիվ մասնագետներ համարում են, որ «գենոցիդ» հասկացությունը պետք է ընդգրկի նաև «մշակութային ցեղասպանություն» ձևակերպումը: Արքանզասի համալսարանի սոցիոլոգիայի պրոֆեսոր Սեմյուել Թոթթենը, օրինակ, խոսելով հայոց Մեծ եղեռնի մասին, հատուկ առանձնացնում է նաև հայկական մշակութային հուշարձանների հանդեպ գործադրված վանդալիզմը, որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս¹¹⁵:

Կանադայի Թագավորական ռազմական քոլեջի պրոֆեսոր Սարա Մեհարզը շրջանառության մեջ է դրել «իդենտիցիդ» (identicide) և «մշակութային կանիբալիզմ» տերմինները (համապատասխանաբար՝ ինքնության սպանություն և ուրիշի մշակութային արժեքների յուրացում)¹¹⁶ :

Ժամանակակից մշակութաբանությունը դիտարկում է մշակութային ցեղասպանությունը (էթնոցիդ) որպես որոշակի քաղաքականություն և գործողությունների այնպիսի ամբողջականություն, որոնք նպատակ ունեն ոչնչացնել առանձին խմբի ինքնությունը՝ ոչ պարտադիր ֆիզիկապես վերացնելով այն: Ինքնության ոչնչացմանը կարելի է հասնել խմբի քաղաքական և սոցիալական ինստիտուտները վերացնելով (մշակույթ, լեզու, ազգային արժեքներ, կրոն, տնտեսական կառույցներ)¹¹⁷:

Խմբի մշակութային ժառանգության լիակատար ոչնչացումը կհանգեցնի տվյալ խմբի անհետացմանը մարդկության համ-

¹¹⁴ The Final Act of the intergovernmental conference on the protection of cultural property in the event of armed conflict, Hague, 1954. 2003թ. հոկտեմբերի 17-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընդունվեց Հայտարարություն մշակութային ժառանգության միառմամբ ոչնչացման վերաբերյալ, The General Conference of the United Nations Educational, Scientific and Cultural Organization meeting in Paris at its thirty-second session in 2003.

¹¹⁵ Totten S., "Genocide: A Primer for Students in Grades 8-12", *Social Sciences Record* 24, № 2, 1987, p. 9-10.

¹¹⁶ Meharg S., «Identicide and Cultural Cannibalism: Warfare's Appetite for Symbolic Place», *Peace Research Journal*, 33:3, November, 2001, pp. 89-98.

¹¹⁷ Genocide and Crimes Against Humanity. *Etnocide*, www.eNotes.com

ընդհանուր հիշողությունից, ինչպես և նրա կենսագործունեության բոլոր հետքերի վերացմանը: Հենց այս կոնտեքստում է Փամելա դե Կոնդապան նշում, որ մշակութային ժառանգության ոչնչացումը նշանակում է ժողովրդի, որպես ամբողջականություն, ինքնության վերացում:

Նույնիսկ թիրախային խմբի անդամների ֆիզիկական բնաջնջումից հետո նրա թողած նյութական ժառանգությունը (պատմական հուշարձանները, հոգևոր կառույցները, գերեզմանոցները և այլն) շոշափելի և ներուժակ լեզվատիմության աղբյուր են հաղիսանում՝ պատմական պահանջատիրության պարագայում¹¹⁸: Մյուս կողմից մշակույթի «վերամեկնաբանումը» (մշակույթի բռնի յուրացումը մեկ այլ խմբի կողմից, պատմության վերաշարադրումը), ըստ Կոնդապայի, ոչ այլ ինչ է, քան ցեղասպանությունն իրականացրած խմբի «լեզվատիմությունն» ապահովելու փորձ¹¹⁹:

Այսպիսով, մշակութային ցեղասպանությունը կարևոր բաղկացուցիչ մաս է կազմում ցեղասպանության, որը չի ավարտվում ազգի սոսկ ֆիզիկական բնաջնջմամբ: Օսմանյան կայսրության, Թուրքիայի Հանրապետության, Ադրբեջանի և նրան բռնակցված հայկական պատմական գրեթե բոլոր տարածքներում հայկական մշակութային ժառանգության (պաշտամունքային հուշարձաններ, գրադարաններ, դպրոցներ, դպրեվանքեր, եզակի ձեռագրերի բազմահազար հավաքածուներ և այլն) կանխամտածված ու հետևողական ոչնչացումը, որը լիովին համապատասխանում է մշակութային ցեղասպանություն բնորոշմանը և հայերի դեմ իրագործված ցեղասպանության բաղկացուցիչ մասն է կազմում, հենց դրա դասական օրինակն է և շարունակվում է առ այսօր:

«Մայիսակ ջարդը» իրականացվում է 3 կարևոր ուղղություններով.

ա) խտրական քաղաքականություն Թուրքիայի հայ փոքրամասնության նկատմամբ,

¹¹⁸ de Condapa P., «Destroying Heritage, Destroying Identity» www.traumwerk.stanford.edu

¹¹⁹ Նույն տեղում:

բ) հայկական մշակութային կոթողների ոչնչացում, անտեսում կամ յուրացում,

գ) ցեղասպանության ժխտման պաշտոնական քաղաքականություն:

Անառարկելի փաստերը վկայում են, որ հայ ժողովրդի հանդեպ գործադրվող կոտորածների ու զանգվածային ջարդերի տարիներին երիտթուրքերի կառավարությունը ձգտում էր ոչնչացնել հայկական քաղաքակրթության ամեն մի նյութեղեն ապացույց: Թալեաթ փաշայի հրամանագրերից մեկում ասվում էր. «Հարկավոր է ամեն ինչ անել ոչնչացնելու համար «Հայաստան» անունն անգամ Թուրքիայում¹²⁰: Այդ քաղաքականության տրամաբանական հետևանքն էր հայ ժողովրդի մշակույթի, արվեստի շատ արժեքների ոչնչացումը: Հայկական Մեծ եղեռնին զոհ գնացին ժողովրդի խոշոր հատվածը և նրա միտքն ու խիղճը հանդիսացող տաղանդավոր գրողներ, արվեստագետներ, մտավորականներ: Հայ մշակույթի այդ փայլուն համաստեղության մեջ էին Գրիգոր Ջոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Երուսանը և շատ ուրիշներ: Երիտթուրքերը ոչնչացրին, հրի մատնեցին ու մոխրակույտերի վերածեցին նաև նրանց արխիվները, որպեսզի ոչ մի հետք չմնա նրանց հարուստ ու բովանդակալից կյանքից: Այն, ինչ հրաշքով փրկվել է և հասել մեզ, մասն է միայն նրանց հարուստ ստեղծագործական ժառանգության:

Հայտնի է, որ թուրքական բռնատիրության պայմաններում հայկական վանքերն ու եկեղեցիները պարզ աղոթատեղիներից և կրթամշակութային օջախներից վերածվել էին նաև հասարակությանը համախմբող, սատարող կառույցների՝ կատարելով ազգապահպանության կարևոր գործառույթ: Արևմտահայ իրականության մեջ եկեղեցին ու նրա գլուխ կանգնած պատրիարքը հաղիսանում էին այն առանցքը, որի շուրջ կենտրոնանում էին բնակչության համար կենսական կարևորություն ունեցող խնդիրները և դրանց լուծմանը միտված մոտեցումները: Այս իմաստով հայկական վանքերի ու եկեղեցիների գոյությունն Օսմանյան

¹²⁰ *Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М.Г.Нерсисяна, Ереван, 1983, с. 474.*

կայսրությունում և դրանց այդչափ կարևոր դերակատարությունը հայերի ազգային-մշակութային կյանքի զարգացման գործում արդեն իսկ դարձել էին անցանկալի և նույնիսկ դիտվում էին որպես վտանգ ինչպես մուսուլման հասարակության մեծամասնության, այնպես էլ օսմանյան իշխանությունների կողմից:

Կոտորածները, սկսած համիդյան ջարդերից, հարմար առիթ էին հայկական մշակութային արժեքների զանգվածային ոչնչացման համար: Ինչպես իրավացիորեն նկատել է դեպքերի ժամանակակից անգլիացի հոգևորական, հասարակական գործիչ Մալքոլմ Մաքքոլը, հայերի դեմ ուղղված համիդյան քաղաքականությունն առաջին հերթին պատերազմ էր նրանց կրթության, մշակույթի և դավանանքի դեմ: Ժամանակի բազմաթիվ վավերագրեր ու տեղեկագրեր, մասնավորապես օտարերկրյա դիվանագետների վկայությունները փաստում են, որ համիդյան կոտորածների ընթացքում հայկական մշակութային արժեքների ոչնչացումն իրագործվել է պետական քաղաքականության մակարդակով, կենտրոնական և տեղական իշխանությունների անմիջական հրահրմամբ ու հովանավորությամբ¹²¹:

Բազմաթիվ օրինակներ և վկայություններ փաստում են, որ կոտորածների ընթացքում հայկական մշակութային հաստատությունների կողոպուտն ու ոչնչացումն ուղղորդել են թե՛ կենտրոնական ու տեղական իշխանությունները, թե՛ հոգևորական շրջանակները, թե՛ կանոնավոր գործը և թե՛ մուսուլման ազգաբնակչության լայն զանգվածները: Ատելության ու մոլեռանդության դրսևորումներն առանձնակի ընդգծված են եղել հայերի հոգևոր հաստատությունները պղծելու և ավերածությունների ենթարկելու թուրքական վարքագծում, որը հաճախ դրսևորվել է կոնկրետ խորհրդանշական գործողություններով, ինչպիսիք են օրինակ՝ խաչի ու զանգի տապալումը, եկեղեցական, սրբազան իրերի պղծումը և այլն: Դրանով իսկ թուրքերը ցանկացել են ավելի նսեմացնել թիրախ դարձած էթնիկ հանրու-

¹²¹ Համիդյան շրջանի մշակութային հուշարձանների ոչնչացման մասին տես Ս. Պարսամյանի հոդվածը <http://www.genocide-museum.am/arm/articles-Seda-Parsamyan.php>

թյան դավանական զգացումները: Օրինակ, Վանի նահանգից «Արարատ»-ի թղթակիցը հայտնում է, թե ինչպես են զինվորներն ու քրդերի խմբերը ձուլելու համար քաղաքներ տեղափոխել նահանգի բազմաթիվ վանքերից ու եկեղեցիներից կողոպտված եկեղեցական սպասքը, հնագույն ձեռագրերի արծաթե կազմերը, թանկարժեք շուրջառները: Ըստ 1896թ. տեղեկագրերից մեկի՝ «Նարեկայ վանուց մեջը գտնուած կենաց Փայտի մասունքն եւ ուրիշ զանազան մասունքներն ալ գերուեցան. իսկ Սր. Գրիգոր Նարեկացիի գերեզմանն ալ խորտակուեցաւ: Այսօր զօրքեր եւ ուրիշ թիւրք կամ քիւրդ աւարառուներն կը բերեն ու կը ծախեն կամ ջարդել (ձուլել) կը տան արծաթեայ եւ ոսկեայ ծանրակշիռ սկիհներ, խաչեր, գաւազաններ, թագեր, բուրվառներ, արծաթապատ կամ ոսկեպատ աւետարաններ եւ այլն»¹²²:

Կոտորածների ընթացքում թուրքերն ամենուր առանձնակի վայրագությամբ են կործանել հոգևոր-մշակութային հաստատությունները՝ կից շինություններով հանդերձ, և դաժանաբար սպանել քահանաներին ու վանականներին՝ որպես այդ հաստատությունների առաջնորդների՝ սպանությունները զուգակցելով խոշտանգումներով, ծանակումներով ու ողջակիզմամբ: Հայկական վանքերն ու եկեղեցիները հաճախ օգտագործվել են որպես հավաքատեղի սպանության, կանանց անարգման կամ ողջակիզման համար: Նշենք, որ «Holocaust» (Ողջակիզում) եզրն առաջին անգամ օգտագործվել է հենց համիդյան ջարդերի օտարերկրյա ականատեսների վկայություններում՝ նկարագրելու համար հայերի դեմ գործադրվող վայրագությունների սարսափելի դրսևորումները¹²³:

¹²² Նույն տեղում:

¹²³ «The term “holocaust,” from the Greek holokauston and in lower case, was first used by J. Castell Hopkins (1896) and Marion Harland (1897) to describe the “Mahometan cruelty” of Sultan Hamid II in the context of the Armenian massacres, see J. Castell Hopkins, *The Sword of Islam, or Suffering Armenia* (Brantford, ON: BradleyGarretson, 1896), 313; Marion Harland, *Under the Flag of the Orient: The Thrilling Story of Armenia* (Philadelphia: Historical Publishing, 1897), 415. On 19 May 1896, the Sydney Morning Herald reported that “a fearful holocaust was executed locally” by Turkish officials”, տես Tatz, Colin “Genocide Studies: An

Դեռևս 1912-1913թթ., թուրքական կառավարությունը որոշակի հետաքրքրություն էր հանդես բերում Օսմանյան կայսրության տարածքում գործող հայկական բոլոր վանքերի ու եկեղեցիների թվի և վիճակի վերաբերյալ: Շատ պատմաբաններ գտնում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Թուրքիայի բոլոր հայկական վանքերի և եկեղեցիների թվով ու վիճակով թուրքական կառավարության հատուկ «հետաքրքրությունը» որոշակի կապ է ունեցել արևմտահայության ֆիզիկական բնաջնջման դիվային ծրագրերի հետ¹²⁴:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը, թուրքական ՆԳՆ որոշակի պահանջով ու ճնշումով, արաբատառ թուրքերենով բարեխղճորեն պատրաստում և ներկայացնում է հայկական շուրջ 1500 վանքերի և եկեղեցիների լրիվ ցուցակները (շրջան առ շրջան՝ համաձայն վիլայետների, սանջակների և կազանների), ինչպես նաև համապատասխան ծանուցագրեր՝ «թաքրիքներ» (ցույց տալով վանքերի և եկեղեցիների տեղագրական վայրերը, անունները և կառուցման թվականները):

Կ. Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից առավել մանրամասն կազմված ցուցակի համաձայն 1912-13 թթ. դրությամբ Օսմանյան կայսրության տարածքում կար 2039 գործող եկեղեցի, չհաշված Կ. Պոլսի, ինչպես նաև Հայ Կաթոլիկ և Հայ Բողոքական եկեղեցիներին պատկանող գույքը): 1992 թ. դոկտոր Ռայմոն Գևորգյանը հրատարակել էր առավել ամբողջական ցուցակ, որում նշվում էին 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 դպրոց¹²⁵:

Եղեռնի տարիներին շուրջ 2150-ի է հասնում կողոպտված, թալանված, հրկիզված եկեղեցիների թիվը, իսկ նահատակ

Australian Perspective," *Genocide Studies and Prevention: An International Journal* (2011), Vol. 6: Iss. 3: Article 5, p. 242 <http://scholarcommons.usf.edu/gsp/vol6/iss3/5>

¹²⁴ Տե՛ս՝ Ա. Ն. Սաֆրաստյան, «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների միևնույնության ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիքները (1912-1913)», *Էջմիածին*, Ա (հունվար), 1965, էջ 42:

¹²⁵ Kouyoumjian D., «The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide», in *A Crime of Silence: The Armenian Genocide*, London, 1985; Raymond H. Kévorkian et Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du Génocide*, Paris: Arhis, 1992.

հոգևորականների թիվը՝ 4000 հոգուց ավելի:

Ինչպես արդեն նշել էինք, հայերի շարժական և անշարժ գույքերի և կալվածքների բռնագրավումը, կողոպուտը և յուրացումը «կանոնավոր» իրականացնելու համար, ներքին գործերի նախարարությունը, ի լրումն «Լքյալ գույքի մասին» (*Emvâl-i metruke kanunu*) ժամանակավոր օրենքի տեղական իշխանություններին է ուղարկում մի շարք ծածկագիր հեռագրեր, շրջաբերականներ և լրացուցիչ հրահանգներ «Թալիմաթնամե»-ներ, փորձելով վերահսկողության տակ պահել լայնածավալ այդ թալանի գործընթացը: Մասնավորապես, նշված օրենքի առանձին հոդվածով «կանոնակարգվում» էր վանքերի ու եկեղեցիների՝ իրենց ունեցվածքով բռնագրավման ընթացքը. «Հոդված 6 – եկեղեցիների մեջ եղած գույքերը, նկարները, Սուրբ Գրքերը պետք է արձանագրվեն, դրանց պիտի կցվեն տեղեկագրեր և պահվեն տեղում: Երբ տարագրված բնակչությունը որևէ տեղ կհաստատվի, յուրաքանչյուր գյուղին պատկանող եկեղեցական ունեցվածքը պետք է նրան ուղարկվի»¹²⁶:

«Վարչական» թալանի հանձնախմբերը ենթակա էին ներքին գործերի նախարարությանը և յուրաքանչյուր 15 օրը մեկ պարտավոր էին տեղեկագրեր ներկայացնել իրենց գործունեության մասին:

Սակայն «Լքյալ գույքերի» օրենքը, որը պիտի պաշտպաներ տեղահանված հայերի ինչքերը, Ջավեն պատրիարքի վկայությամբ «բնավ չգործադրուեցա... Այսպես, ժողովուրդին բոլոր շարժական ստացումաձքը կը փճանար կամ լաւ եւս թուրքերուն ձեռքը կ'անցներ: Կառավարութիւնը ոչ մէկ տեղ հոգածու գտնուեցաւ այդ գոյքերը հաւաքելու կամ դրամի վերածելու...»¹²⁷:

Հայկական համայնքային բարեգործական հիմնադրամների և ընկերությունների սեփականությունը փոխանցվել էր Բարեգործական ֆոնդերի վարչության (այսպես կոչված վակու-

¹²⁶ Salahaddin Kardeş, *Tehcir ve Emval-I Metruke Mevzuatı* (Ankara: Maliye Bakanlığı Strateji Geliştirme Başkanlığı), 2008, s.24-30.

¹²⁷ Աւետիս Յարութիւնեան, «Արեւմտեան Հայաստանի եկեղեցիների ու վանքերի բռնագրավումը եւ ոչնչացումը ունեցումաձքի փոխհատուցման իրաւական հիմքերը» <http://akunq.net/am/?p=13707>

Ֆային գերատեսչության) հաշվեկշռին, իսկ դպրոցների և վանքերի նյութական արժեքների օգտագործման իրավունքները հանձնվել էին կրթության նախարարությանը:

Նույն Ջավեն պատրիարքի 1915թ. հուլիսի 13-ի և օգոստոսի 15-ի 2 նամակների հաղորդումներից պարզվում է, որ «Եկեղեցիներ ու վանքեր կողոպտուած, քանդուած ու սրբապղծուած են: ... Եկեղեցիները արդէն կողոպտուած են եւ մզկիթի, ախոռի կամ ուրիշ բաներու վերածուած են: Արդէն Պոլսոյ հրապարակներուն վրայ, սկսած են ծախսուիլ հայ եկեղեցիներու անօթները եւ այլ գոյքեր...»¹²⁸:

Նույնիսկ Պողոս Նուբար փաշայի և Ավետիս Ահարոնյանի 1919թ. Փարիզի վեհաժողովին ներկայացված թերի ցուցակի համաձայն ամբողջությամբ կամ մասամբ կործանված կրոնական և ազգային կալվածքների ցանկում արձանագրված են 83 եպիսկոպոսական աթոռներ՝ առաջնորդարաններ, 1860 եկեղեցիներ ու մատուռներ, 229 վանական հաստատություններ, 26 բարձրագույն վարժարաններ, 1439 դպրոցներ և 42 որբանոցներ)¹²⁹: Վե-րոհիշյալ թվերի մեջ չեն մտնում Կ.Պոլսի և արվարձանների 38 եկեղեցիները, Պաղեստինի և Սիրիայի մեջ գրեթե անվթար մնացած 18 վանքերն ու եկեղեցիները: Այդ հաշվարկի մեջ չեն նաև 1921 թվականի Կարսի պայմանագրով Թուրքիային անցած 93 ավերված եկեղեցիները:

Վանքերն ու եկեղեցիները իսկական զանաքաններ էին և ճոխ մատենադարաններ, ունեին հին, անթիվ, բազմատեսակ և թանկարժեք առարկաներ և արվեստի հարուստ հավաքածուներ: Պատկերացնելու համար թալանի իրական արժեքը, դրանք պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբի.

1) Ծիսական նպատակներով կամ եկեղեցական արարողությունների ընթացքում գործածվող արծաթե, ոսկե, պղնձե, սրբազան առարկաներ՝ սկիհներ, խաչեր, վարդապետական գավազաններ, բուրվառներ, խնկամաններ, արծաթապատ ավետարաններ, մյուռոնի ամաններ, աղավնիներ, տաշտեր, ջրամաններ, սափորներ, քշոցներ, աշտանակներ, ջահեր, կանթեղներ, սրբա-

¹²⁸ Նույն տեղում:

¹²⁹ Նույն տեղում:

տուփեր, մասնատուփեր, մասունքի պահարաններ, գույքի և շուրջառի ճարմանդներ, արծաթե վականներ և գոտիներ, մատանիներ, ծնոդաներ, թանաքամաններ և այլն:

Գ. Մեսրոպի մոտավոր հաշիվներով 1915թ. նախօրյակին հայ կրոնական հաստատությունների մեջ գտնված միայն արծաթյա և ոսկյա սպասքների ընդհանուր քանակը պետք է լիներ առնվազն 600 հազ. կտոր:

Այսօր, եկեղեցական արվեստի և հնագիտական տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում այս խմբին պատկանող մետաղագործական առարկաները:

Ներկայումս, մեզ հասած նմանատիպ առարկաները, որոնք համախմբված են ազգային մեր թանգարաններում, Էջմիածնի, Երուսաղեմի, Վենետիկի, Աթիլիասի, Վիեննայի և Զմմառի վանքերում, ինչպես նաև Եվրոպայի և ԱՄՆ-ի անձնական հավաքածուներում, որոշ գաղափար են տալիս անցյալի մեր գեղարվեստի գանձերի մասին:

2) Ասեղնագործ և ձեռագործ իրեր՝ վարագույներ, սկիհի ծածկոցներ, Ավետարանի խաչի և խորանի նուրբ լաթեր, բռնիչներ, սփռոցներ, խաչվառներ, սրբիչներ, շուրջառներ, սաղավարտներ, թագեր, վականներ, փուրուրարներ, բազպաններ, շապիկներ, ուրարներ, հողաթափեր, ժանյակներ, դիպակներ:

3) Գորգեր և կարպետներ՝ վանքերն ու եկեղեցիները չափազանց հարուստ էին հին ու թանկարժեք գորգերով ու կարպետներով:

4) Փայտափորագրական առարկաներ՝ դռներ, գահեր, աթոռներ, սեղաններ, գրակալներ, խաչեր, սյուներ, խոյակներ, մասունքներ, փայտյա պահպանակներ, տուփեր և այլն:

5) Սրբերի մասունքներ և քրիստոնեական այլ նվիրական առարկաներ՝ Կենաց փայտ կամ խաչափայտ, Նոյի տապանի մասունքներ, Հիսուսի խաչի բևեռներ, Գր. Լուսավորչի, ինչպես նաև հայ և օտար սրբերի մասունքներ և այլն, որոնք վայելում էին մեծարանք, համարվում էին սրբազան, չարխափան և հրաշագործ:

6) Ցեղասպանության տարիներին ոչնչացվեցին մեծ քանակությամբ հայկական ձեռագրեր, հնագույն տպագիր գրքեր և

մանրանկարչական գործեր, որոնք պահվում էին բազմաթիվ վանքերում և եկեղեցիներում: Տասնյակ հազարավոր հայերեն ձեռագրեր իսպառ ոչնչացել են, իրենց հետ տանելով մեր հի- նավուրց պատմության, գրականության, ճշգրիտ գիտություն- ների և վերջապես արվեստի գոհարներ:

Կոտորածների և տեղահանության ժամանակ իրենց բնա- կավայրերից հեռացող հայերը հաճախ առաջին անհրաժեշտու- թյան իրերի փոխարեն իրենց հետ վերցրել են ձեռագիր մատ- յաններ՝ փրկելու համար մարդկային մտքի այդ արգասիքները¹³⁰: Շատ ձեռագրեր պահվել են թաքստոցներում, սակայն թուրքերը, հայտնաբերելով դրանք ոչնչացրել են: Հրաշքով փրկված ձեռա- գրերի մի մասը թուրքերը վաճառել են Եվրոպայում, իսկ շատ ձեռագրերի ու գրքերի թերթերն ու էջերը Մուշի, Կարինի և այլ վայրերի շուկաներում գործածել են որպես փաթեթավորման թուղթ:

Հայ գաղթականների անձնագոհության, մտավորականու- թյան ջանքերի շնորհիվ, այնուամենայնիվ, Արևմտյան Հայաս- տանի տարածքում գտնվող ձեռագրերի մի մասը փրկվել է ոչնչացումից: Այդպիսիք, ինչպես նաև հայկական այլ ձեռագրեր պահվում են Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում, Էջմիածնի և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարաններում, Երու- սաղեմի և Կ.Պոլսի հայոց պատրիարքարաններում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների մատենադարաններում, աշխարհի խոշորագույն գրադարաններում և թանգարաններում:

Թեև ոչնչացված ձեռագիր մատյանների թվի մասին կան որոշ տվյալներ (Վասպուրականում՝ շուրջ 3000, Տարոնում՝ շուրջ 2000, Կեսարիայում և շրջակայքում՝ 700, Անկարայում և շրջակայքում՝ ավելի քան 300, Արմաշում՝ շուրջ 250, Սեբաս- տիայում և շրջակայքում՝ շուրջ 170 և այլն), այնուամենայնիվ եղեռնի ժամանակ թուրքերի կողմից ոչնչացված հայկական հոգևոր մշակույթի այդ հուշարձանների ճշգրիտ թվաքանակը անհայտ է, քանի որ որևէ ամփոփող տեղեկություն դրա վերա- բերյալ մեզ հայտնի չէ: 1915 թվականին նախորդող տարիներին

¹³⁰ Մշո ճառընտիրի փրկության պատմությունը ամենափայտնին է այդ շարքում:

Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում գտնվող հայերեն ձեռագրերի մասին դժբախտաբար չկա և ոչ մի ընդհանուր ցուցակ: Ձեռագրերի նկարագրման, ցուցակագրման և արժեքավորման աշխատանքը նոր էր ձեռնարկվել 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին: Այդ պատճառով կարելի է ասել, որ միայն Վասպուրականում, որտեղից ավելի ստույգ տեղեկություններ ունենք, մեր ձեռագրական կորուստների թիվը հասնում է մի քանի հազար գրչագրի¹³¹:

7) Արվեստի այլ գործեր և սրբազան պատկերներ՝ հին և միջնադարյան ժամանակներից պահպանված և ժողովրդական ու ավանդական մեծ համրավ ձեռքբերած նկարներ, որմանկարներ, պատկերաքանդակներ, խաչքարեր, տապանաքարեր, վիմական արձանագրություններ և այլն:

8) Վանական և եկեղեցական կալվածքներ՝ այդ թվում նաև վարժարաններ, իջևաններ, տներ, խանութներ, այգիներ, պարտեզներ, անտառներ, ջրաղացներ, որոնք իբրև հասույթ ծառայում էին վանքերին, վանականներին և եկեղեցական հաստատություններին: Ըստ Գ. Մեսրոպի, եթե ժամանակին յուրաքանչյուր վանք և եկեղեցի 10-20 մասունք ունենար «Հայոց կորսնցուցած թանկագին մասունքներուն թիւը երեսուն հազարը կ'անցնի»: Նրա հավաստմամբ՝ «Թուրք բարբարոսը եթե միայն հայ վանքերէն ու եկեղեցիներէն հաւաքէր բազմադարեան նկարները, հնութիւնները, մասունքները, գեղարուեստական առարկաները, յիշատակարանները, գերեզմանաքարերը, գրչագիրները, հին գորգերը, հնակերտ գործուածքները, գոհարազարդ, գոհարակուռ առարկաները եւ բոլորը ծախէր քաղաքակիրթ պետութեան մը՝ եթէ ինք չէր ուզեր կամ չէր համարձակեր պահել զանոնք, մեծարժէք թանգարան մը պահպանած պիտի ըլլար մարդկային քաղաքակրթութեան համար»¹³²: Կորստի մեծությունն այնքան ահավոր է, որ չափազանց դժվար է որոշել եկեղեցական ու վանական հաստատությունների մշակութային և արվեստի գանձերի նյութական ամբողջական արժեքը և դրանց համապա-

¹³¹ St'g' U. Քոլանջյան, «Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները», *Էջմիածին*, Բ-Գ-Դ (փետրվար – մարտ- ապրիլ), 1965, էջ 96-107:

¹³² Աւետիս Յարութիւնեան, նշվ. աշխ.:

տասխան հաշիվները:

Ըստ Լևոն Վարդանի, մեր ընդհանուր կորուստը կկազմի աստղաբաշխական այնպիսի մի գումար, որ ընկալելու համար «անգոր պիտի մնայ ուղեղը պատմութեան...»¹³³: Հ. Ղազարյանի մոտավոր հաշվարկների համաձայն, Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի մյուս վայրերի մեջ գտնված հայ վանական ու եկեղեցական շենքերի կամ համալիրների շարժական և անշարժ կալվածքների, դրանց մեջ հավաքված ոսկյա, արծաթյա, պղնձյա ապրանքների և առարկաների, ձեռագրերի, արվեստի զանազան գործերի և զանազան հնությունների մոտավոր արժեքն իր ժամանակաշրջանում կազմել է՝ նվազագույնը 1.000.000.000 (1 մլրդ) դոլար: Իսկ հայերի նյութական ընդհանուր կորուստը անշուշտ իր ժամանակաշրջանում գնահատվում էր 5.000.000.000 (5 մլրդ) ոսկի դոլարով¹³⁴: Ըստ Երվանդ Խաթանասյանի հաղորդումների, կորուստը գնահատվում է շուրջ 3 մլրդ 750 մլն դոլար¹³⁵:

Սակայն, հայկական հուշարձանների ոգեղեն արժեքների մեծ մասի կոդոպուտը հնարավոր չէ փոխարինել ոչ դոլարներով և ոչ էլ ձուլակտոր ոսկու հազարավոր կիլոգրամներով:

Հանրապետական Թուրքիան չի ընդունել և շարունակում է ժխտել հայերի ցեղասպանության փաստը: Ավելին, ժամանակակից Թուրքիայում ցեղասպանության ժխտումը բարձրացվել է պետական քաղաքականության աստիճանի: 2000թ. աշնանը Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի նիստում որոշում ընդունվեց այն մասին, որ Հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրը այսուհետ համարվում է ազգային անվտանգության խնդիր: Ի կատարումն Ազգային անվտանգության խորհրդի որոշումների՝ 2001թ. մայիսին ստեղծվեց հատուկ մարմին, որի վրա դրվեց Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի դեմ մղվող պայքարը դեկլարելու և համակարգելու խնդիրը: Այն անվանվեց «Ցեղասպանության վերաբերյալ անհիմն պնդումների դեմ պայքարը համակարգող խորհուրդ» («Asilsiz

¹³³ Լևոն Վարդան, *Հայկական Տասնհինգը և Հայերու Լքեալ Գոյքերը*, Պեյրուք, 1970, էջ 321-322:

¹³⁴ Հայկազն Գ. Ղազարեան, *Ցեղասպանությունը*, Պեյրուք, 1968, էջ 212 և 217:

¹³⁵ Երվ. Խաթանասյան, *Հայոց թիվը*, Պոստրն, 1965, էջ 22-23:

Soykırım İddialarıyla Mücadele Koordinasyon Kurulu): Վերջինիս կազմի մեջ ներգրավվեցին տարբեր պետական գերատեսչությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ¹³⁶։Խորհրդի գործունեության գլխավոր նպատակը թուրք հանրությանը, դպրոցական տարիներից սկսած, Հայոց ցեղասպանության պնդումների «անհիմն» լինելու վերաբերյալ տեղեկությունների հաղորդումն ու ժխտողական գիտակցության ձևավորումն էր, ինչպես նաև արտերկրում պարբերաբար օրակարգ բերվող Հայոց ցեղասպանության ճանաչման ջանքերի չեզոքացումը։ Այն ֆինանսավորվում էր Թուրքիայի վարչապետի հիմնադրամից։Խորհրդի հիմնադիր Դ. Բահչելիից հետո այն ղեկավարել են «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) անդամներից Էրքան Մումջուն, Աբդուլլահ Գյուլը և Ջեմիլ Չիչերը¹³⁷։

Հայոց ցեղասպանության ուրացման նպատակով ստեղծված և կառավարության կողմից օժանդակվող հատուկ կազմակերպություններ զբաղվում են հայ ժողովրդի պատմությունը խեղաթյուրող և նենգափոխող բազմաթիվ գրքերի և բրոշյուրների հրատարակմամբ և տարածմամբ, թուրքերին են վերագրվում հայերի հոգևոր և մշակութային արժեքները, նպատակալաց կերպով ոչնչացվում են հայկական ճարտարապետական հուշարձանները, խտրական վերաբերմունքի են արժանանում հայկական կրթական օջախները փոքրաթիվ թուրքահայ գաղութում։ Հայ ժողովրդի, նրա պատմության և մշակույթի վրա զանգվածային այդ հարձակումը երկու գլխավոր նպատակ է հետապնդում. «ապացուցել», որ Արևմտյան Հայաստանը երբեք չի եղել հայերի բնօրրանը և, որ թուրքերը հայ ժողովրդի նկատմամբ չեն իրականացրել ցեղասպանություն։

1920-ական թվականից Թուրքիայում սկսվել է հայկական աշխարհագրական տեղանունների վերանվանումը, իսկ 1957 թ. ստեղծվեց հատուկ կազմակերպություն՝ «Անվանափոխման մաս-

¹³⁶ Սաֆրաստյան Ռ., «Թուրքիան Հայոց ցեղասպանության հարցը համարում է իր ազգային անվտանգության խնդիր», *Հնարավոր չէ 21-րդ դարում պատենշներ ստեղծել հայրենիների միջև...*, Երևան, 2003, էջ 41։

¹³⁷ St'u Zarakolu R., "Yeni hükümet ASİMKK'yi sürdürecektir mi?", 11.07.2011, <http://www.ozgur-gundem.com>

նագիտական կազմակերպությունը» (“Ad Değiştirme İhtisas Kurulu”) որը զբաղվում էր այդ գործով¹³⁸: Աղթամարը և Անին միակ հնություններն են, որոնք հիշատակվում են զբոսաշրջիկների ուղեցույցներում, այն էլ թրքացված ձևով, առանց նշելու նրանց հայկական ծագումը: Աղթամարը դարձել է Ակդամար «սպիտակ երակ» Անին՝ Անը «հուշ» իսկ բիբլիական Արարատը դարձել է Աղրեղաղ: Մուշի Առաքելոց վանքն, օրինակ հիշատակվում է (այն էլ Հայաստանից հաճախացած զբոսաշրջիկներին գրավելու համար- Ա.Հ.) տեղական զբոսաշրջական ուղեցույցներում որպես «Արաքա վենք»: Միակ բացառությունը թերևս Դիարբեքիրի Մ. Կիրակոս եկեղեցին է, որտեղ երեք լեզվով՝ հայերեն, քրդերեն և թուրքերեն առկա է պաշտոնական գրություն դրա հայկական լինելու մասին, և որտեղ, չհաշված Ստամբուլը, թույլատրված է եկեղեցական ծեսի կատարումը: Զեյթունը այժմ կոչված է Մուլեյմանլը, իսկ Հաճնը վերանվանվեց Մալմարեյլիի՝ «ի պատիվ» 1920 թվականի հոկտեմբերի ջարդը կազմակերպողի: Ըստ Ջորջան հաստատության տվյալների, Արևմտյան Հայաստանում վերանվանված է հայկական տեղանունների շուրջ 90 տոկոսը¹³⁹: Պարտադիր անվանափոխության են ենթարկվել այն քաղաքներն ու գյուղերը, որոնք ունեցել են «çan» և «kilise» (զանգ և եկեղեցի) բաղադրիչները: Նույն գործընթացից չի խուսափել և Ստամբուլը, որտեղ հիմնական թիրախ են հանդիսացել փողոցների կամ թաղամասերի հունարեն և հայերեն անվանումները¹⁴⁰:

ԵՊՀ համալսարանի դասախոս Լ. Մահալյանը, նշելով որ տեղանունները լեզվական համեմատաբար կայուն փաստ լինելուց բացի՝ ունեն պատմագիտական և քաղաքական արժեք, պնդում է. «Օսմանյան կայսրության, հետագայում նաև՝ Հանրապետական Թուրքիայի ղեկավար շրջանակները, շատ լավ հասկանալով տեղանունների ռազմավարական նշանակությունը, հետևողական քաղաքականություն են վարել Թուրքիայի սահմաններում գտնվող բնակավայրերի անուններն աղավաղե-

¹³⁸ Nalci A., “Tarihi unutturulma yolunda bir köşetaşı: isim değiştirme”, Agos, 22 Mayıs 2009.

¹³⁹ «Զարթոնք», 5 սեպտեմբերի 1983:

¹⁴⁰ Hür A., “Pangaltı ve Kurtuluş’ta milliyetçi sokak isimleri”, Agos, 22 Mayıs 2009.

լու և դրանք զանազան միջոցներով սեփականացնելու ուղղությամբ»¹⁴¹։ Երիտթուրքական իշխանությունները, գրում է Լ. Սահակյանը, չափազանց կարևորում էին «ոչ մահմեդական» տեղափոխները վերափոխելու գործը։ Կայսրությունում տեղափոխների համակարգված թուրքացմանն էր նպատակաուղղված 1913թ. մայիսի 13-ին ընդունված «Գաղթականների բնակեցման կանոնադրություն» («İskân-ı Muhacirin Nizamnâmesi») փաստաթուղթը։ Հաջորդ քայլը 1916թ. հունվարի 5-ին կատարեց երիտթուրքերի կառավարության ռազմական նախարար Էնվեր փաշան։ Ընդ որում, ոչ թուրքական անունների համակարգված փոփոխության միջոցառումներն արագացվում են պատերազմական ժամանակաշրջանում։ Թուրքական ռազմաքաղաքական իշխանություններին առաքված Էնվեր փաշայի հրամանագիրը պահանջում էր Օսմանյան կայսրության հայերեն, հունարեն և բուլղարերեն տեղանունները փոխել թուրքերենի։ Ուշագրավ այդ այդ հրամանագրի տեքստից մեջբերենք մի հատված.

1. Օսմանյան երկրում հայկական, հունական, բուլղարական և այլ ոչ մահմեդական ժողովուրդներին պատկանող նահանգի, գավառի, գյուղաքաղաքի, գյուղի, սարի, գետի... և այլ բոլոր անունների վերածումը թուրքերենի անհրաժեշտ է։ Արագորեն օգտվելով հարմար պահից՝ այս նպատակի իրականացման համար ձեր աջակցությունն ենք հայցում։

2. Ձեր իրավասության տակ գտնվող տարածքում զինվորական հրամանատարության և վարչական պաշտոնեության հետ միանալով՝ թող կազմվեն անվանափոխության համապատասխան ցուցակներ, և նահանգի, գավառի, գյուղաքաղաքի կենտրոններն ընդգրկող այս ցուցակները հնարավորինս շտապ մաս առ մաս ներկայացվեն Գլխավոր շտաբ։

Հավաքվող ցուցակներն ուսումնասիրելուց ու համանման անունները փոխհամաձայնությամբ փոփոխելուց հետո պետք է

¹⁴¹ Լուսինե Սահակյան, «Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում», URL to article: <http://blog.ararat-center.org/?p=284>

ուղարկվեն ներքին գործերի և կապի նախարարություններ՝ ընդհանրացման և կիրառության համար¹⁴²:

Էնվերի հրամանագրով ոգևորվելով՝ թուրք հայտնի զինվորական Հուսեյին Ավնի (Ալփարսլան) բեյը, որը նաև թուրքերեն լեզվի և թուրքական մշակույթի մասին հողվածների հեղինակ էր, գրում է. «Եթե մենք ուզում ենք մեր երկրի տերը դառնալ, ապա ամենափոքր գյուղի անունն անգամ պետք է թուրքերեն դարձնենք, այլ ոչ թե թողնենք հայերեն, հունարեն, արաբերեն: Այսպիսով՝ մեր երկիրը կներկենք մեր գույներով»¹⁴³:

Այսպիսով, Թուրքիայի իշխանությունները՝ ժառանգելով երիտթուրքական քաղաքականության ավանդույթներն ու հասկանալով, որ հայկական տեղանունները մի ողջ քաղաքակրթության արգասիք են և Արևմտյան Հայաստանում հայոց գոյության խոստուն վկաներ, չբավարարվելով այդ տարածքի իսկական տերերի ֆիզիկական ոչնչացմամբ, շարունակում են իրենց պատմամշակութային եղեռնը՝ վաղուց ի վեր թիրախ դարձնելով նաև հայկական տեղանունները:

Տեղանունները սոսկ լեզվական փաստեր չեն, այլ նաև պատմական անաչառ ապացույցներ: Թուրքական պետությունն ու պատմագրությունը, ինչպես նաև թուրքամետ գիտական շրջանակները չեն ցանկանում ընդունել Հայկական լեռնաշխարհում հայերի բնիկությունը, ժխտում են հայոց ցեղասպանությունը, ի մասնավորի՝ փորձում են կասկածի տակ դնել Հայաստանի տեղանունների հայկական ծագումը: Մինչդեռ վաղնջական ժամանակներից հիշվող հայկական տեղանունները լեզվական ամրակուռ փաստեր են, որոնք ի չիք են դաձնում թուրքական այդօրինակ նկրտումները, բացահայտում ողջ ճշմարտությունը:

Լուսինե Սահակյանի համոզմամբ, այսօր հայկական տեղանունների պաշտպանության, պահպանման և վերականգնման

¹⁴² Ամբողջական թարգմանությունը տես Լ. Սահակյանի նշված հոդվածում:

¹⁴³ Tirebolulu H. [Huseyin Avni] Alparslan, "Trabzon İli Lâz mı? Türk mü?" *Giresun*, 1339. s. 17.

խնդիրը մեզ համար ունի ռազմավարական անգինահատելի նշանակություն¹⁴⁴:

Հատկապես ծանր և ողբերգական է պատմական Հայաստանի ճարտարապետական հուշարձանների ճակատագիրը: 1914 թվականին Օսմանյան կայսրության տարածքում գտնվող հայկական եկեղեցական շինությունների թիվը հասնում էր շուրջ 2540-ի: 1974 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալների համաձայն, 1915 թ. հետո մնացած 913 շինություններից 464-ը լիովին ոչնչացվել են, 252-ը փլատակների են վերածվել, 197-ը լուրջ վերականգնման կարիք են գգում: Չնայած Թուրքիայում ընդունված պատմական հուշարձանների պահպանմանը և վերականգնմանը նվիրված օրենքի, գրեթե ոչ մի հայկական ճարտարապետական հուշարձան չի վերականգնվել: Աղթամարի Մուրբ Խաչ եկեղեցու վերականգնումը և առանց խաչի բացումը բացառություն էր և հետապնդում էր զուտ քարոզչական նպատակ: Կարսի Առաքելոց եկեղեցին վերաբացվեց որպես մզկիթ: Իսկ Անիի որոշ վերականգնողական աշխատանքներ հանձնարարվել են այնպիսի շինարարական ընկերությունների, որոնք կապված են «Գորշ գայլեր» ծայրահեղական ազգայնական կազմակերպության հետ¹⁴⁵: Նախկին Օսմանյան կայսրության, ներկայիս Թուրքիայի բոլոր վայրերում բացառությամբ Ստամբուլի, որ ամենաաշխույժ տուրիստական կենտրոնն է և ունի կազմակերպված հայկական համայնք, հայկական հուշարձանները քանդվում են, իսկ մնացածները՝ զրկվում ազգային հայկական պատկանելիության բնորոշիչներից (հանված խաչեր, զանգեր, ջնջված հայերեն արձանագրություններ)¹⁴⁶:

Հայկական ճարտարապետական շինությունները հետևողականորեն պայթեցվում են, որպես թիրախ օգտագործվում զինավարժությունների ժամանակ, նրանց սրբատաշ քարերն օգտագործվում են որպես շինանյութ կառուցապատման ընթաց-

¹⁴⁴ Լուսինե Սահակյան, նշվ. աշխ.:

¹⁴⁵ «Республика Армения», 27 апреля 2007.

¹⁴⁶ Anush Hovannisian, "Turkey: A Cultural Genocide", in *Problems of Genocide (Proceedings of the International conference on «Problems of Genocide», April 21-23, 1995, NAS RA, Yerevan)*, Cambridge, USA & Toronto, Canada, 1997, p.376-385.

քում, նրանք ծառայում են գոմ, պահեստ, նույնիցլ բանտ: Որոշ դեպքերում հայկական եկեղեցիները մզկիթների են վերածվում, կամ էլ հայտարարվում են «սելջուկյան ճարտարապետության» նմուշներ:

1983 թ. հոկտեմբերի 7-ին Թուրքիայի կառավարությունը օրենք ընդունեց, որի համաձայն արգելվում էր այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք գովաբանում են այլ ժողովուրդներ և մասսայականացնում նրանց կրոնն ու մշակույթը»¹⁴⁷: Այդ օրենքը հռչակելուց հետո, 1984 թ. երկու անգամ դատական պատասխանատվության է ենթարկվել Բ. Թուրլաջյանը, որը հեղինակն էր մի հետազոտության, նվիրված ճարտարապետ Պալյանների ընտանիքին: Առ այսօր թեև սառեցված, բայց օրենսդրությունից չի հանված քրեական օրենսգրքի տխրահռչակ 301 հոդվածը, որը պատիժ է սահմանում «թուրք ազգային զգացմունքները ռոնահարելու» համար: Նշված հոդվածով դատապարտվել է մի քանի անգամ և լուսահողի Հրանտ Դինքը:

«Թուրքական տաղանդին» են մշտապես վերագրվում հայկական երաժշտական բանահյուսության, կիրառական, գորգարվեստի բազմաթիվ նմուշներ¹⁴⁸: Այնինչ, բոլոր հետազոտողները նշում են «թուրքական արվեստ» տերմինի պայմանականությունը, քանզի օսմանյան հուշարձանների ստեղծմանն իրենց տաղանդով և հմտությամբ նպաստ են բերել առաջին հերթին հույն, հայ, արաբ, բուլղար և այլազգի արվեստագետներն ու արհեստավորները¹⁴⁹:

Բացի Լոզանի պայմանագրից Թուրքիան ստորագրել և վավերացրել է Մարդու իրավունքների միջազգային խարտիան, որի կետերից մեկը նվիրված է փոքրամասնությունների իրավունքներին 1965 թ. Թուրքիան ստորագրել է 1954 թ. Հաագայի կոնվենցիան՝ պատերազմների ժամանակ մշակութային հուշարձանների պահպանության մասին: 1969 թ. ստորագրել է Մշակութային հուշարձանների պահպանության մասին միջազգային

¹⁴⁷ «Զարթոնք», 24 նոյեմբերի 1983:

¹⁴⁸ Arseven E., *Türk sanatı tarihi*, İstanbul, 1950; Öz T., *Turkish Ceramics*, Ankara, 1955; Altınay A.R., *Türk mimarları*, İstanbul, 1977.

¹⁴⁹ Ю.А.Миллер, *Искусство Турции*, Москва-Ленинград, 1965.

պայմանագիրը, որտեղ հստակ նշում կա նաև փոքրամասնությունների մշակութային հուշարձանների մասին: Մակայն հաշվի առնելով, որ Թուրքիան շարունակաբար խախտում կամ յուրովի է մեկնաբանում իր վրա վերցրած պարտավորությունները, ԵՄ-ն 1987 թ. հունիսի 18-ին ընդունեց *Հայկական հարցի քաղաքական լուծման մասին բանաձև*, որի 6-րդ կետում նշվում էր, որ.

Թուրքիայի կառավարությունը պետք է արդարացի վերաբերմունք ցուցաբերի հայ ժողովրդի ինքնության, լեզվի, կրոնի, մշակույթի և լուսավորության սիստեմի նկատմամբ:

Եվրոխորհրդարանը եռանդուն կերպով պահանջում է, որ պետքի բարելավվի Թուրքիայում գտնվող ճարտարապետական հուշարձանների պահպանությունը:

Եվրոխորհրդարանը դիմում է Եվրոպական համագործակցությանը, որպետքի վերջինս հնարավորություն գտնի իր նպաստը բերելու այդ գործին¹⁵⁰:

ԵՄ-ն այնուհետև բազմիցս վերահաստատել է վերը նշված բանաձևը:

Համաշխարհային քաղաքակրթության թանկարժեք գենոֆոնդի մի մասն է կազմում հայկականը: Ահա թե ինչու հայ մշակույթի պահպանումը պետք է լինի ոչ միայն հայկական, այլ նաև միջազգային հասարակայնության խնդիրներից մեկը: Նշենք սակայն, որ մինչ այժմ չի մշակվել գործունե մեխանիզմ, որը թույլ կտար հորդորներից բացի որոշակի միջոցներ կիրառել «մշակութային ջարդ» իրականացնող երկրների հանդեպ: Շվեյցարացի անվանի իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ Ալֆրեդ դե Զայասը, օրինակ առաջարկում է ճշգրտումներ մտցնել 1948 թ. Կոնվենցիայի տեքստի մեջ, որոնք պատիժ կսահմանեն նաև ցեղասպանության ժխտման և մշակութային ջարդի համար¹⁵¹:

Հայոց ցեղասպանության ժխտողականությունը, որը ըստ էության «սպիտակ ջարդի» դրսևորումներից է, Թուրքիայում

¹⁵⁰ Text of the European Parliament's Resolution of June 18, 1987.- "The Armenian Question Today", Glendale, CA, 1988.

¹⁵¹ De Zayas A., *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005, p.41.

պետական քաղաքականություն է և, ինչպես բնորոշվում է ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների հանրագիտարանում սեփական անցյալը ժխտելու՝ պետության ամենաբացահայտ օրինակը¹⁵²: Անվանի մշակութաբան Ռ. Բեվանը թուրքական ժխտողականության (denialism) մասին գրում է. *Թուրքիայի ժխտողականությունը, «պատերազմը» հայկական ճարտարապետական հուշարձանների դեմ, նրա կարծեցյալ «հաղթական» ջանքերը վերաշարադրել պատմական իրողությունները ապացույց են այն բանի, որ այդ երկիրը մնում է «Եվրոպայի հիվանդ մարդ» (The Sick Man of Europe) և շարունակում է ցեղասպանությունը՝ ժխտելով այն*: Ըստ Բեվանի ժխտողականությունը օժանդակվում է Արևմուտքի այն ուժերի կողմից, որոնք ցանկանում են ՆԱՏՕ-ի անդամ և ԵՄ թեկնածու երկիր Թուրքիային պահել որպես դաշնակից: Ժխտողականությունը ուղեկցվում է հայկական ճարտարապետության «մշակութային մաքրմամբ» (cultural cleansing)¹⁵³:

Շարադրված փաստերը օրինաչափ մի շղթա են կազմում և ցույց տալիս, որ ժամանակակից Թուրքիայում շարունակվում է հայկական պատմության ու մշակույթի դեմ ուղղված գեոցիդը:

Ռաֆայել Լեմկինը իր անձնական պարտությունն էր համարում այն, որ չկարողացավ ստիպել ընդգրկել «մշակութային ցեղասպանություն» եզրը 1948 թ. Կոնվենցիայում: Նրա խորին համոզմամբ ցեղասպանությունը, որպես յուրատեսակ ոճիր չի ավարտվում ֆիզիկական սպանությամբ, այլ երբեմն շարունակվում է ժխտողականության, մշակութային ջարդի և այլ գործողությունների միջոցով: Ուստի այն հարցին, *թե երբ է ավարտվում ցեղասպանությունը*¹⁵⁴ պատասխանը *մեկն է՝ երբ դադարեցվում է դրա ժխտումը և երբ հանցագործություն իրականացրած կոդը գրկվում «ոճիրի պտուղներից» օգտվելու հնարավորությունից*:

¹⁵² Մանուկյան Ս., «Թուրքական ժխտողականություն» http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=463

¹⁵³ Bevan R., «The Destruction of Memory: Architecture at War», Chicago, 2006, www.press.uchicago.edu

¹⁵⁴ Kouyoumjian D., «When Does Jenocide End? The Armenian Case», Holocaust Lecture Series Sonoma, California March, 11, 2003.

**ԹՈՒՐՔԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ
ՍՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ
ԽՆԴԻՐԸ. ՈՒՆԵԶԳԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հանրապետության հռչակումից հետո քեմալական Թուրքիան հավատարիմ մնաց ազգային փոքրամասնությունների նկատմամբ Օսմանյան կայսրության՝ հետևողականորեն իրականացրած ձուլման և ոչնչացման քաղաքականությանը: Թեև թուրքական ազգային պետության ստեղծումն ուղեկցվում էր Արևմտյան Հայաստանի և Անատոլիայի հայ, հույն, ասորի բնակչության կոտորածներով և վերջնական տեղահանությամբ, բայց և այնպես հանրապետության հռչակման պահին էլ Թուրքիան բնակեցված էր բազմաթիվ ազգային, էթնիկ, լեզվական և կրոնական փոքրամասնություններով: Փոքրամասնությունների հարցը բարձրացվել էր 1923թ. Լոզանի կոնֆերանսում: Թուրքիան, սակայն, ճանաչում էր միայն երեք փոքրամասնությունների, այն էլ որպես «ոչ մուսուլմաններ» կարգավիճակով:

Այսպիսով՝ Թուրքիայի ազգային փոքրամասնությունների պարագայում խնդրո առարկան հայ, հույն և հրեա համայնքներն են, որոնց՝ փոքրամասնության կարգավիճակն ու իրավունքները դեռևս 1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագիրն էր սահմանել:

Լոզանի պայմանագրի երրորդ բաժինը վերաբերում է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը: Համաձայն 38-44-րդ հոդվածների՝ «Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է ապահովել Թուրքիայի բոլոր քաղաքացիների կյանքի և ազատության լիարժեք պաշտպանությունը՝ անկախ ազգային, լեզվական, ռասայական և կրոնական պատկանելությունից»:

Հոդված 39-ի համաձայն՝ պաշտոնական լեզու համարվող թուրքերենի կողքին թույլատրելի է նաև ազգային փոքրամասնությունների լեզուների կիրառումը: «Ոչ մի սահմանափակում և

արգելք չդնել, որպեսզի ցանկացած թուրքական քաղաքացի օգտվի որևէ լեզվից»:

Հոդված 40-ի համաձայն՝ ոչ մուսուլմանական փոքրամասնությունները հավասարապես իրավունք ունեն իրենց հաշվին ստեղծելու և տնօրինելու բարեգործական, կրոնական, հասարակական հաստատություններ, դպրոցներ, ուսումնական և դաստիարակչական այլ հաստատություններ՝ իրավունք ունենալով այդ հաստատություններում ազատ օգտագործելու իրենց մայրենի լեզուն և ազատ դավանելու իրենց կրոնը:

Հոդված 42-ի համաձայն՝ Թուրքիայի կառավարությունը լիակատար պաշտպանության տակ էր առնում եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և փոքրամասնություններին պատկանող այլ կրոնական հաստատությունները¹⁵⁵:

Լոզանի պայմանագրի նշված հոդվածներում փոքրամասնությունների իրավունքների իրավական երաշխիքների վերաբերյալ կետերում խոսքը վերաբերում է բացառապես ոչ մուսուլմանական փոքրամասնություններին (Լոզանի պայմանագիրը չէր ճանաչում ոչ թուրք մուսուլմանների, այդ թվում և քրդերի, ալևիների՝ փոքրամասնություն լինելու կարգավիճակը):

Սակայն այս բոլոր կետերը մնացին թղթի վրա: Շարունակվեցին փոքրամասնությունների հանդեպ հալածանքներն ու հետապնդումները, ինչպես նաև նրանց ձուլման քաղաքականությունը:

Թե՛ քեմալական, թե՛ հետագա թուրքական կառավարությունները մի շարք օրենսդրական ակտերի և միջոցառումների կիրառմամբ ձգտում էին ավարտին հասցնել դեռևս ցեղասպանության տարիներին սկսված հայերի, ինչպես նաև հույների և այլ քրիստոնյաների ունեզրկման գործընթացը: Լայնածավալ այդ գործընթացը, ըստ էության, կապիտալի բռնի փոխանցում էր ոչ մուսուլմաններից՝ մուսուլմաններին, ինչը պետք է հիմք հանդիսանար Թուրքիայի ապագա տնտեսական զարգացման համար:

Հայերի և հույների գույքի հետագա բռնազանձումը իրականացվեց մի քանի փուլերով:

¹⁵⁵ Ա. Կիրակոսյան, նշվ. աշխ. էջ 30-31:

Երկրորդ համաշխարհային թեժ տարիներին՝ 1942թ., թուրքական կառավարությունը, վարչապետ Շուքրու Սարաջողլուի գլխավորությամբ, Ազգային մեծ ժողովի հաստատմանը ներկայացրեց, այսպես կոչված, «Ունեցվածքի հարկ»-ի (Varlık Vergisi)¹⁵⁶ մասին օրենքը, որն ընդունվեց 1942թ. նոյեմբերի 11-ին՝ խորհրդարանի նիստին մասնակցող 350 պատգամավորների միաձայն քվեարկությամբ։ Թուրք ազգայնական իշխանությունների հաշվարկներով համաշխարհային պատերազմը փայլուն հնարավորություն էր ստեղծում նրանց համար էլ ավելի ազատ ու անկաշկանդ իրականացնել ազգային-կրոնական փոքրամասնություններին հալածելու քաղաքականությունը, ինչպես նաև մասամբ լուծել երկրի առջև ծառացած որոշակի տնտեսական խնդիրները։

«Ունեցվածքի հարկ»-ը հարկատուներին բաժանում էր 4 խմբի՝ ըստ կրոնական պատկանելության. ա. մուսուլմաններ, բ. ոչ մուսուլմաններ, գ. հավատափոխներ, դ. օտարապետականներ։ Փաստորեն, սրանով խախտվում էր սահմանադրական այն դրույթը, որի համաձայն՝ բոլորը, այդ թվում և ոչ մուսուլմանները, Թուրքիայի իրավահավասար քաղաքացիներ էին, և սա ավելի շատ հիշեցնում էր օսմանյան տիրապետության շրջանը, երբ ոչ մուսուլմանները վճարում էին մուսուլմաններից տարբերվող հարկեր։ Բսկ հավատափոխներին չընդգրկելով մուսուլմանների խմբի մեջ՝ թուրքական պետությունը ևս մեկ անգամ բացահայտ ցույց տվեց, որ այդ խավի հանդեպ վստահություն չի տածում և նրանց որպես «իսկական մուսուլմաններ» չի ընկալում։ Կան փաստեր նաև, երբ, օրինակ, իսլամ ընդունած հայերը, հույները և հրեաները հարկվել են ոչ թե որպես մուսուլման կամ հավատափոխ, այլ որպես ոչ մուսուլման։ Սույն օրենքով նախատեսվում էր, որ մուսուլմանները վճարեն ունեցվածքի 12.5 տոկոսի չափով հարկ, ոչ մուսուլմանները՝ 50 տոկոս,

¹⁵⁶ Ayhan Aktar, *Varlık Vergisi ve 'Türkleştirme' Politikaları*, İletişim Yayıncılık, İstanbul 2000. Տես նաև Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143։

հավատափոխները, այսինքն՝ իսլամացածները՝ 25 տոկոս և օտարահպատակները՝ 12.5 տոկոս: Քանի որ այն ժամանակվա Թուրքիայում ոչ մուսուլմանների ամենամեծ համայնքները հայերինը, հույներինը և հրեաներինն էին, բնականաբար, հարկն առավելապես ուղղված էր նրանց դեմ:

Հարկաչափը սահմանելու և հավաքելու նպատակով ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում, որ բոլոր հանձնաժողովականները լինեին գտարյուն թուրքեր: Ամենևին երկրորդական չպետք է համարել, որ հանձնաժողովների կազմում կային զգալի թվով նախկին իթթիհադականներ: «Օրենքի» ամենամեծ հակաիրավական դրույթներից էր այն, որ հանձնաժողովն ինքնակամ էր որոշում հարկի չափը, այսինքն՝ չկար հստակ որևէ չափանիշ: Սակայն հակաիրավական կետերն այսքանով չէին սահմանափակվում. մարդու իրավունքները կոպտորեն ոտնահարող հաջորդ նորմն այն էր, որ հարկատուն իրավունք չուներ որևէ տեղ բողոքարկել հարկաչափը, այսինքն՝ հանձնաժողովի կամայականորեն սահմանած որոշումը բեկանման ենթակա չէր և վերջնական էր: Իսկ հանձնաժողովները հարկաչափը որոշելիս հաշվի չէին առնում հարկատուի իրական եկամուտները և հնարավորություններն ու հարկում էին նրան մոտավորապես, ըստ ցանկության և տրամադրության:

Հարկահավաքության գործընթացում կար մի շատ կարևոր մանրամասն ևս. թուրքական իշխանությունները տարբերություն էին դնում նաև ոչ մուսուլմանների միջև, և հայերը, մյուս ոչ մուսուլմանների համեմատ, հարկվում էին ամենաբարձր տոկոսներով և ամենաշատը: Այսպես, օրինակ՝ թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամուտի 4.7 տոկոսը, հույնը՝ 156 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը, և փաստորեն հույն առևտրականը թուրքի համեմատ վճարում էր 31 անգամ, հրեան՝ 36, իսկ հայը՝ 47 անգամ ավելի գումար: Հարկերի վճարման համար սահմանված էր 15-օրյա ժամկետ, որը հետո երկարացվեց մինչև 30 օր: Այդ ընթացքում հարկը վճարել չհասցնողի շարժական և անշարժ գույքը պետականացվում և աճուրդով վաճառվում էր. մինչ այդ հենց իրենք՝ հարկատուներն

էլ էին փորձում էծան գներով վաճառել իրենց ունեցվածքը: Նշենք նաև, որ գումարը չբավարարելու դեպքում բռնագրավման և վաճառքի էր ենթակա նաև հարկատուի մերձավոր ազգականների գույքը: Իսկ եթե այդ ձևով ձեռք բերված գումարն էլ չէր բավարարում հարկի վճարմանը, ապա հարկատուներն արքունիում էին տաժանակրության, որպէսզի աշխատելով վճարեին պետության հանդէպ իրենց «պարտքը»: Տաժանակրության հիմնական վայրը ցրտաշունչ կլիմայով հայտնի Էրզրումի նահանգի Աշքալէ գավառն էր, որն անվանում են նաև «թուրքական Սիփիր»¹⁵⁷:

Թուրքիայի կառավարության 1943թ. հունվարի 7-ի նիստում ընդունվել է թիվ 19288 աշխատանքի պարտավորության կանոնակարգը: Այն ընդգրկում էր հետևյալ հոդվածները. 1-ին հոդվածով դասակարգվում էին ստիպողական աշխատանքի դատապարտված հարկատուները: Աշխատանքային ճամբարներ առաջինը գնալու էին ընդհանրապէս հարկ չվճարածները, այնուհետև՝ մասնակի վճարածները, և այսպէս շարունակ: Նախատեսվում էր տաժանակիրներին վճարել որոշակի աշխատավարձ, որը կազմելու էր օրական 250 քուրուշ, որից 60-ը պահվելու էր սննդի, կացության և այլ ծախսերի համար, իսկ մնացածը պետք է հատկացվեր «Ունեցվածքի հարկ»-ի պարտքի մարմանը: 15-րդ հոդվածի համաձայն՝ հարկատուները պետք է աշխատեին մինչև «Ունեցվածքի հարկ»-ի լրիվ մարումը: Սակայն այս կետը շատ հարկատուների դեպքում առաջացնում էր ոչ տրամաբանական պատկեր, և կարելի է ասել, որ դա նախատեսում էր ցմահ տաժանակրություն: Այսպէս, օրինակ, այն հարկատուները, որոնց պարտքը 400-500 հազար լիրա և ավելի էր, որպէսզի իրենց ստացած աշխատավարձից լրիվ մուծեին պարտքը, պետք է աշխատեին մոտավորապէս 1600 տարի: Ճամբարներում հավաքված հարկատուներից 1869-ը Ստամբուլից էին, 889-ը՝ Իզմիրից, 100-ը՝ Բուրսայից: Պաշտոնական տվյալ-

¹⁵⁷ Ռ. Մելքոնյան, «Թուրքական «ազգային պետության» նախահիմքերը» http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=479&sphrase_id=52414

ների համաձայն՝ միայն Աշքալե է ուղարկվել 1400 ոչ մուսուլման հարկատու, որոնցից 1229-ը՝ Ստամբուլից: Աշքալեում հարկատուներից 21-ը (այլ տվյալներով ավելի շատերը) մահացել են¹⁵⁸:

Կարևոր հարց է նաև, թե փոքրամասնություններից խլված, պետականացված և աճուրդով վաճառված գույքը ո՞ւմ ձեռքն էր անցնում. ինչպես ցույց են տալիս փաստերը, այդ ամբողջ գույքը գնել են թուրք գործարարները, թուրքական կազմակերպությունները, բանկերը և այն էլ՝ շատ էժան գներով: «Ունեցվածքի հարկը» չվճարած հարկատուների շարժական և անշարժ գույքի բռնագրավումից հետո հերթը հասնում էր նաև նրանց անձնական իրերին, մինչև անգամ հագուստներին: Այդ ժամանակ շատ հաճախ կազմակերպվում էին աճուրդներ, որոնց ժամանակ վաճառվում էր փոքրամասնություններից բռնագրավված գույքը: Այս ապրանքների հիմնական գնորդները Անատոլիայից եկած նոր հարուստներն էին, և այնքան մեծ էր գնված ապրանքների քանակը, որ խնդիր էր դառնում նաև դրանց փոխադրումը, գնացքները չէին կարողանում տեղավորել և տեղափոխել այդ քանակի ապրանքը¹⁵⁹:

Այն տարիների պատգամավոր գրող Ֆայիք Ահմեթ Բարուքչուի «Քաղաքական հուշեր. 1939-1954թթ.» գրքից տեղեկանում ենք, որ վարչապետ Սաբաջօղլուն Ժողովրդահանրապետական կուսակցության (CHP) գաղտնի նիստի ժամանակ խոսել է «Ունեցվածքի հարկի» իրական նպատակի մասին և ասել, որ դա ուղղված է հիմնականում ազգային փոքրամասնությունների դեմ և սնանկացնելով շուկայում գերակա դիրքեր ունեցող օտարներին, նպատակ ունի նրանց այնտեղից հեռացնել և թուրքական շուկան տալ թուրքերի ձեռքը¹⁶⁰:

Կարելի է ասել, որ «Ունեցվածքի հարկ»-ը կատարեց իր «առաքելությունը», այն է՝ գրեթե լիովին թուրքացրեց տնտեսությունը: Ստամբուլահայ հեղինակ Երվանդ Օզուզունի «Ակօս» թերթի 1998թ. նոյեմբերի 13-ի համարում «Ունեցվածքի հարկի»

¹⁵⁸ Նույն տեղում:

¹⁵⁹ Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը»... էջ 139:

¹⁶⁰ Նշվ. աշխ. էջ 134:

մասին գրած հոդվածում տեղ է գտել նաև այն միտքը, որ «Ունեցվածքի հարկի» հետևանքները բազմաշերտ են և չեն սահմանափակվել միայն տնտեսության թուրքացմամբ, այլև դրա պատճառով փաստորեն վերացել են թուրքահայ բուրժուազիան և այդ բուրժուազիայի մաս կազմող մտավորական դասը: Կարողացած, գրագետ, տարբեր լեզուների տիրապետող դասակարգը վերացավ՝ տեղը զիջելով իրենց ունեցվածքին էժան գներով տիրացած անատոլիական նոր հարուստներին, որոնց գերակշիռ մասը անգրագետ, անմշակույթ մարդիկ էին, - կարծում է Օգուզունը և շարունակում, - «Ունեցվածքի հարկը» հայերի համար փաստորեն նաև մշակութային կոտորած էր¹⁶¹: Իսկ թուրք հեղինակ Ռեդվան Աքարը ավելի կոշտ է արտահայտվում՝ նշելով. «Ունեցվածքի հարկը» փոքրամասնությունների համար «տնտեսական ցեղասպանություն էր»¹⁶²:

Ազգային փոքրամասնություններին նյութապես, բարոյապես, հոգեպես և ֆիզիկապես կոտրելուց հետո միայն թուրքական իշխանությունները, տեղի տալով նաև արտաքին գործոնների ազդեցությանը, որպես «բարի կամքի» դրսևորում, վերացրին «Ունեցվածքի հարկ»-ի կիրառումը: Այսպիսով, «Ունեցվածքի հարկը» հանրապետական Թուրքիայի պատմության ընթացքում տնտեսական ոլորտում կրոնական փոքրամասնությունների դեմ գործադրված ամենախոշոր և ծանր հետևանքներ առաջացրած մի քայլ էր:

1955թ. սեպտեմբերի 6-7-ը Ստամբուլի, Իզմիրի հույն, հայ բնակչությունը ենթարկվել է պետության կողմից նախօրոք պատրաստված խուժանի հարձակմանը: Սրա համար պատրվակ է հանդիսացել իշխանությունների կազմակերպմամբ հրապարակ նետված այն լուրը, թե ոմբակոծվել է Սալոնիկում գտնվող Աթաթյուրքի տունը: Դրանից հետո գազազած ամբոխը հարձակվել է հունական և հայկական թաղամասերի վրա, թալանել, այրել տներ, խանութներ, եկեղեցիներ, խոշտանգել, բռնաբարել և սպանել մարդկանց: Այս ամենին թուրքական իշխանություններն

¹⁶¹ Özüzün E., "Acı bir kilometre taşı ve kültür kırımı", Agos, 13.11.1998.

¹⁶² Akar R., *Aşkale yolcuları (varlık vergisi ve çalışma kampları)*, İstanbul, 2006, s.15.

արձագանքել են միայն մեկ օր հետո, երբ ամեն ինչ արդեն ավարտված էր: Հետագայում ընթացող դատական քննության ժամանակ ի հայտ եկած փաստերն ապացուցեցին, որ այդ ամենը կազմակերպված էր իշխանությունների կողմից՝ պետական ամենաբարձր պաշտոնյաների անմիջական մասնակցությամբ: Հունաստանի իրավապահ մարմինները դեպքի առնչությամբ ձերբակալել էին Թուրքիայի հյուպատոսարանի պահակին և Մալոնիկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Օքթայ Էնգինին, որը, ինչպես պարզվեց, Թուրքիայի ազգային անվտանգության գործակալ է եղել: Էնգինը հետագայում Ստամբուլի նահանգապետի միջնորդությամբ աշխատանքի է անցել քաղաքապետարանում, այնուհետև դարձել է Թուրքիայի կարևորագույն շրջաններից մեկի՝ Չանքայայի գավառապետ, այնուհետև՝ ոստիկանության գլխավոր վարչության քաղաքական գործերով բաժնի պետ: 1971թ. Օքթայը դառնում է Անվտանգության վարչության պետ և 7 տարի պաշտոնավարում, իսկ 1991թ. նշանակվում է Նևշեհիրի նահանգապետ: Այսինքն՝ Քեմալ Աթաթյուրքի ծնված տան այգում կատարված պայթյունը Մալոնիկում պետականորեն ծրագրված սադրանք էր, որպեսզի առիթ տա Թուրքիայում հույների, հայ և հրեա ազգային փոքրամասնությունների դեմ կոտորածի կազմակերպման: Ընդհանուր առմամբ թալանի է ենթարկվել 4214 տուն, 1004 գրասենյակ, 73 եկեղեցի, 26 դպրոց և հաստատություն¹⁶³:

1964թ. մարտին Թուրքիայի կառավարությունը սկսեց Ստամբուլից հույների զանգվածային արտաքսում՝ ամենակոպիտ ձևով խախտելով Լոզանի պայմանագիրը, ըստ որի՝ 1918-ից առաջ Ստամբուլում բնակություն հաստատած հույները ենթակա չեն փոխանակման: Զանգվածային արտաքսումները տեղի էին ունենում Կիպրոսի պատճառով Հունաստանի և Թուրքիայի միջև ծագած լարվածության պայմաններում: Տեղահանությունը

¹⁶³ Ayhan Aktar, "6 - 7 Eylül 1955 Cumhuriyet tarihinin en karanlık gecesi ...",

Pazartesi, 5 Eylül 2005, Sabah gazetesi yazı dizisi

<https://www.academia.edu/20103181/6> -

[7 Eylül 1955 Cumhuriyet Tarihinin En Karanlık Gecesi 6 -](#)

[7 September 1955 Darkest Night of Republican History](#)

հանկարծակի հայտարարվեց մամուլում, որը միաժամանակ ուղեկցվեց հույներին պատկանող անշարժ և շարժական գույքի բռնագրավմամբ¹⁶⁴։ Ավելի քան 1000 հույներ անհապաղ արտաքսվեցին։ Նրանց իրավունք էր տրված վերցնել միայն 22 դոլլար և մեկ ճամպրուկ հագուստ։ Դրանից քիչ ժամանակ անց ևս 5000 հոգի արտաքսվեցին երկրից։ Մնացած 11,000-ը արտաքսվեցին 1964թ. սեպտեմբերից հետո, երբ Թուրքիայի կառավարությունը հրաժարվեց նորացնել հույն քաղաքացիների բնակության իրավունքի ժամկետը։ Իրականում մի քանի ամսվա ընթացքում Հունաստան է արտաքսվում մոտ 45 հազար մարդ, քանի որ բավական տարածված հույն-թուրքական խառնամուսնությունների պատճառով արտաքսվում էին ամբողջական ընտանիքներ։ 1980-ականների կեսերին նախագահ Թուրգուօ Օզալը Դավոսի տնտեսական գագաթաժողովում հայտարարեց, թե 1964-ին արտաքսված հույները իբր կարող են հետ ստանալ իրենց ունեցվածքը։ Արտաքսյալներից մի քանիսը փորձեցին դա անել, նրանցից հազիվ 2-3 հոգի դատական հայց ներկայացրին։ Դատավարություններից մեկը տևեց 15 տարի և ի վերջո հույներից մեկին հնարավորություն տրվեց հետ ստանալու Բյույուքքադայում գտնվող հայրական տունը։ Սակայն դա առայժմ հայտնի միակ դեպքն է¹⁶⁵։

Այսպիսով, ազգային փոքրամասնություններին արտաքսելը, իրենց ունեցվածքից և գործից զրկելը դարձավ հանրապետական Թուրքիայի պետական տնտեսական քաղաքականության անկյունաքարը, և ինչպես երիտթուրքական շրջանում, պետականաորեն ու «օրենքներով» ամրագրված՝ շարունակվեց տնտեսական տեռորը կամ ուղղակի պետական մասշտաբի թալանը, որին զոհ դարձան Թուրքիայում ապրող ոչ մուսուլմանները։

Թուրքայի Հանրապետությունում ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը ունեգրկման քաղաքականու-

¹⁶⁴ 16 March 1964 - The Banishment of the Greek Community of Istanbul through Deportations and Expatriation <http://www.conpolis.eu/uploadedNews/16%20Mart%201964-Eng.pdf>

¹⁶⁵ Պ. Քեշիշյան, «Հույների վերջին տեղահանության 50 տարին» <http://www.azg.am/AM/2014032812>

թյան առանձին թիրախ էր հանդիսանում: 1924 թ. մարտի 3-ին խալիֆայության վերացումից հետո վերաձևավորվեց կրոնի և վաքրֆների նախարարությունը (Diyanet), վաքրֆների նկատմամբ էլ սահմանվեց պետական վերահսկողություն¹⁶⁶: Իսկ 1926 թ. ընդունված Քաղաքացիական օրենսգրքի 74-րդ հոդվածով ոչ մուսուլմաններին արգելվեց նոր վաքրֆներ հիմնել¹⁶⁷: 1930 թ. ոչ մուսուլմանների գերեզմանատները պաշտոնապես փոխանցվեցին քաղաքային իշխանությունների գերակայության տակ՝ զրկվելով պետական մարմիններից անկախ գործելու հնարավորությունից¹⁶⁸: 1935 թ.-ին Կալվածքների մասին 2762 օրենքով ոչ մուսուլմանների համայնքային վաքրֆները անցան Կալվածքների տնօրինության (Vakıflar Genel Müdürlüğü) վերահսկողության տակ:

Մակայն փոքրամասնությունների գույքի հետագա բռնագանձմանն ուղղված օրենքների այդ շարքում առավել մտահոգիչն այն էր, որը հայտնի է «1936 Beyannamesi» անունով:

1935 թ. հունիսի 13-ին ընդունված վաքրֆների մասին թիվ 2762 օրենքի հիման վրա 1936 թ. ընդունվեց պետական կարգադրություն («1936 Beyannamesi»), որի համաձայն՝ Թուրքիայի բոլոր վաքրֆներից պահանջվում էր գույքի մասին ծանուցում: Մահմեդական և ոչ մահմեդական բոլոր վաքրֆները, այդ պահանջին ենթարկվելով, իրենց պատկանող գույքերի ցուցակը հանձնում էին Վաքրֆների գլխավոր տնօրինությանը: 1936թ. հայտարարագիրը բաղկացած էր մի ցուցակից, որը ցույց էր տալիս այն ունեցվածքը, որը պատկանել է ոչ մուսուլման փոքրամասնությունների համայնքային վաքրֆներին:

Պոլսահայ փաստաբան Սեպուհ Ասլանգիլը, ով զբաղվում է եկեղեցապատկան գույքի հետվերադարձման հարցերով նշում է. «Չիմանալով և տեղյակ չլինելով, թե ինչ նպատակ է հետա-

¹⁶⁶ «3 Mart devrim yasaları» <http://www.atam.gov.tr/dergi/sayi-35/3-mart-1924-devrim-yasaları>

¹⁶⁷ Aktar A., *Varlık Vergisi ve "Türkleştirme" politikaları*, İstanbul, 2000, s. 109.

¹⁶⁸ Alptekin E., «Vakıflar Yasası kabul edildi: Sıra Lozan'a mı geldi?» <http://www.turksolu.com.tr/175/alptekin175.htm>

պնդում այս հայտարարագիրը՝ մեր բոլոր հիմնարկները ճշտորեն չեն ներկայացրել իրենց ունեցվածքի ցանկը՝ մտածելով, որ այդ ցանկերն ուզում են տուրքեր գանձելու համար, հետևաբար բոլորը ներկայացրել են փոքր քանակությամբ կալվածքների ցանկ»¹⁶⁹:

Այդ ընթացքում հայ համայնքը Թուրքիայում ներկայացված էր աշխարհիկ և կրոնական խորհրդարաններով, որից աշխարհիկը 1960թ. ռազմական հեղաշրջման արդյունքում արգելվեց և այժմ գործում է միայն կրոնականը: Այդ խորհրդարանները, սակայն, ունեին ենթահանձնախմբեր, օրինակ կալվածքների հանձնախումբ, կրթական հանձնախումբ և այլն: Համայնքապատկան կալվածքների հսկողությունը հանձնված էր կալվածքների հանձնախմբին: Մահմեդականների հիմնադրամներին վերաբերող 1935թ. ընդունված 2762 օրենքով ձևավորված վարչություններ կային, սակայն քանի որ դա ոչ մուսուլմաններին չէր վերաբերվում, հետևաբար մինչև 1949թ. ամեն եկեղեցի ներկայացուցիչներ ուներ կալվածքների հանձնախմբի մեջ, որոնք կոչվում էին խնամակալներ: «Սակայն դա էլ հանրապետության սկզբունքներին հարմար չեղավ և 1951թ. որոշվեց թաղային խորհուրդներ կազմավորել», - ասում է Ասլանգիլը¹⁷⁰:

Շենց այս թաղային խորհուրդներն են, որոնք այսօր տնօրինում և կառավարում են եկեղեցուն, հաստատությանը պատկանող ունեցվածքը: Հայկական հիմնադրամների մեծ մասը գտնվում են Ստամբուլում, սակայն Անատոլիայում կան 5 հիմնադրամներ. Կեսարիա -1, Հաթայի շրջանի՝ Վաքըֆլը, Իսթենդերուն և Քըրըքան գյուղերում՝ մեկական, Դիարբեքիր -1: Թուրքիայում կան նաև հայ բողոքական եկեղեցու երկու և կաթոլիկ եկեղեցու ինը հիմնադրամներ: Ասլանգիլը ընդգծում է, որ այս ընթացքում բազմաթիվ հիմնադրամներ պարզապես համայնք չլինելու պատճառով, քանի որ այդտեղ հայություն չէր մնացել,

¹⁶⁹ Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր <https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/>

¹⁷⁰ Նույն տեղում:

գործրինակ Սեբաստիայում, անտերության մատնվեցին և ողջ ունեցվածքն ու հիմնադրամները փոխանցվեցին պետությանը:

1936-1974թթ. ընթացքում իրավական դաշտի այս կարգավորումների համաձայն հայկական հիմնադրամները այլ հիմնադրամների պես առանց որևէ խնդրի գործունեություն ծավալեցին՝ ըստ իրենց առաջնահերթությունների, ձեռք բերելով նոր գույք կամ վաճառելով այն, եթե դրա կարիքը կար¹⁷¹:

Մինչ 1974 թ. իրավական առումով այս հարցում որևէ զարգացում չարձանագրվեց: Կիպրոսյան ճգնաժամի սրացման ժամանակ թուրքական իշխանությունները, ցանկանալով Ստամբուլի հունական համայնքի վրա ճնշում գործադրելու միջոցով զիջումներ ստանալ Հունաստանից, համայնքային կառույցներից պահանջեցին ներկայացնել իրենց պատկանող ունեցվածքի սեփականության վկայագրերը: Գործնականում այս պահանջի իրագործումն անհնար էր, քանի որ վաքըֆները հիմնադրվել էին Օսմանյան ժամանակներում, երբ նման փաստաթղթեր չէին տրվում, ուստի Վաքըֆների գլխավոր տնօրինությունը հայտարարեց, որ դրանց կարող են փոխարինել 1936 թ.-ի հայտարարագրերը: Ընդ որում, քանի որ դրանցում վաքըֆներին վերապահված չէր նոր անշարժ գույք ձեռք բերելու իրավունք (այդպիսի իրավունքներ հայտարարագրերում առհասարակ չեն ամրագրվում), որոշվեց 1936 թ.-ից հետո ոչ մուսուլմանների համայնքային կալվածքներին փոխանցված անշարժ գույքն անհատույց բռնագրավել և վերադարձնել օրինական տերերին, իսկ վերջիններին մահի կամ ժառանգներ չունենալու պարագայում՝ պետականացնել այն: Հաշվի առնելով, որ կալվածքների ձեռք բերած ունեցվածքի մեծ մասը կտակված կամ նվիրաբերված էր միայնակ ծերերի կողմից՝ պարզ է դառնում, որ առգրավված գույքը հիմնականում պետականացվեց:

Այս անօրինությանը վերջ դնելու համար ոչ մուսուլմանները սկսեցին պետության դեմ դատական հայցեր ներկայացնել, սակայն հարուցված դատական գործերը միշտ էլ հոգուտ պետության էին ավարտվում:

¹⁷¹ Նույն տեղում:

Համայնքային սեփականության խնդրի շուրջ նոր զարգացումներ ծավալվեցին 1999 թ.-ից, երբ Թուրքիան պաշտոնապես ճանաչվեց ԵՄ անդամակցելու թեկնածու և սկսվեց եվրոպական պետությունների հետ «ներդաշնակեցման» գործընթացը, որի շրջանակներում ի թիվս այլ խնդիրների Եվրոհանձնաժողովը բարձրաձայնեց ոչ մուսուլմանների վաքըֆների տնօրինման խնդրի շուտափույթ լուծման կարևորությունը: Զուգահեռաբար ոչ մուսուլմանները սկսեցին Թուրքիայի դեմ դատական հայցերով դիմել Մարդու իրավունքների եվրոպական դատարան և դատերը շահել: Պետությունը ստիպված էր որոշակի բարեփոխումներ իրականացնել: 2002թ. Թուրքիայի ընդունած թիվ 4771 օրենքով որոշակի հնարավորություն ստեղծվեց հիմնադրամներին պատկանող ունեցվածքը հետ վերադարձնելու համար: 2002-2003 թթ.-ին ոչ մուսուլմաններին թույլ տրվեց նախարարների խորհրդի կամ Վաքըֆների գլխավոր տնօրինության համաձայնությամբ կրոնական, բարեգործական, կրթական, առողջապահական, մշակութային նպատակներով գույք ձեռք բերել և գրանցել: Ձևականորեն խնդրին լուծում տրվեց: Սակայն նման համաձայնություն ձեռք բերելու գործընթացի բարդության պատճառով՝ 2003-2008 թթ.-ին ներկայացված 1262 հայցադիմումից միայն 366-ը դրական լուծում ստացավ: Այս փուլում սակայն 1974 թ.-ից հետո պետականացված գույքի վերադարձի կամ դրա դիմաց փոխատուցում վճարելու կարևորագույն խնդրին որևէ անդրադարձ չարվեց: Խնդրին լուծում տալու փորձ էր 2005 թ.-ին ընդունված թիվ 5555 օրենքը, որը սահմանափակ շրջանակներում վերականգնում էր ոչ մուսուլմանների Լոզանի պայմանագրով, Թուրքիայի Սահմանադրությամբ և մարդու իրավունքների միջազգային կոնվենցիաներով ամրագրված իրավունքները: Օրենքը սակայն կյանքի չկոչվեց, քանի որ երկրի նախագահ Ա. Սեզերը, պատճառաբանելով, որ դրա հոդվածներից ինը հակասում են ազգային շահերին ու հանրային բարօրությանը, վետոյի իրավունք կիրառեց: Երկրի նախագահի կողմից հնչեցված այս ձևակերպումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ ոչ մուսուլմանները Թուրքիայում համարվում են օտար, թշնամի տարրեր, ում իրավունքներ շնորհելու հարցը դիտարկվում է ոչ թե ներքին իրավա-

կան խնդրի, այլ ազգային անվտանգության տեսանկյունից: 2007 թ.-ի խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ հաղթանակից հետո թուրքական մեջլիսը կրկին անդրադարձավ 5555 օրենքի քննարկմանն ու 2008 թ.-ի փետրվարին առանց փոփոխությունների ընդունեց այն 5737 համարի տակ¹⁷²:

Նոր օրենքով համայնքային կառույցները ստացան անշարժ գույք ձեռք բերելու իրավունք: Վաքըֆներին թույլ տրվեց Վաքըֆների գլխավոր տնօրինության գիտությամբ օգնություն ստանալ արտերկրից, ինչը ենթադրաբար ապագայում հնարավորություն կտար ՀՀ-ից կամ սփյուռքից օրինականորեն աջակցել Ստամբուլի հայ համայնքին: Օրենքի մի շարք կետեր սակայն կրկին ոտնահարում էին ոչ մուսուլմանների շահերը: Նախ օրենքով համայնքային վաքըֆները մնացին Վաքըֆների գլխավոր տնօրինության վերահսկողության տակ, որին իրավունք վերապահվեց միանձնյա որոշել, արդյոք կալվածքները կիրառվում են բարեգործական նպատակներով թե ոչ և, բացասական պատասխանի դեպքում՝ պետականացնել դրանք: Երկրորդ, օրենքն ամրագրեց միջազգային իրավունքի փոխադարձության սկզբունքի կիրառումը: Մեկ այլ պետության քաղաքացիների նկատմամբ ընդունելի այս սկզբունքի կիրառումը սեփական քաղաքացիների կրոնական չափանիշով անջատված մի մասի նկատմամբ միջազգային նորմերի կոպիտ խախտում է և կրոնական խտրականության բացահայտ դրսևորում: Երրորդ, 5737 օրենքով նոր վաքըֆներ ստեղծվելու են գործող քաղաքացիական օրենսգրքի հիման վրա, որն իր հերթին արգելում է ոչ մուսուլմաններին նման կառույցներ ստեղծել: Նորից ակնհայտ է կրոնական խտրականությունը: Չորրորդ, այս օրենքով այն համայնքային հաստատություններին, որոնց հիմնադրման փաստաթղթում նախատեսված է միջազգային շփումների զարգացում, տրվում է միջազգային ասպարեզում ազատ գործելու, նոր մասնաճյուղեր հիմնելու հնարավորություն: Փաստորեն, ոչ մուսուլմանների օսման-

¹⁷² 1999-2008 թթ. խնդրի շուրջ զարգացումների մասին առավել մանրամասն տես Kurban D., Hatemi K., *The story of an alien(ation): Real estate ownership problems of non-Muslim foundations and communities in Turkey*, Istanbul, 2010.

յան շրջանում հիմնադրված վաքըֆները, որոնց փաստաթղթերում նման կետ լինել չէր կարող, նորից անմասն մնացին: Օրենքի վերջին և ամենակարևոր կետը, որ վերաբերում էր բռնագրավված անշարժ գույքի վերադարձին, ևս չի դիմանում ոչ մի քննադատության: Նախ պետականացումից հետո երրորդ կողմերին փոխանցված գույքի համար փոխահատուցում վճարելու որևէ մեխանիզմ սահմանված չէր, իսկ պետության գերակայության տակ գտնվող գույքի վերադարձի համար նախատեսված պայմաններն ու Վաքըֆների տնօրինությանը ներկայացվելիք փաստաթղթերի ցուցակը այնքան մեծ ու բարդ էր, որ անգամ թուրք իրավաբանների կարծիքով օրենքի նշանակությունը զրոյանում էր:

Ավելին, Վաքըֆների տնօրինության արգելքը հաղթահարելուց հետո էլ հայցողները հանդիպում էին պետեզիստրի և վարչարարական այլ մարմինների համար դիմադրությանը: Արդյունքում 2008-2010 թթ. ներկայացված 1410 դիմումներից 181 ստացան դրական, 347-ը բացասական պատասխան, իսկ 893-ը չքննարկվեցին փաստաթղթերի անբավարարության պատճառաբանությամբ¹⁷³:

Վաքըֆների խնդրում իրավական առումով նոր առաջընթաց էր 2011 թ. օգոստոսի 27-ին թիվ 651 որոշումով Վաքըֆների մասին օրենքին կցված 11 հոդվածը, որով պետությունը երաշխավորեց բռնագրավված համայնքային սեփականության վերադարձը օրինական տերերին¹⁷⁴: 2011 թ. Թուրքիայի Հանրապետության պաշտոնաթերթ «Ռեսմի գազետե»-ի թիվ 28071 համարում լույս տեսած թիվ 5737 օրենքի՝ ուժ ունեցող որոշման 11-րդ ժամանակավոր հոդվածի համաձայն՝ «1936 թ. Կանոնադրում գրանցված անշարժ գույքերի, որոնց կալվածքները բաց են, 1936 թ. կանոնադրում գրանցված պետականացումից, վաճառքից և փոխանակումից բացի՝ այլ պատճառներով զանձարանի, Վա-

¹⁷³ Ն. Պողոսյան, «Թուրքիայի ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը (1923-2011 թթ.) համառոտ ակնարկ», *Մերձավոր Արևելք (հոդվածների ժողովածու)*, հ. VIII, Երևան 2012, էջ 309:

¹⁷⁴ 11-րդ հոդվածը ամբողջությամբ տես՝ www.mfa.gov.tr/sub.en.mfa?690ae1fb-2099-44cc-a4f8-925c62e1425a

ըըֆների գլխավոր տնօրինության, քաղաքապետարանի և նահանգային հատուկ վարչության անունով գրանցված անշարժ գույքերի, 1936 թ. կանոնագրում գրանցված հասարակական միությունների անունով գրանցված գերեզմանոցների ու աղբյուրների, գնման կայքագրի (թափու) գրանցման իրավունքի և պարտականության հետ մեկտեղ այս հոդվածն ուժի մեջ մտնելու պահից սկսած 12 ամսվա ընթացքում դիմումի դեպքում, խորհրդարանի դրական որոշումը ստանալուց հետո, կադաստրի տնօրինությունը շահագրգիռ գնման կայքագիրը գրանցելու էր համայնքային վաքըֆի անունով:

Համայնքային վաքըֆների կողմից գնված, համայնքային վաքըֆներին կտակված կամ էլ նվիրատվության դեպքում սեփականություն ձեռք բերել չկարողանալու հիմնավորմամբ Գանձարանի կամ էլ Վաքըֆների գլխավոր տնօրինության անունով գնման կայքագրի մեջ երրորդ անձանց անունով գրանցված անշարժ գույքերի՝ Ֆինանսների նախարարության կողմից հաստատված շուկայական գինը վճարելու էր գանձարանը կամ էլ Գլխավոր տնօրինությունը¹⁷⁵:

Վարչապետ Էրդողանը հայտարարեց, որ իրենց երկրում ցանկացած տիպի խտրականության ժամանակներն անցել են¹⁷⁶: Սեպտեմբերի 7-ին եվրոպական և ամերիկյան դիվանագետների հետ հանդիպման ընթացքում Վաքըֆների տնօրինության գլխավոր տնօրեն Ա. Էրթեմը հայտարարեց, որ այս օրենքում հաշվի են առնված նախորդ օրենքներում տեղ գտած անճշտությունները և արված է ամեն ինչ՝ առավելագույն արդյունք ապահովելու համար¹⁷⁷:

Անշուշտ օրենքի ընդունման հիմքում ընկած էր ոչ թե ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հանկար-

¹⁷⁵ Ա. Քարտաշյան, «Փոքրամասնությունների՝ բռնագրավված անշարժ գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ «պատմական որոշմամբ» նախատեսված ժամանակահատվածը լրացավ» <http://akunq.net/am/?p=24548>

¹⁷⁶ Sebnem Arsu, "Turkish Government to Return Seized Property to Religious Minorities" http://www.nytimes.com/2011/08/29/world/europe/29turkey.html?_r=0

¹⁷⁷ Return of properties belonging to community foundations <http://www.vgm.gov.tr/duyurudetay.aspx?Id=40>

ծակի ծագած հոգածությունը, այլ շատ ավելի պրակտիկ նկատառումներ: Մի կողմից այն ուղղված էր թուրքական կառավարությանը նյութական վնաս պատճառած Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացվող հայցերի քանակի կրճատմանն ու դրանց պատճառով խարխիված միջազգային հեղինակության վերականգնմանը և նույնիսկ բարելավմանը: Մյուս կողմից օրենքը պատասխան էր 2011 թ. հուլիսի 15-ին ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված թիվ 306 բանաձևին, որում Թուրքիային կոչ էր արվում վերադարձնել եկեղեցիները, դպրոցները, հիվանդանոցները, հուշարձանները, սրբավայրերը՝ օրինական տերերին¹⁷⁸: Նշված օրենսդրական ակտի հրապարակումը դրական արձագանք ստացավ միջազգային հանրության կողմից: Թուրք իրավաբան Օրհան Քեմալ Ջենգիզը այս որոշումը նույնիսկ հեղափոխություն անվանեց¹⁷⁹:

Թուրքաբնակ ոչ մուսուլմանները սակայն թերահավատորեն էին մոտենում հարցին՝ ակնկալելով, որ թուրքական դասական տարբերակով կառավարության ընդունած թվացյալ ժողովրդավարական օրենքում տեղ գտած առաջին հայացքից անտեսանելի խտրերը, դուրս մնալով հանրության լայն շրջանակների ուշադրությունից, կխափանեն դրանց լիարժեք կիրառումը: Օրինակ, արդեն հայտնի է, որ պետությունը վերադարձնելու կամ փոխհատուցում է տրամադրելու միայն այն գույքի դիմաց, որ բռնագրավվել է 1936 թ.-ից հետո¹⁸⁰ և մինչ այժմ պետական հովանու տակ է կամ որոշակի գումարով վերավաճառվել է երրորդ անձանց, իսկ Առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին խլված, ինչպես նաև բռնագրավումից հետո նախկին տերերին անհատույց վերադարձված գույքը որևէ կերպ չի փոխհատուցվելու: Բացի այդ անշարժ գույքը ետ վերցնելու կամ փոխհատուցում ստանալու համար անհրաժեշտ է

¹⁷⁸ Նույն տեղում:

¹⁷⁹ Their properties have been given back, what about seized foundations?
<https://www.cihan.com.tr/en/cms-copied-news-on-26-10-519937.htm>

¹⁸⁰ Raffi Bedrosyan, "Special Report: What is Turkey Returning to Armenians?"
<http://armenianweekly.com/2011/08/31/property-return/>

մեջլիսի դրական որոշումը, սակայն դրա համար անհրաժեշտ չափանիշները սահմանված չեն: Թուրք պատմաբան Սաիթ Չեթինօղլուի վկայությամբ պետությունը իր համար խուսանավելու հնարավորություններ է թողել¹⁸¹:

Վաքֆային գույքը մեկն էր այն թեմաներից, որին ամենաշատն էր անդրադառնում Հրանտ Դինքը: Նրա սպանությունից հետո հիմնված «Հրանտ Դինք հիմնադրամը» 2012թ. մի գիրք հրատարակեց, որը վերնագրված է «2012 թ. հայտարարագիրը»¹⁸²: Աշխատությունը պարունակում է մինչ այժմ Ստամբուլում գտնվող հայ վաքֆային ունեցվածքի վերաբերյալ ամենամանրամասն ցուցակը: Սույն գիրքը, որի առաջաբանի հեղինակն է դոկտոր, պրոֆ. Հյուսեյն Հաթեմին, կազմվել է Մեհմեթ Փուլաթելի, Նորա Միլդանօղլուի, Օզգյուր Լեման Էրենի և Մեհմեթ Աթըլզանի կողմից: Այս թիմը, 2 տարի շարունակ արխիվներ, հին քարտեզներ, պետական ցուցակներ են ուսումնասիրել և ավարտին հասցրել սույն գիրքը: Աղբյուրներից մեկն էլ, որից օգտվել են հեղինակները, Հրանտ Դինքի արխիվն է եղել: Մեկ այլ աղբյուր են ծառայել հանգուցյալ փաստաբան Տիրան Բաքարի թղթապանակները... Հենց այս թղթապանակների միջոցով են ձեռք բերվել բազմաթիվ գաղտնի փաստաթղթեր: Ինչպես նշում են ուսումնասիրության մասնակիցները, որոշ տեղեկությունների հաստիքն էր բոլորովին էլ դյուրին չի եղել: Արդյունքում ունենք հետևյալ պատկերը. հաստատված է, թե Ստամբուլում ներկա դրությամբ որ հայկական վաքեֆի ունեցվածքը որտեղ է և ինչ վիճակում է գտնվում. www.istanbulermenivakiflari.org կայքէջում ներբեռնված են դրա մասին բոլոր տեղեկությունները, քարտեզները, ինչպես նաև՝ 200-ից ավել լուսանկարներ: Առկա վիճակն ամփոփվում է գրքի նախաբանի հետևյալ պարբերությունում. «Սույն գրքում պատմվում է ոչ թե քարից, բետոնից շինված կառույցների,

¹⁸¹ Sait Çetinoglu, "Foundations of Non-Muslim communities: The last object of confiscation" <https://neweasternpolitics.wordpress.com/2012/02/28/foundations-of-non-muslim-communities-the-last-object-of-confiscation-by-sait-cetinoglu/>

¹⁸² 2012 Beyannameesi - Istanbul Ermeni vakıflarının el konan mülkleri <http://www.istanbulermenivakiflari.org/>

բռնագրավված շենքերի մասին, այլ՝ միս ու արյունից հունցված մարդկանց պատմության: Այստեղ հիշատակված շինություններն այն արժեքներն էին, որ համատեղ ստեղծել էին այս հողերում ապրած մարդիկ՝ տարեց թե երիտասարդ, կին թե տղամարդ, հարուստ թե աղքատ: Անարդարության ենթարկված այս ունեցվածքը այն նյութական աղբյուրն էր, որը կյանք էր տալիս պաշտամունքի վայրերին, դպրոցներին, որբատներին, ծերանոցներին, մի ողջ հանրության: Թուրքիայի հայերի հասարակական կյանքը և մշակույթը հիմնված էր այս տնտեսական հենքի վրա: Ոչնչացված այդ կյանքի և մշակույթի հետքերը գրանցված են այս գրքում՝ «հնչու» և «հնչպես»-ի հետ մեկտեղ, որպեսզի անարդարությունները վաղը չկրկնվեն...»¹⁸³:

Գրքում պատմություններ են ներկայացված՝ 5 վաքըֆների գույքի բռնագրավման մասին: Արժե մեջբերել այդ պատմություններից մի քանիսը.

Խոլերայի համաճարակի պատճառով որբացածների դպրոցը «ճանապարհի դարձրեցին»

«1865 թ. խոլերայի մեծ համաճարակի ժամանակ բազմաթիվ երեխաներ են որբ ու անտեր մնում: Մայրապետ Սրբուհի Նշան Գալֆայանն ստանձնում է 2-10 տարեկան 17 որբացած աղջիկների խնամքը: Հասքոյում (*Խասցյուղ*՝ *թաղամաս Ստամբուլում-Ա. Շ.*) գտնվող իր տանը երեխաներին թե՛ զբաղեցնելու և թե՛ պահել կարողանալու համար սկսում է ձեռագործ ուսուցանել: Այդ անձնական նախաձեռնությունից հետագայում ծնվելու է Գալֆայան որբատունը, որը դառնալու է Ստամբուլի և այստեղի հայկական համայնքի ամենակարևոր կրթական հաստատությունը»: Բսկ ի՞նչ եղավ նման մարդկային նպատակով հիմնված այս որբատան վերջը: Երկար ժամանակ աղջիկ երեխաների համար բույն ծառայած Հալլըջօղլուում գտնվող որբատան՝ փայտից կառուցված շենքը 1960-ականների վերջերին ազգայնացվեց՝ դեպի Բոսֆոր մուտքի և իրար կապող ճանապարհների համար: Առարկություններն ապարդյուն մնացին: Քանի որ հայկական գույքը բռնագրավվել էր, թույլ չտրվեց, որ նրանք այլ շենք

¹⁸³ Նշվ. աշխ.:

տեղափոխվեն: Գալֆայան դպրոցը մոտ 30 տարի գործեց նեղլիկ, փայտե տներում: Հետագայում Ուսքյուդարում (*Սկյուտար*՝ թահամաս Ստամբուլում-Ա.Հ.) գտնվող նախակրթարանի դպրոցի հետ համատեղ օգտագործեց այս դպրոցի շենքը:

Իր իսկ կառույցի համար տարիներ շարունակ վարձ մուծած դպրոցը

Սուրբ Ղազար կղզու հայ կաթոլիկ Մխիթարյան միաբանության կողմից 18-րդ դարում հիմնված դպրոցներից մեկը 1958 թ. փոխադրվեց Էմինե Թեֆիքա Այաշլից 710 հազար լիրայով գնված շենքը և անվանվեց Բոմոնթիի հայ կաթոլիկ մասնավոր նախակրթարան: Սակայն Վաքըֆների ընդհանուր տնօրինությունը, այն հիմնավորումը բերելով, թե շենքը չի հիշատակվել «1936 թ. հայտարարագրի» մեջ, դատական գործ հարուցեց՝ կառույցը «նակլիսին տիրոջը վերադարձնելու» պահանջով: 1984 թ. դատարանը դատավճիռ կայացրեց, և շինությունը, որպես Էմինե Այաշի ժառանգություն, փոխանցվեց Անկարայի Աշայի քաղաքապետարանին և Այաշլը եղբայրներին: Վերջիններս իրենց արժեթղթերը վաճառել էին Միլթաշ անվամբ ընկերությանը: 1998 թ. վաքըֆը վարձատու դարձավ, որը վճարում էր այն կառույցի դիմաց, որը 30 տարի առաջ գնել էր: «Անցյալում չտրված վարձի պարտքն» էլ սկսեց մաս-մաս մարել: Սակայն Միլթաշ ընկերությունն իր առարկությունը հայտնեց պայմանագրի հարցում և բռնագրավման համար փոխհատուցման դատական գործ հարուցեց վաքըֆի դեմ: 1999 թ. փետրվարի 2-ին շենքն ազատելու մասին որոշում կայացվեց, և դպրոցը դատարկվեց: Կառույցից դուրս շպրտվեցին այնպիսի բազմաթիվ իրեր, ինչպիսիք են՝ գրապահարանները, նստարանները, խաղալիքները և դաշնամուրը: Աշակերտները ձմռան կեսին առանց դպրոցի էին մնացել: Դպրոցի սաների ընտանիքները չհնազանդվելու գործողություն ձեռնարկեցին, մի բան, որ հազվադեպ էր հանդիպում թուրքիայի հայերի շրջանում, և ճամբար դրեցին դպրոցի այգում: Այնուհետև նրանք շենք վերադարձան, և վաքըֆի տերը եղող շենքին տարի-

ներ շարունակ վարձ վճարվեց: 2012 թվականի նոյեմբերի 1-ին այս կառույցը վերջապես վերադարձվեց վաքըֆին¹⁸⁴:

«Հայկական վաքըֆներին պատկանած 661 միավոր գույք է բռնագրավվել տարբեր պատճառներով: Դրանցից միայն 143-ն են վաքըֆին վերադարձվել՝ վերջին 10 տարիների ընթացքում կատարված օրինական փոփոխությունների արդյունքում: Այդ թիվն էլ կազմում է 1328 միավոր վաքֆային անշարժ գույքի 10.77 տոկոսը միայն»,- գրում են գրքի հեղինակները¹⁸⁵:

Բազմաթիվ խնդիրներ էին ծագում նաև պետության կողմից իբր երաշխավորված փոխհատուցումների հետ կապված: Այսպես, Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆն իր առարկությունն էր հայտնել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ: Պոլսահայ «Ակօս» շաբաթաթերթի համաձայն՝ Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆը փոխհատուցման գումարի չափը վիճարկելուց առաջ դիմել էր մասնագետների, որոնք գնահատել էին իրեն պատկանող սույն անշարժ գույքը: Գնահատող մասնագետները 550 հազար լիրա էին գնահատել Ստամբուլի Գում Գափու թաղամասում գտնվող այդ քառահարկ շինությունը, որը խլվել էր Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆից և նախկինում եղել հայ օրիորդաց որբատուն: Եկեղեցին իր առարկությանը կցել էր նաև գնահատող մասնագետների զեկույցները: Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վաքըֆը դիմել էր, որպեսզի վերադարձներ 1980 թ. պետական գանձարանին անցած այդ անշարժ գույքը և դրական պատասխան ստացել: Դա համարվել էր Թուրքիայում ազգային փոքրամասնության համայնքին տրված «առաջին» փոխհատուցման որոշում: Վաքըֆների գլխավոր տնօրինությունը ընդամենը 147 հազար 143 լիրայի չափով դրամական փոխհատուցում էր սահմանել այդ քառահարկ շինության համար, որը 8 բնակարան է ընդգրկում: Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու և դպրոցի վաքըֆը որոշել էր բողոքարկել այդ որոշումը:

¹⁸⁴ Նույն տեղում:

¹⁸⁵ Նույն տեղում:

Վաքըֆի նախագահ Գրիգոր Աղաբալտյուն թուրքական «Վաթան» պարբերականի հետ զրույցում նշել էր. «Մեզ տրվելիք փոխհատուցումը շատ ծիծաղելի է: Բոլորը Ստամբուլում գիտեն, որ Գում Գափուտում տները թանկ են: Այստեղ մեկ բնակարանը 150 հազար լիրայով է վաճառվում: Դժվարանում ենք հասկանալ, թե պետությունն ինչպես է այդ գինը սահմանել: Պետությունը 30 տարի շարունակ այստեղի վարձն է ստացել, վաճառել և գումար վաստակել: Նրանք պետք է Աստծուց վախ ունենան: Այս կառույցը պահանջել ենք դեռևս 5-6 տարի առաջ, երբ հրապարակվեց Բարեփոխումների սկիզբ դարձած 4771 թվակիր օրենքը: Սակայն չտվեցին: Հետո, չնայած որ դատական գործ էինք հարուցել, չենքը հապշտապ վաճառվեց ումն Մուրադ Ասլանի»¹⁸⁶:

Համաձայն Վաքըֆների գլխավոր տնօրինության ներկայացրած տվյալների՝ հայկական համայնքային անշարժ գույքը վերադարձնելու որոշման շրջանակում 165 համայնքային վաքըֆից 56-ը 430 անշարժ գույքի վերաբերյալ դիմում է ներկայացրել, որից որոշվել է 51 անշարժ գույքը հետ վերադարձնել, մեկ անշարժ գույքի գինը վճարել: 32 դիմում մերժվել է: Մերժվել էր նաև Թուզլա կամ «Քամփ Արմեն» ճամբարը հետ վերադարձնելու դիմումը¹⁸⁷:

«Քամփ Արմեն» հայկական ճամբարը Ստամբուլի Թուզլա շրջանում գտնվող լքյալ ու կիսաքանդ մի շինություն է: Ներկայումս ավերակի վերածված շինությունը ժամանակին եղել է չքավոր ու որք հայ երեխաների ամառային ճամբարը: Այն 1961 թվականին գնվել է Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամի կողմից և ծառայել է որպես ամառային ճամբար՝ Գեղիքփաշայի հայկական դպրոցի չքավոր ու որք սաների համար: Այստեղ են մեծացել նաև 2007 թվականին Թուրքիայում սպանված հայտնի հայ լրագրող Հրանտ Դինքը և նրա կին Ռաբել Դինքը: Հետագայում ճամբարը թուրքական իշխանությունների կողմից ապօրինաբար խլվել էր հայ համայնքի ձեռքից: 2015 մայիսի 6-ի առավոտյան

¹⁸⁶ Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆն իր առարկությունն է հայտնել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ <http://akunq.net/am/?p=25748>

¹⁸⁷ Ա. Քարտաշյան, նշվ. աշխ.:

ճամբարի ներկայիս սեփականատիրոջ նախաձեռնությամբ սկսվել էր ճամբար-մանկատան ապամոնտաժումը, սակայն կարճ ժամանակ անց Թուրքիայի հայկական համայնքի սկսած բողոքի լայնածավալ միջոցառումների շնորհիվ շինության ապամոնտաժումը ժամանակավորապես հնարավոր եղավ դադարեցնել: Թուրքական «Ենի Շաֆաթ» պարբերականի իր պունակում հայտնի լրագրող Ալի Բայրամօղլուն, ով նաև «Ներեցեք մեզ, հայեր» ակցիայի ակտիվ անդամներից է, բարձրացրել էր Ստամբուլի «Քամի Արմեն» որբանոց-ճամբարի ոչնչացման հարցը: Բայրամօղլուն նշում էր, որ իրեն է զանգահարել Հրանտ Դինքի եղբայր Լևենթ Դինքը՝ խնդրելով բարձրաձայնել հայերի համար մեծ նշանակություն ունեցող որբանոցը քանդելու մասին: «Այս երկրում ոչ մուսուլմանների գույքին անվերջ տիրանալու համար ամեն ժամանակ իր տեխնիկան ունի», - նշում էր հեղինակն ու օրինակներ բերում, թե ինչպես հանրապետական Թուրքիայի տարբեր ժամանակաշրջաններում պետությունը տիրացել է ազգային/կրոնական փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի գույքին: «Մարդկանց բարձրացրած աղմուկը պետք է լսեն Թուրքիայի նախագահը, վարչապետը, ԵՄ հարցերի նախարարը, արտգործնախարարը: 1915-ի ցավակցությունը բավարար չէ: Խնդիրն այս ոչնչացմանն ու ավերմանը վերջ տալն է: Մի քանի օր անց կարող է ժառ ուշ լինել», - գրում էր Բայրամօղլուն¹⁸⁸: 2015թ. հոկտեմբերի 27-ին, երբ լրացավ ապամոնտաժումը թույլ չտալու նպատակով «Քամի Արմեն»-ում սկսված հերթապահության 175-րդ օրը, ճամբարը վերադարձվեց հայ համայնքին և «Քամի Արմեն»-ի սեփականության վկայականը հանձնվեց Գեղիքփաշայի Հայ բողոքական եկեղեցու հիմնադրամին¹⁸⁹:

Հայկական կալվածքների հարցի վերաբերյալ «Ակունք»-ի հետ զրույցի ժամանակ «Ակու» շաբաթաթերթի հայերեն բաժնի խմբագիր Բագրատ Էստուկյանը ցավով նշել էր, որ կատարվածի

¹⁸⁸ Ali Bayramoğlu, "Kulak verin: Kültürü yıkmak, belleği asagilamak..." <http://www.yenisafak.com.tr/yazarlar/alibayramoglu/kulak-verin-kulturu-yikmak-bellegi-asagilamak-2010609>

¹⁸⁹ «Քամի Արմեն»-ը վերադարձվեց հայ համայնքին. Ermenihaber <http://www.azatutyun.am/archive/news/20151027/2031/2031.html?id=27329570>

մեջ մեղավոր է նաև Պոլսո հայ համայնքը. «Դժբախտաբար մենք որպես համայնք այնքան էլ լավ կազմակերպված չենք: Հայտնի է, որ մեր արխիվները շատ անմխիթար վիճակում են: Մենք մեր ունեցվածքը ճշգրիտ չենք գրանցել և պահել, որպեսզի հարկ եղած դեպքում ներկայացնենք, թե այսինչ կալվածքն ունեինք, այսինչ թվականին այսպես եղավ, այնինչ թվականին էլ՝ այսպես, և անիրավորեն ձեռքներիցս խլեցին: Մենք դժվարացանք սատվալներով փաստել: Շատ քիչ հաստատություններ էին խնամքով կազմել իրենց կորցրած ինչքերի ցանկը: Հետևաբար կա մեզ հաստուկ համայնքային թերացում: Մենք չպահանջեցինք մեր իրավունքների կարևոր մեծ մասը: Եվ այս պարագայում, հակառակ այն բանի, որ մեզանից որոշները համառորեն պայքարել են, սակայն մենք, որպես համայնքային իշխանություն, պահանջատեր չենք եղել, հետևաբար՝ այսօրվա եղելությունը դիտում ենք որպես կառավարության շնորհ, կառավարության բարի կամքի դրսևորում: Ճիշտ է, եթե կառավարությունը հակառակ դիրքորոշում որդեգրի, մենք անելու շատ բան չունենք: Պետք է նաև շեշտել, որ այս համայնքում եղել են մարդիկ, ովքեր պահանջել են իրենց իրավունքները, ձայն են բարձրացրել անարդարության դեմ, որքան որ հնարավոր է՝ դիմել են դատարաններ: Ճիշտ է, դատարաններն այս համակարգի մաս են կազմել և ոչ թե արդարությամբ են շարժվել, այլ՝ քաղաքականությամբ: Եթե այսօր կա որոշ առաջընթաց, ապա այդ մարդկանց պայքարի հետևանքն է, ցավոք, այսօր սրա մասին չեն հիշում: Օրինակ՝ իրավաբան Տիրան Բաքար կար, որ այս ուղղությամբ հսկայական աշխատանք է կատարել: Հրանտ Դինքը «Ակօս»-ում համառորեն հրապարակումներ է տպել այս անարդարության դեմ, բայց ոչ Տիրան Բաքարն էր այս համայնքի կողմից սիրված իրավաբան եղել, ոչ էլ Հրանտ Դինքը՝ սիրված լրագրող: Պատճառն այն է, որ այս համայնքի դիմագիծը ներկայացնողը առհասարակ պահպանողականներն են, և նրանք իրենց ձեռքից խլվածի համար այն գիտակցումն ունեն, թե «ինչ կարող ենք անել, պետություն է, եթե չուզի՝ ջուր էլ չի տա, ծարավ կմնանք»: Ահա այս հոգեբանության կրողն են: Միչդեռ մյուսները պայքարելու որոշ փորձ ունեն և պահանջատեր են: Պահպանողականները նաև միաժամանակ

իշխանություն են ձեռք բերել: Իշխանությունն այն տարրերն են, ովքեր ներկայացնում են ստամբուլահայ համայնքը: Պատրիարքարանը պահպանողականների բերդն է, հասկանալի է, քանի որ եկեղեցի է: Մեր թաղական խորհուրդները, մեր բոլոր բարերարները ևս այդ պահպանողականների մասն են կազմում: Պահպանողականներն ունեն նույն հետաքրքրություններն ու մտայնությունը, ինչ որ Օսմանյան կայսրության ժամանակ մեր ամիրաների դասն ու մեծահարուստներն ունեին»¹⁹⁰:

«Քամփ Արմենի» օրինակը ցույց է տալիս, որ ի հեճուկս թուրքական օրենսդրական բազմաթիվ խոչընդոտների առանձին դեպքերում հետևողական պայքարը կարող է բերել հաջողության: Պոլսահայ փաստաբան Մեպուհ Ասլանգիլը շեշտում է, որ աշխարհի տարբեր երկրներում փոքրամասնությունների իրավունքները կարգավորելու համար տարբեր օրինավոր լուծումներ են եղել, սակայն Թուրքիան միշտ խուսափել է հարցին օրինականության տեսանկյունից մոտենալ: «Թուրքիան միշտ աշխատել է շրջանցել փոքրամասնությունների և նրանց իրավունքների հարցը, և, հատկապես դպրոցներ ունեցող հիմնադրամները բազմաթիվ նեղություններ են տեսնում, սա էլ ինքնին ԵՄ սկզբունքներին հակասող սկզբունք է,- ասում է նա,- ճիշտ ճամփան հատուկ օրենք ձևավորելն է, որում; անշուշտ պատրիարքարանի կարգավիճակի հարցն էլ պիտի լուծվի, քանի որ Պոլսո պատրիարքարանը ստատուս չունի և, հետևաբար, գրկված է կալվածք ունենալու իրավունքից»: Ասլանգիլը նաև նշում է, որ մեր հիմնադրամներին պատկանող հողերի մեծ մասը խոշոր քաղաքների կենտրոնում են, մեծամասնությամբ՝ Ստամբուլում, և դա է պատճառը, որ պետությունը դրա վերադարձը դժվարացնում է, քանի որ դրանք մեծ արժեք ունեն:

Թե ինչ արժողությամբ ունեցվածք է բռնագրավել Թուրքիան կրոնական փոքրամասնություններից, կամ դրա որ մասն է հայկական, գնահատված չէ. փաստաբանը միայն հղում է անում Ռեջեփ Թայյի Էրդողանի հայտարարությանը, որ այս ընթացքում 3-4 մլրդ. դոլարի ունեցվածք է հետ վերադարձվել: «Մա

¹⁹⁰ Ա. Քարտաշյան, նշվ. աշխ. :

վերաբերվում է բոլորին, սակայն իրենք վերադարձրել են ընդամենը 10-15 տոկոսը, ընդ որում այն գույքի, որոնք 1936թ. ցուցակներում են», - նշում է Ասլանգիլը:

Մեկ տարի ժամանակային հատվածում իրավական ուժ ունեցող 5737 օրենքի 17-րդ հոդվածի 11-րդ ժամանակավոր ենթահոդվածով նախատեսված դիմումների ընդունումը ավարտվել է 2012թ. օգոստոսին, սակայն դիմումները քննելու ընթացքը շարունակվում է: «Տարբեր գործերի վերաբերյալ բազմաթիվ տարակարծություններ կան, որոնք դատական համակարգով շարունակվում են, բայց անոնց դատը ներկա օրենքներով լուծման ենթակա չեն և բողոքարկվում են ՄԻԵԴ-ում», - ասում է Ասլանգիլը¹⁹¹:

Մինչ համայնքների գույքի վերադարձման հարցը դեռ մնում է չլուծված, թուրքական իշխանությունները փոքրամասնություններին պատկանող կալվածքների բռնագրավման նոր նախադեպեր են ստեղծում: Այսպես, Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից ս.թ. մարտի 25-ին պետականացման որոշում էր ընդունվել շուրջ 6.300 տարածքի ու անշարժ գույքի վերաբերյալ, որոնց շարքում են հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին, ասորական ու բողոքական եկեղեցիները:

Հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին գրեթե 100-ամյա լքվածությունից հետո ամբողջովին վերաբացվել էր 2012թ. նոյեմբերի 3-ին, ինչից հետո այն դարձել է տեղի հայերին միավորող կարևորագույն կենտրոն: Վերանորոգման ծախսերի մեծ մասը հոգացել էին թուրքահայ մեկենասները, մի մասն էլ տրամադրել էր Դիարբեքիրի քաղաքապետարանը: Մբ. Կիրակոսը Մերձավոր Երևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է: Դիարբեքիրի Սուրբ Արևելքի ամենամեծ հայկական եկեղեցին է: Դիարբեքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցու հիմնադրամը դատական հայց է ներկայացրել եկեղեցին պետականացնելու մասին Թուրքիայի նախարարների խորհրդի կողմից ընդունված որոշումը չեղյալ հայտարարելու պահանջով: Թուրքիայի կառավարության և տա-

¹⁹¹ Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր
<https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/>

վարչարարական համակարգը ամեն կերպ փորձեց տապալել դրանք: Որպես հետևանք բարեփոխումների իրագործումը գրեթե ձախողվեց: Ավելին, թուրքական իշխանությունների վերջերս ընդունած որոշումը՝ հայկական Սուրբ Կիրակոս եկեղեցին, ասորական ու բողոքական մի շարք եկեղեցիները պետականացնելու վերաբերյալ տագնապալի ցուցիչ է առ այն, որ Թուրքիան փորձում է վերադառնալ ազգային փոքրամասնությունների գույքագրկման իր ավանդական քաղաքականությանը:

Անվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը: Բռնի տեղահանումն ու ջարդը ուղեկցվում էին հայերի ունեցվածքի թալանով և մշակութային արժեքների ոչնչացմամբ: Ընդհանուր առմամբ, փորձագետներն այդ գործողությունները որակում են որպես Օսմանյան կայսրության հայ բնակչության անհատական և կոլեկտիվ ունեցվածքը նորահայտ թուրքական և քրդական (մահմեդական) «սեփականատերերին» ապօրինաբար փոխանցելու պլանավորված ձեռնարկում:

Հայերի ցեղասպանության բնութագրական առանձնահատկությունն էր քաղաքացիական բնակչության մասնակցությունը, ընդամին պետության ոճրագործությանը մեղսակցումը կատարվում էր անձնական շահերի՝ հայերի ունեցվածքի թալանի հիմքի վրա: Դրանով պետությունը ոչ միայն պատասխանատվության մի մասը բարդում էր շաքբային մահմեդականների վրա, այլև ինչ-որ չափով ապահովում էր զանգվածների աջակցությունն իր գործողություններին:

Այսպես կոչված «ազատագրական» պատերազմ սկսած Աթաթյուրքը ևս հենվում էր հայերի ու հույների վրեժխնդրությունից վախեցող՝ անատոլիական վերնախավի (հիշենք թուրքքրդական համագործակցությունը), ինչպես նաև երիտթուրքերի կուսակցության՝ հայերի ու հույների զանգվածային կոտորածի կազմակերպման համար օսմանյան օրենքով հետապնդվող անդամների աջակցության վրա: Ուստի հայերի ցեղասպանության ժխտումը համապատասխանում էր արևելյան վիլայեթների մահմեդական բնակչության բոլոր խավերի կենսական շահերին: Հենց այդ հանգամանքը դարձավ տեղական վերնախավի նախաձեռնությամբ Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության ստեղծման հիմնական պատճառներից մեկը: Իթրիհադականների հանցագործություններին և բռնի տեղահանված հայերի ունեցվածքի յուրացմանը մեղսակցումը վախեցրեց

այդ խավի ներկայացուցիչներին և դարձավ Անկարայի կառավարության հետ նրանց մերձեցման գլխավոր պատճառը:

Այսպիսով, Հայոց ցեղասպանությունը դիտարկելով որպես «ապակազմավորման և կազմավորման համաժամանակյա գործընթաց», տեսնում ենք, թե ինչպես է մի խմբի ոչնչացման հաշվին կազմվել, ստեղծվել մեկ ուրիշը՝ նոր թուրքական նույնականությամբ: Ըստ ազգայնական տեսլականի՝ նոր թուրքական ազգային պետության ստեղծման նախագիծը, հանրապետության տնտեսական հզորության հենքային բաղադրամասերի ստեղծումը, ձևավորվող խոշոր մահմեդական/թուրքական բուրժուազիայի ձեռքում կապիտալի նախնական կուտակումը (այսինքն՝ «ազգային տնտեսության» վերաբերյալ պանթուրքիստական գաղափարի մարմնացումը՝ «Milli İktisad»-ը) նշանակալի չափով իրականացան հայերի, հույների, ասորիների, այսինքն՝ թուրքերի համաքաղաքացի քրիստոնյաների, ցեղասպանության, արքունի և ունեցվածքի յուրացման միջոցով:

Հետևաբար միանգամայն արդարացի են այն պնդումները, որ Թուրքիայի Հանրապետությունը հիմնված է 1915 թ. Հայոց ցեղասպանության վրա:

2005 թ. Թուրքիայի կադաստրային վարչությունը ձեռնամուխ եղավ իր գերատեսչության շրջանակում գտնվող, օսմանյան շրջանի փաստաթղթերի թուրքացման, թվայնացման և հետագայում՝ Պետական արխիվային գլխավոր վարչությանը հանձնելու TARBIS ծրագրին: Այդ աշխատանքները իրականացնելու ընթացքում ի հայտ էին եկել որոշ փաստաթղթեր, որոնց մասին վարչությունը տեղեկացրել էր Ազգային Անվտանգության Խորհրդին: 2005 թ. օգոստոսի 26-ին գաղտնի նամակով ԱԱԽ Ձինակոչի և պատերազմական գործողությունների նախապատրաստման պլանավորման բաժնի ղեկավար՝ բրիգադային գեներալ Թայյար Էլմասը հայտնում է, որ մատյաններում առկա տեղեկությունները Էլմասը հայտնում է, որ մատյաններում առկա տեղեկությունները Էթնիկ և քաղաքական, այն է՝ անհիմն ցեղասպանության պնդումներ, օսմանյան վակուֆների պահանջներ և նմանատիպ այլ անցանկալի շահարկումների տեղիք կարող են տալ, ուստի նպատակահարմար է այդ նյութերը գաղտնի պահել և սահմա-

նափակ անձանց կողմից օգտագործելու իրավունք տրամադրել¹⁹³:

Տեղեկատվական արտահոսքի հետևանքով այս նյութը հայտնվել էր որոշ թուրքական թերթերի էջերում պարզաբանումներով, որ մատյաններում նշված էին, անուն առ անուն, այն մարդկանց ցուցակները, որոնք անշարժ գույքի տեր են եղել Թուրքիայում՝ նախկան 1915 թ. դեպքերը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ օսմանյան պետությունում դարերի ընթացքում մշակվել էր ռայաներից հարկ հավաքելու նպատակով մանրակրկիտ գրառումներ կատարելու պրակտիկան, կարելի է չկասկածել, որ հայտնաբերված ցուցակները իրոք «վտանգ» էին ներկայացնում այսօրվա Թուրքիայի համար:

Ի դեպ, երիտասարդ հետազոտողների մի խումբ դիմել էր Հռոդի և փախստականների տեղավորման վարչության արխիվ՝ (Toprak ve Iskan Genel Müdürlüğü) տվյալներ ստանալու համար: Դիտարկվել էին Kilis, Antakya և Idlib (Cisr-i Şugur) բնակավայրերի տեղական արխիվային նյութերը: Այստեղ առկա էին բազմաթիվ նշանակություն չունեցող փաստաթղթեր, նաև մանրամասն գույքացուցակներ՝ կով, ալրադագ, կոշիկ, կահկարասի և այլն: Տերերի անուններն էին բացակայում¹⁹⁴:

Այսպիսով, հայերի «լքյալ գույքի» թեման դարձավ Թուրքիայի հանրային քննարկման առարկա:

«Nor Zartonk» կազմակերպության կարծիքով, լուսահոգի Հրանտ Դինքի՝ թուրք իշխանություններին նետած մարտահրավերներից կարևորագույնները երեքն են.

1.1915 թ. հայերի հանդեպ իրականացրածը ցեղասպանություն էր:

2.Հայ որբերի ճակատագիրը՝ «թաքուն» հայեր, բռնի իսլամացում, «թուրք ինքնության ճգնաժամ»:

¹⁹³ «Osmanlı arşivleri açılırsa resmi tez zayıflar», www.ulkucuderlerbize.com/forum/-t

¹⁹⁴ Sait Çetinoğlu, « Ermeni Emval-i Metrukeleri Üzerine -1 », www.norzartonk.org/xml

3.Ինչ եղավ հայերի գույքի հետ: Հրանտ Դինքը՝ 2005 թ. «Ռադիկալ» օրաթերթի լրագրող Նեշե Դյուզելին տված հարցազրույցի ժամանակ հետևյալ խոսքերն էր ասել. «Հայոց գույքի խնդիրն իրականում ներկա պահին Թուրքիայի՝ ապագային վերաբերող ամենասարսափելի, ամենաահավոր հարցն է...»: «Բսկ ինչու» հարցին հետևյալ պատասխանն էր տվել. «Որովհետև կրացահայտվեն անհավատալի ճշմարտություններ: Եթե հարց բարձրացվի, թե ում միջև է բաժանվել հայերից մնացած գույքը, և «ու՛մ ինչ է պատահել», դա շատ մեծ ցնցում կհարուցի»¹⁹⁵: Այս երրորդը, թերևս ամենավտանգավորը թուրքական «derin devleti»՝ խորքային պետության համար, պատճառ դարձավ նրա սպանությունն իրագործելու համար:

Ամփոփելով, փորձենք պատասխանել մի քանի կարևոր հարցերի.

– Արդյո՞ք ժամանակակից Թուրքիան պատասպանատու է Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրի համար:

Զիտրանալով Թուրքիայի իրավահաջորդության, հետևաբար և պատասխանատվության խնդրի մեջ¹⁹⁶, նշենք որ, օրինակ հայտնի միջազգային օրենքի մասնագետ Ալֆրեդ դե Զայասի կարծիքով, հանցագործության «պտուղներից» գիտակցաբար օգտվելը նույնպես պատասխանատվություն է առաջացնում¹⁹⁷: Բացի դրանից, հանրապետական Թուրքիայի իշխանությունները նույնպես ազգային փոքրամասնությունների նկատմամբ շարունակեցին երիտթուրքերից ժառանգած հալածանքների, վտարման և ունեզրկման քաղաքականությունը:

– Ինչո՞ւ է Թուրքիան համառորեն ժխտում ցեղասպանության փաստը, դրանով իսկ ժխտելով սեփական պատմությունը:

¹⁹⁵ Neşe Düzel, “Neden? Hrant Dink”, www.radical.com.tr/haber.php?/2005/05/23
Stu նաև Ayşe Hür, “Ermeni mallarını kimler aldı?”, www.taraf.com.tr/ayse-hur/makale/2008/02/03

¹⁹⁶ Ю. Барсегов, “К вопросу о применимости Конвенции к геноциду армян», *Ноев ковчег*, N 6(64), июль 2003, <http://genocide.ru/lib/barsegov/question.htm>

¹⁹⁷ Alfred de Zayas, *The Genocide against Armenians 1915-1923 and the relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005, p. 27.

«Թուրք ազգային ինքնությունը» խարսխված է պատմության խեղված ներկայացման վրա: «Հայարտ թուրքը, որը ժառանգորդն է անկախության համար մղված պայքարի» արդյոք կուզենա՞ իրեն տեսնել որպես ժառանգորդ հանցագործի, մարդասպանի, կոդոպտիչի: Գուցե բացարձակ ժխտումը ավելի՞ ձեռնտու է: Մանավանդ որ փոխհատուցման խնդիր կծագի: Ինչպես նշում է թուրք հրապարակախոսներից մեկը այսօր Հայոց ցեղասպանության ճանաչումը նշանակում է ամեն ինչ դնել սեղանին. հանրապետությունը, քեմալիզմը, պետությունը, պետական գաղափարախոսությունը, Թուրքիայի ռեժիմը, ղեկավարներին, քաղաքական համակարգը, բանակը, ուսումնական ծրագրերը և այլն¹⁹⁸: Թուրք պատմաբաններ Թաներ Աքչամը և Ումիթ Քուրթն իրենց «Օրենքների ոգին. «Լքյալ գույքի» մասին օրենքներում ցեղասպանության ձգվող հետքը» գրքում¹⁹⁹ պնդում են, որ հայերի ողջ ունեցվածքի զավթումը կարևորագույն դեր է խաղում Հայոց ցեղասպանության ժխտողականության մեջ: Հարցազրույցներից մեկում Թ. Աքչամը նշում է. «Եթե պետությունը 1915 թ. իրագործած հանցագործությունները ճանաչի, հարկադրված կլինի ընդունել նաև այդ մարդկանց կրած վնասները հատուցելու անհրաժեշտությունը: Դրա համար էլ նախընտրում է ժխտել:

Մենք նաև բացահայտեցինք մեկ այլ ճշմարտություն, որի մասին դեռ ոչ ոք չգիտե: Դա ևս շատ ուշագրավ կետ է իրականում: Մենք ցույց տվեցինք, որ Լքյալ գույքերի առնչությամբ հրապարակված բոլոր օրենքներում ու որոշումներում թե օսմանյան կառավարությունը և թե՛ հանրապետական շրջանի կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են: Կառավարությունները կա՛մ անել են, թե հայերի գույքը բռնագրավվում է՝ «դրա արժեքը տիրոջը հատուցելու համար», ինչպես դա երևում է իթթիհադականների օրինակում, կա՛մ էլ հայտնել, թե «քանի որ գույքի իրական տերերը վերացել են, ապա մենք ժամանակավոր կեր-

¹⁹⁸ Erol Özkoray, "Ermeni Soykırımı niçin hâlâ tabu?", *KÜYEREL*, 10.03.2010.

¹⁹⁹ Taner Akçam, Ümit Kurt, *Kanunların Ruhü. Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek*, İletişim Yayınları, İstanbul 2012

պով տիրոջ անունից տեր ենք կանգնում այդ ունեցվածքին, որ-պեսզի վնաս չհասցվի դրան»: Այդ պատճառով էլ երկու ժամա-նակաշրջաններում էլ կրկնվել է այն սկզբունքը, ըստ որի՝ հայերին անպայման տրվելու է կամ գույքի փոխհատուցում, կամ էլ՝ հենց ունեցվածքն ինքը: Դա է օրենքների էությունը: Ուշագրավ է, որ հատկապես հանրապետական շրջանում հրա-պարակված օրենքներից ոչ մեկում չի ասվում՝ «մենք բռնա-զավթել ենք այս գույքը. այն հայերինը չէ»: Նշվում է, թե «դրանք ղեկավարվել են հայերի անունից»: Այսինքն՝ մեր ձեռքի տակ գտնվող օրենքների համաձայն ևս կառավարությունը հարկա-դրված է հայերին վերադարձնել նրանց ունեցվածքը կամ տալ դրա հատուցումը»²⁰⁰:

– Ինչո՞ւ է Թուրքիան կատաղի պայքար մղում տարբեր երկրների խորհրդարաններում Հայկական բանաձևների ընդուն-ման դեմ և փորձում խնդիրը տեղափոխել «պատմական հար-թություն»:

Թուրքիան, ձգտելով անդամակցել ԵՄ-ը, ընդգրկվում է միության անդամների օրենսդրական դաշտ, այդ թվում այն երկրների, որոնք իրենց օրենսդրական մարմինների կողմից ճա-նաչել են ցեղասպանությունը: Հետևաբար հայերը, ցեղասպա-նության զոհերի ժառանգները, տեսականորեն հնարավորություն կարող են ստանալ փոխհատուցման պահանջ ներկայացնելու:

Ցեղասպանության պես ծանր ոճիրից Թուրքիան օգուտ է քաղել: Միջազգային իրավունքը հռչակում է «*ex injuria non oritur jus*», այսինքն՝ հանցագործը չպիտի վայելի իր հանցագործության պատուղները, ուստի և հանցագործության հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել: Այսպիսով, հայության կարևորագույն խնդիրներից մեկն է՝ ձեռնամուխ լինել պահան-ջատիրության լուրջ և մանրակրկիտ իրավաբանական-փորձա-գիտական հայեցակարգի և փաթեթի ձևավորմանը:

²⁰⁰ Թաներ Աքչամ. «Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են» http://akunq.net/am/?p=26815&print=1#comments_controls#comments_controls

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայերեն

1. Ահարոնյան Գ., *Մեծ երազի ճամբուն վրայ (Ակնարկ Հայկական հարցի պատմության վրայ)*, Պեյրուք, 1964
2. Աստոյան Ա., «Հայերն օսմանյան տնտեսության մեջ» <http://hetq.am/arm/news/31209/hayern-osmanyan-tntesutyany-mej.html>
3. Աստոյան Ա., *Դարի կողոպուտը, Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.*, Երևան, 2013
4. Բարսեղով Յու., *Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը* (ոճաբացիայի և փոխհատուցման խնդիրներ), Երևան, 1999
5. Գեղիքփաշայի հայ բողոքական եկեղեցու վաքըֆն իր առարկությունն է հայտնել իրեն պատկանող գույքի դիմաց որպես փոխհատուցում տրվող գումարի կապակցությամբ <http://akunq.net/am/?p=25748>
6. Դիարբեքիի հայկական Սբ. Կիրակոս եկեղեցու հիմնադրամը դիմել է դատարան <http://akunq.net/am/?p=50092>
7. Զոհրապ Գ. , «Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ», Երկերի ժողովածու, հ. Գ: Երևան, 2002
8. Թաներ Աբչամ. «Լքյալ գույքի մասին բոլոր օրենքներում թե՛ օսմանյան և թե՛ հանրապետական կառավարություններն անընդհատ կրկնել են այն սկզբունքը, թե այդ ունեցվածքի իրական տերերը հայերն են» <http://akunq.net/am/?p=26815>
9. Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը <http://akunq.net/am/?p=3874>
10. Խաթանասյան Երվ., *Հայոց թիվը*, Պոստըն, 1965
11. Խառատյան Ա., *Կոստանդնուպոլսի հայ գաղութը, (XV-XVII դդ.)*, Երևան, 2007
12. Կիրակոսյան Ա., *Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը* (պատմաիրավական եռալեզու տեղեկանք), Երևան, «Նորավանք» ԳԿՀ, 2006

13. Կիրակոսյան Ջ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը*, Երևան, 1967
14. Կիրակոսյան Ջ., *Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ*, Երևան, 1982
15. Հայ ունեցվածքի ճակատագիրը Օսմանյան կայսրությունից ցայսօր
<https://annamuradyan.wordpress.com/2013/12/21/armenian-property-since-otoman-empire-by-now/>
16. *Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923)*, փաստաթղթերի ժողովածու (պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, կազմ. Ջ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան), Երևան, 1972
17. *Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը* <http://www.arfd.info/hy/?p=21459>
18. Հովհաննիսյան Ա., «Արտոնյալ վաճառականության» (Hayriye tüccarları) նախաձեռնումից մինչև «տնտեսության թուրքացման» քաղաքականություն (19-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում թուրք/մուսուլման ձեռներեցությունը խթանելու փորձի մասին)», *Արևելագիտության հարցեր / Գիտական հոդվածների պարբերական ժողովածու*, ԵՊՀ / No.10 (նվիրված ակադեմիկոս Ռ. Սաֆրաստյանի ծննդյան 60-ամյակին), Երևան 2015, էջ 17-50
19. Հովհաննիսյան Ա., «Հայասպանությունը՝ մշակութային ցեղասպանության համատեքստում», *ՎԷՄ համահայկական հանդես*, թիվ 2, 2010 թ., էջ 100-109
20. Հովհաննիսյան Ա., «Ցեղասպանության ժխտումը և էթիկան (թուրքական ազգային պետության կազմավորման որոշ հարցերի լույսի ներքո)», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. IV, Երևան, 2006, էջ 124-129
21. Հովհաննիսյան Ա., «Քեմալ Աթաթուրքը և հայերի ունեզրկման գործընթացը», *ՎԷՄ համահայկական հանդես*, Երևան, 2011, հունվար-մարտ թիվ 1, էջ 168-182
22. Ղազարեան Հայկազն, *Ցեղասպան թուրքը*, Պեյրուք, 1968
23. Ղազարյան Հ., *Արևմտահայերի առցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ.*, Երևան, 1967

24. Մանուկյան Ս., Թուրքական ժխտողականություն, http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=463
25. Մելքոնյան Ռ., «Թուրքական «ազգային պետության» նախահիմքերը» http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=479&spphrase_id=52414
26. Մելքոնյան Ռ., «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության «թուրքացման» քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ*, հ. 5, Երևան, 2008, էջ 127-143
27. Յարութիւնեան Ա., «Արեւմտեան Հայաստանի եկեղեցիների ու վանքերի բռնազավթումը եւ ոչնչացումը ունեցուածքի փոխհատուցման իրաւական հիմքերը» <http://akunq.net/am/?p=13707>
28. Նասիպեան Ա., *Բրիտանիա եւ Հայկական Հարցը* (1915-1923), Պէյրուք, 1994
29. Չեթինօղլու Ս., «2015 թ.՝ 100-ամյա տարելիցի սինդրոմի շուրջ» <http://akunq.net/am/?p=30783>
30. Չորմիսյան Լ., *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան*, Ա. հատոր., Բէյրուք, 1972
31. Պապյան Ա., «Հայ ժողովրդի նյութական կորուստերը Հայոց ցեղասպանության ժամանակ», *Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները*, Երևան, 2007
32. Պարսամյան Ս. «Հայկական մշակութային արժեքների ոչնչացումն ու դրա հետևանքները 1894-1896թթ. համալոյսան կոտորածների տարիներին» <http://www.genocide-museum.am/arm/articles-Seda-Parsamyan.php#sthash.ZTL7NIqE.dpuf>
33. Պողոսյան Ն., «Թուրքայի ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը (1923-2011 թթ.). համառոտ ակնարկ», *Մերձավոր Արևելք (հոդվածների ժողովածու)*, հ. VIII, Երևան 2012, էջ 309
34. Ռեֆաթ Մելվան Զադե, *Օսմանեան յեղափոխութիւնը եւ մուք ծայքերը*, Բէյրուք, 1938

35. Սահակյան Լ., «Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական թուրքիայում», URL to article: <http://blog.ararat-center.org/?p=284>
36. Սահակյան Ռ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ.*, Երևան, 1970
37. Սարուխանյան Տ., «Հայոց ցեղասպանության համար նյութական պատասխանատվության խնդիրը և Մեծ Բրիտանիան (1915-1924թթ.)», *Պատմա-բանասիրական հանդես*, 2002, №1, էջ 50-64
38. Սարուխանյան Տ., «Մեծ Բրիտանիայի և ցեղասպանության ընթացքում հայերի կրած նյութական և ֆինասական վնասների մի շարք հարցերի շուրջ»
<http://168.am/2012/10/18/137006.html>
39. Սաֆարյան Ալ., *Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները»*, Երևան, ԵՊՀ հրատ., 2012
40. Սաֆրաստյան Ա., «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի կողմից Թուրքիայի արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված եկեղեցիների և վանքերի ցուցակներն ու թաքրիրները (1912-1913)», *Էջմիածին*, Ա (հունվար), 1965, էջ 42
41. Սաֆրաստյան Ռ., «Թուրքիան Հայոց ցեղասպանության հարցը համարում է իր ազգային անվտանգության խնդիր», *Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև...*, Երևան, 2003
42. Սաֆրաստյան Ռ., «Օսմանյան կայսրության 1915թ. «Տեղահանության օրենքը», *Պատմա-բանասիրական հանդես*, 2007, № 2 . էջ. 72-81
43. Սիմոնյան Հր., *Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից*, Երևան, 1991
44. Վահե Հայկ, *Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը*, Նյու Յորք, 1959
45. Վարդան Լեւոն, *Հայկական Տասնհինգը և Հայերու Լքեալ Գոյքերը*, Պեյրուֆ, 1970
46. Տատրյան Վ., *Ակնարկներ Հայկական ցեղասպանութեան մասին*, Երեւան 2004

47. Տիգրանեան Տ., *Անգլիան եւ Հայերը*, Երևան, 1994
48. «Քամի Արմեն»-ը վերադարձվեց հայ համայնքին. Ermenihaber
<http://www.azatutyun.am/archive/news/20151027/2031/2031.html?id=27329570>
49. Քարտաշյան Ա., «Փոքրամասնությունների՝ բռնագրավված անշարժ գույքը հետ վերադարձնելու վերաբերյալ «պատմական որոշմամբ» նախատեսված ժամանակահատվածը լրացավ» <http://akunq.net/am/?p=24548>
50. Քեչիշյան Պ., «Հույների վերջին տեղահանության 50 տարին» <http://www.azg.am/AM/2014032812>
51. Քոլանջյան, Ս. «Հայկական կոտորածները և մեր ձեռագրական կորուստները», *Էջմիածին, Բ-Գ-Դ* (փետրվար – մարտ-ապրիլ), 1965, էջ 96-107
52. Ֆայեզ ալ Ղոսեյն, *Ջարդերը Հայաստանի մեջ* (ականատեսի վկայություններ), Կահիրե, 1960

Ռուսերեն

53. Барсегов Ю., «Державы, причастные к Геноциду армян, должны искупить свою вину»
<http://armenianhouse.org/barsegov/articles-ru/guilt.html>
54. Барсегов Ю., «К вопросу о применимости Конвенции к геноциду армян», *Ноев ковчег*, N 6(64), июль 2003,
<http://genocide.ru/lib/barsegov/question.htm>
55. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под ред. М.Г.Нерсисяна, Ереван, 1983
56. Инджикян О.Г., *Буржуазия Османской империи*, Ереван, 1977
57. Микаелян В.А., *Армянский вопрос и геноцид армян в Турции (1913- 1919)* - Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии, Ереван, 1995
58. Миллер Ю.А., *Искусство Турции*, Москва-Ленинград, 1965

Անգլերեն

59. Akçam T., *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility*, New York: Metropolitan Books, 2006

60. Akçam T., *From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide*, London: Zed Books, 2004
61. Arsu S., "Turkish Government to Return Seized Property to Religious Minorities"
<http://www.nytimes.com/2011/08/29/world/europe/29turkey.html?r=0>
62. Bali R., "Politics of Turkification during the Single Party Period"
<http://www.rifatbali.com/images/stories/dokumanlar/basel.pdf>
63. Bedrosyan R., "Special Report: What is Turkey Returning to Armenians?"
<http://armenianweekly.com/2011/08/31/property-return/>
64. Bevan R., «The Destruction of Memory: Architecture at War», Chicago, 2006 www.press.uchicago.edu
65. de Condapa P., «Destroying Heritage, Destroying Identity»
www.traumwerk.stanford.edu
66. Çetinoglu S., "Foundations of Non-Muslim communities: The last object of confiscation"
<https://neweasternpolitics.wordpress.com/2012/02/28/foundations-of-non-muslim-communities-the-last-object-of-confiscation-by-sait-cetinoglu/>
67. Dadrian V., "The Complicity of the Party, The Government, and the Military: Select Parliamentary and Judicial Documents", *Journal of Political and Military Sociology*, Vol. 22, № 1
68. Der Matossian B., "The Taboo within the Taboo: The Fate of Armenian Capital' at the End of the Ottoman Empire", in *European Journal of Turkish Studies*[online], Complete List, 2011, Online since 06 octobre 2011, URL: /index4411.html
69. Der Matossian B., "The Armenian Commercial Houses and Merchant Networks in the 19th Century Ottoman Empire," in *TURCICA*, Issue # 39, Fall 2007, pp.147-174
- Derdarian M., *Vergeen: A Survivor of the Armenian Genocide*, LosAngeles:Atmus,1996
70. Doğan N., *The Origins of Liberalism and Islamism in the Ottoman Empire (1908-1914)*, /Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie am Institut für Soziologie.Fachbereich Politik- und

- Sozialwissenschaften der Freien Universität Berlin, 2006/, chapter 3
 "Ottoman intellectuals in the nineteenth century", pp.55-206
https://www.academia.edu/6346089/The_Origins_of_Liberalism_and_%C4%B0slamism_in_the_Ottoman_Empire
71. Genocide and Crimes Against Humanity. *Etnocide*, www.eNotes.com
 - Halacoglu Y., *Facts, Relating to the Armenian Displacement (1915)*, TTK Publication, Ankara, 2001
 72. Hovannisian A., "Turkey: A Cultural Genocide", in *Problems of Genocide (Proceedings of the International conference on «Problems of Genocide», April 21-23, 1995, NAS RA, Yerevan)*, Cambridge, USA & Toronto, Canada, 1997, p.376-385
 73. Kouyoumjian D., «The Destruction of Armenian Historical Monuments as a Continuation of the Turkish Policy of Genocide», in *A Crime of Silence: The Armenian Genocide*, London, 1985
 74. Kouyoumjian D., «When Does Genocide End? The Armenian Case», Holocaust Lecture Series Sonoma, California March, 11, 2003
 75. Kouyoumjian D., "Confiscation of Armenian Property and the Destruction of Armenian Historical Monuments as a Manifestation of the Genocidal Process", in *Anatomy of Genocide: State-Sponsored Mass Killings in the Twentieth Century*, Alexandre Kimenyi and Otis L. Scott, eds. (Lewiston, N.Y.: Edwin Mellen Press, 2001), p. 307-319
 76. Kurban D., Hatemi K., *The story of an alien(ation): Real estate ownership problems of non-Muslim foundations and communities in Turkey*, Istanbul, 2010
 77. Lemkin R., *Axis Rule in Occupied Europe*, Washington, 1944
 78. Lost Armenian gold located by Turkish Historical Society
<http://www.hurriyetdailynews.com/PrintNews.aspx?PageID=383&NID=23794>
 79. Lyndel V. Prott, "Ethnocide", *Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity*, [ed. in chief Dinah L. Shelton], vol. 1, Thomson Gale, 2005

80. Meharg S., "Identicide and Cultural Cannibalism: Warfare's Appetite for Symbolic Place" , *Peace Research Journal*, 33:3, November, 2001, p. 89-98
81. Morgenthau H., *Memoires*, Paris 1919
82. Return of properties belonging to community foundations
<http://www.vgm.gov.tr/duyurudetay.aspx?Id=40>
83. Tatz, C., "Genocide Studies: An Australian Perspective," *Genocide Studies and Prevention: An International Journal*: (2011), Vol. 6: Iss.3: Article 5 <http://scholarcommons.usf.edu/gsp/vol6/iss3/5>
84. Text of the European Parliament's Resolution of June 18, 1987.- "The Armenian Question Today", Glendale, CA, 1988
85. Their properties have been given back, what about seized foundations? <https://www.cihan.com.tr/en/cms-copied-news-on-26-10-519937.htm>
86. Totten S., "Genocide: A Primer for Students in Grades 8-12", *Social Sciences Record* 24, № 2, 1987
87. Üngör U. and Polatel M., *Confiscation and Destruction: The Young Turk Seizure of Armenian Property* , London/New York: Continuum, 2011
88. Üngör U., "Confiscation and Colonization: The Young Turk Seizure of Armenian Property" <http://www.armenianweekly.com/2011/04/22/confiscation-and-colonization-the-young-turk-seizure-of-armenian-property/html>
89. Üngör U., *A Reign of Terror; CUP Rule in Diyarbakir Province, 1913-1923*, Amsterdam, pdf.2005
90. de Zayas A., *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005
91. 16 March 1964 - The Banishment of the Greek Community of İstanbul through Deportations and Expatriation
<http://www.conpolis.eu/uploadedNews/16%20Mart%201964-Eng.pdf>

Ֆրանսերեն

92. Baghdjian K., *La confiscation, par le gouvernement turc, des biens arméniens... dits « abandonnés »*, Montreal 1987
93. Kévorkian R. et Paboudjian P., *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du Génocide*, Paris: Arhis, 1992

Թուրքերեն

94. Akar R., *Aşkale yolcuları (varlık vergisi ve çalışma kampları)*, İstanbul, 2006
95. Akçam T., Dadrian V., *"Tehcir ve Taktik": Divan-ı Harb-i Örfi Zabıtları, İttihad ve Terakki'nin Yargılanması (1919-1922)*, İstanbul : Bilgi Univesitesi Yayinlari 2008
96. Akçam T., Kurt Ü., *Kanunların Ruhu. Emval-i Metruke Kanunlarında Soykırımın İzini Sürmek*, İletişim Yayınları, İstanbul 2012
97. Aktar A., "6 - 7 Eylül 1955 Cumhuriyet tarihinin en karanlık gecesi ...", *Pazartesi, 5 Eylül 2005, Sabah gazetesi yazı dizisi*
[https://www.academia.edu/20103181/6 - 7 Eylül 1955 Cumhuriyet Tarihinin En Karanlık Gecesi 6 - 7 Eylül 1955 Cumhuriyet Tarihinin En Karanlık Gecesi 6 - 7 September 1955 Darkest Night of Republican History](https://www.academia.edu/20103181/6_-_7_Eyl%C3%BCl_1955_Cumhuriyet_Tarihinin_En_Karanl%C4%B1k_Gecesi_6_-_7_September_1955_Darkest_Night_of_Republican_History)
98. Aktar A., "Son Osmanlı Meclisi ve Ermeni Meselesi: kasım-aralık 1918", *Toplum ve Bilim, 91, Kış 2001/2002* s.142-165
99. Aktar A., *Varlık Vergisi ve 'Türkleştirme' Politikaları*, İletişim Yayıncılık, İstanbul 2000
100. Aktar A., "Cumhuriyetin ilk yıllarında uygulanan 'Türkleştirme' Politikaları", *Tarih ve Toplum*, No: 156, 1996, s. 4-18
101. Alptekin E., "Vakıflar Yasası kabul edildi: Sıra Lozan'a mı geldi?"
<http://www.turksolu.com.tr/175/alptekin175.htm>
102. Altınay A.R., *Türk mimarları*, İstanbul, 1977
103. Arseven E., *Türk sanatı tarihi*, İstanbul, 1950
104. Bardakçı M., "Atatürk, 1915'e 'soykırım' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parası' olarak Ermeni gayrimenkullerini bağışlamıştı"
<http://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/793024->

- ataturk-1915e-soykirim-diyen-hasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-gayrimenkullerini-bagislamisti
105. Bardakçı M., *Talât Paşa'nın Evrak-ı Metrûkesi*, İstanbul: Everest, 2008
106. Bayar C., *Ben de Yazdım: Tırnak içindeki tüm ifadeler*, Cilt 5, İstanbul 1967
107. Bayramoğlu A., "Kulak verin: Kültürü yıkmak, belleği aşağılamak..."
<http://www.yenisafak.com.tr/yazarlar/alibayramoglu/kulak-verin-kulturu-yikmak-bellegi-asagilamak-2010609>
108. Bayur, Y., *Türk Inkılâbı Tarihi*, Cilt III, Ankara, Türk Tarih Kurumu, 1983
109. Bleda M. Ş., *İmparatorluğun Çöküşü*, İstanbul, Remzi, 1979
110. Çerkezian S., *Dünya Hepimize Yeter*, Gedik: Belge Yayınları, İstanbul, 2003
111. Çetinoğlu S., "Ankaranın ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır!" www.mavidefter.org/index.php
112. Çetinoğlu S., "Etnik Temizlik ve Ekonominin Türkleşmesi", <http://www.birikimdergisi.com/guncel/etnik-temizlik-ve-ekonominin-turklesmesi>
113. Çetinoğlu S., « Ermeni Emval-i Metrukeleri Üzerine -1 »
www.norzartonk.org/xml
114. Çetinoğlu S., «Sermayenin Türkleştirilmesi», *Resmi Tarih Tartışmaları* -2, Ed. Fikret Başkaya, 2. Baskı 2009
115. Düzel N., "Neden? Hrant Dink"
www.radical.com.tr/haber.php?/2005/05/23
116. Er I.H., "Ermenilerin mallarına ne oldu",
<http://agdistanbul.wordpress.com/2007/04/25>
117. Gökalp Z., *"Millet Nedir, Milli İktisat Neden İbarettir"*, İstanbul 1915
118. Hür A., "Ermeni mallarını kimler aldı?" www.taraf.com.tr/ayse-hur/makale/2008/02/03
119. Hür A., "Pangaltı ve Kurtuluş'ta milliyetçi sokak isimleri", Agos, 22 Mayıs 2009

120. Kardeş S., *Tehcir ve Emval-i Metruke Mevzuatı* (Ankara: Maliye Bakanlığı Strateji Geliştirme Başkanlığı), 2008
121. Nalci A., "Tarihi unutturulma yolunda bir köşetaşı: isim değiştirme", Agos, 22 Mayıs, 2009
122. Ogün N., "Türk milliyetçiliğinin 'kanlı' ekonomi politiği" <http://akunq.net/tr/?p=1411>
123. Onaran N., *Emvâl-i Metruke olayı: Osmanlı'da ve Cumhuriyet'te Ermeni ve Rum malların Türleştirilmesi*, İstanbul, Belge Yayınları, 2010
124. Öz T., *Turkish Ceramics*, Ankara, 1955
125. Özkoray E., "Ermeni Soykırımı niçin hâlâ tabu?", *KÜYEREL*, 10.03.2010
126. Özüün E., "Acı bir kilometre taşı ve kültür kırımı", Agos, 13.11.1998
127. Tevfik Ç., *Türkiye Ekonomisi Tarihi*, İmge K. 2003
128. Toprak Z., *Türkiye'de «Milli İkisat» (1908-1918)*, Ankara 1982
129. Toprak Z., *Türkiye'de Ekonomi ve Toplum (1908-1950) İttihat-Terakki ve Devletçilik*, İstanbul 1995
130. Zarakolu R., "Yeni hükümet ASİMKK\’yi sürdürecektir mi?", 11.07.2011 <http://www.ozgur-gundem.com>
131. «Osmanlı arşivleri açılırsa resmi tez zayıflar» www.ulkucuderlerbize.com/forum/-t
132. «3 Mart devrim yasaları» <http://www.atam.gov.tr/dergi/sayi-35/3-mart-1924-devrim-yasaları>
133. 2012 Beyanname - İstanbul Ermeni vakıflarının el konan mülkleri <http://www.istanbulermenivakiflari.org/>

ПРОЦЕСС ЭКСПРОПРИАЦИИ ИМУЩЕСТВА АРМЯН В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ И КЕМАЛИСТСКОЙ ТУРЦИИ

РЕЗЮМЕ

В данном исследовании геноцид армян рассматривается как одновременный процесс деструкции и конструкции, а именно: как за счет уничтожения одной группы (армян) конструировалась другая - с новой турецкой идентичностью. Результатом процесса «конструирования новой идентичности», или «гомогенизации» Анатолии (а по сути, ее «туркизации»), стали Геноцид и патрицид (лишение родины – Западной Армении) армян. Депортация и резня сопровождались грабежом имущества армян и уничтожением культурных ценностей. В целом, эти действия квалифицируются экспертами как осуществление запланированного акта незаконной передачи индивидуального и коллективного имущества армянского населения Османской империи и «армянского капитала» в собственность новоявленных мусульманских – турецких и курдских – «владельцев».

Характерной особенностью Геноцида армян является участие в нем гражданского населения: соучастие в преступлении государства осуществлялось на почве личных интересов – обогащения путем грабежа имущества армян. Этим государство не только возлагало часть ответственности на плечи рядовых мусульман, но и в какой-то мере обеспечивало массовую поддержку своим преступным действиям.

Депортация армян началась еще в феврале 1915 года. Центральному комитету партии «Единение и прогресс» необходимо было легализовать эти депортации, и поэтому 27 мая 1915 г. он принял проект «временного закона» о депортации армян. Через несколько дней, 30 мая 1915 г., Кабинет задним числом (закон был официально опубликован 1 июня) утвердил закон о продолжающихся депортациях. Этот закон находился в силе вплоть до 4 ноября 1918 г. «Закон о покинутой собственности» был принят 13/26

сентября 1915 г. Новый «временный закон» от 27 сентября 1915 года, Временный закон об имуществе, долгах и покинутой недвижимости лиц, переселенных в другие районы: «Закон о заброшенных домах, долгах и кредитах лиц, переселенных в другие места (депортированных-А. О.)» отменил все сделки с имуществом, в том числе сделки цессии/передачи другим лицам (feragat) имущества. 8 ноября 1915 г. было принято новое постановление о необходимости внесения всех данных в специальные регистрационные книги.

Все эти многочисленные временные законы, решения, секретные циркуляры и предписания преследовали две основные цели: 1) охватить конфискацией практически все имущество армян, вплоть до мелочей; 2) попытаться полностью проконтролировать процесс конфискации и экспроприации в экономических интересах государства и хоть как-то предотвратить коррупцию и воровство чиновников и местной черни. Немецкие ученые-юристы и стамбульские деловые круги называли эти законы «легализацией грабежа».

В конечном итоге, армянское имущество служило нескольким целям: оно было использовано для удовлетворения потребностей беженцев-мусульман, для создания мусульманского буржуазного класса, для различных военных нужд, для покрытия расходов правительства на депортацию армян, для покрытия долгов и трат правительства и, наконец, для создания ополчения во время кемалистского движения. Имеются данные, что часть реквизированных армянских финансовых средств была депонирована турецким правительством в банках Германии и Австрии, а после их поражения в войне перешла в распоряжение держав Антанты.

Вопрос об «оставленном имуществе» поднимался в повестке дня послевоенного парламента Османской империи, а также османских военных трибуналов еще до провозглашения Турецкой Республики. Решением от 8 января 1920 г. османский парламент в Стамбуле (после поражения Османской империи в войне) отменил принятый кабинетом младотурок закон о конфискации имущества лиц, высланных в иные места проживания. 14 сентября 1922 г. кемалисты объявили о непризнании ими акта аннулирования временного закона об «оставленном имуществе» султанским прави-

тельством, а перед самым заключением Лозаннского мирного договора - 15 апреля 1923 г. - был с поправками восстановлен упомянутый иттихадистский закон, по которому все имущество армян конфисковывалось независимо от того, когда, по каким причинам и при каких обстоятельствах они покинули страну. Ссылаясь на положения этого закона, турецкое правительство заявило претензии на вклады армян в турецких банках и отделениях иностранных банков, а также на вклады, переведенные этими филиалами в Европу, и тем самым помешало возвращению этих денег их законным собственникам. В апреле 1923 г. (в кемалистский период) с целью окончательной конфискации не только движимого, но и недвижимого имущества депортированных лиц Великое национальное собрание Турции внесло определенные изменения в первоначальный текст закона, переименовав его в «Закон о ликвидации». Под этим названием он находился в обращении вплоть до ноября 1988 г.

Таким образом, проект по созданию нового турецкого национального государства в кемалистском видении, закладка базовых компонентов экономики республики, первоначальное накопление капитала в руках зарождающегося класса крупной мусульманской/турецкой буржуазии (т. е. воплощение пантюркистской идеи о «национальной экономике») — все это в значительной степени осуществилось за счет геноцида, изгнания и присвоения имущества армян, греков, ассирийцев, т. е. своих же сограждан-христиан.

THE PROCESS OF THE ARMENIANS' WEALTH SEIZING IN THE OTTOMAN EMPIRE AND KEMALIST TURKEY

SUMMARY

The Armenian Genocide should be considered as a simultaneous process of destruction and construction, namely, the process of shaping a new Turkish identity exterminating an ethnic group (Armenians). The result of such a process of "constructing a new identity" or "homogenization" of Anatolia (but in fact, its "Turkification") were the Armenian Genocide and deprivation of their homeland (Western Armenia). Deportation and massacres were accompanied by plundering them and destroying their cultural values. A characteristic feature of the Armenian Genocide is the involvement of civilians in it: complicity in the state crime was based on private interests – enrichment through plundering the Armenians' property. Thereby the state not only laid part of the responsibility upon ordinary Muslims, but to some extent ensured mass support to its criminal acts. The deportation of the Armenians began as far back as in February 1915. Numerous temporary laws, resolutions, secret circulars and orders had been adopted from May up to November 1915, which pursued two main objectives: 1) to seize almost all the property of the Armenians, down the last detail; 2) to try to fully control the seizure and expropriation and somehow prevent the corruption and pillage of the government officials and local common people. German legal scholars and the business community of Istanbul called these laws "the legalization of pillage." Eventually, property of the Armenians served several purposes: it was used to meet the needs of Muslim refugees to form a Muslim bourgeoisie; to suit various military needs; to cover the expenses for deporting the Armenians, to clear debts and expenditures of the government; to establish volunteer militia during the Kemalist movement. There is information that a part of seized financial resources of the Armenians was deposited by the Turkish government in

the banks of Germany and Austria, but it passed into the disposal of the Entente powers after their defeat in the war. In April 1923 (in the Kemalist period) the Grand National Assembly of Turkey adopted the "Liquidation Law" with the view of the conclusive seizure of not only personal, but also real estates of the deportees. It was in force up to November 1988. Thus, the project on creating a new Turkish national State in the Kemalist vision, the laying of the economic basic components of the republic, the primary accumulation of capital in the hands of the Muslim/Turkish rising upper middle class (i. e. the embodiment of pan-Turkic idea of "national economy") – all this was largely implemented through genocide, exiles and expropriation of the property of the Armenians, Greeks, Assyrians, i. e. of their Christian fellow citizens.

1. Takvim-i Vakayi'deki Metin

تقویم وقایع

۱۴ ایلول

تقویم وقایع

آخر محارره نقل ایدیلن اشخاصک اموال و دیون و مطلوبات
متر و کرسی حقنده قانون موقت

ماده : ۱ ۱۴ مایس ۱۳۳۱ تاریخی قانون موقت حکمنجه آخر
محارره نقل ایدیلن اشخاص حقیقه و حکمیه نك ترك ایتمش اولدقلری
اموال و مطلوبات و دیون بو خصوص ایچون متشکل قومیسونلرک هر
شخص ایچون آیری آیری تنظیم ایدیه جکلری مضطهلر اوزرینه محکمه لرجه
تصفیه ایدیلیر.

ماده : ۲ برنجی ماده ده بیان اولنان اشخاصک حین نقللرنده
متصرف بولدقلری اجارینلی مسقیات و مستغلات و قفیه نك خزینة اوقاف
واموال غیر منقولہ سائر نك خزینة مالیه ناملرینه قیدلری اجرا ایدیلرک
هر ایکی قسم اموال غیر منقولہ نك مذکور خزینلر طرفدن و بریلرک
بدللرندن بعدالتصفیه قالدجق مقداری اصحابنه اعطا اولتور.

اموال مذکورده دائر تحدد ایدیه جک استحقاق وسائر دعاویده
دفتر خاقانی مأمورلری خیم اولور و بوماللرده تصرفک ایتاندن مواضعه دن
عاری اولق شرطیه سندات خاقانیه نك غیرى دخی معتبر طوئیلور.
اشخاص مجوئه نك تاریخ نقللرندن اون بش کون اولکی مدت
ظرفنده اجرا ایتدکلری معاملات فراغیده مواضعه ویا غین قاحتک
وجودی بالمحاکه ثابت اولدینی تقدیرده عقود واقعه فسخ و ابطال اولتور.

Օսմանյան կայսրության «Թաքվիմ-ի Վաքայի» (Takvim-i Vakayi) պաշտոնաթերթի 1331(1915)թ. սեպտեմբերի 14-ի 2303 համարում տպագրված «Այլ վայրերում վերաբնակեցված (տեղահանված – Ա. Հ.) անձանց լրված տների, պարտքերի և վարկերի մասին» ժամանակավոր օրենքի (Ahar Mahallere Nakledilen Eşhasın Emval ve Düyûn ve Matlûbat-ı Metrûkesi Hakkında Kanun-u Muvakkat) որոշ դրույթներ

Հոդված 1 - Այն անձանց գույքը, որոնք համաձայն մայիսի 14 [27], 1915թ. «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքի թողել [լքել] են իրենց բնակության վայրը, և որոնց ունեցվածքը գրանցվել է հատուկ գրանցամատյանում, ինչի մասին պաշտոնական հաշվետվություններ են պատրաստվել՝ յուրաքանչյուր դեպքում պետք է լուծարվի դատական կարգով:

Հոդված 2 – Որևիցե գյուղ, կամ ավան ուրիշ վայր «փոխադրելուց» (պետք է հասկանալ՝ տարագրելուց) հետո, «փոխադրված» (այսինքն՝ տարագրված) մարդկանց սեփական տները և բոլոր շինությունները՝ իրենց մեջ գտնված ապրանքներով պիտի փակվեն, դոները պիտի կնքվեն և պահպանության և հսկողության տակ պիտի վերցվեն:

Հոդված 3 – Պահպանության և հսկողության տակ վերցված գույքի տեսակները, քանակությունը, գնահատված արժեքները և սեփականատերերի անունները մանրամասնությամբ պետք է արձանագրվեն մատյաններում (տոմարներում), որից հետո գույքերը եկեղեցիների, դպրոցների, խանութների և պահեստատեղիների մեջ պիտի փոխադրվեն, այնպես, որ յուրաքանչյուրի սեփականատերը հայտնի լինի: Գույքի սեփականատիրոջ և գույքի քանակության մասին տեղեկագիր պետք է պատրաստվի, որի բնագիրը պետք է հանձնվի տեղական կառավարությանը, իսկ դրա պատճեն՝ «Լքյալ» գույքերի վարչական հանձնախմբերին:

Հոդված 6 – Եկեղեցիների մեջ եղած գույքերը, նկարները, Մուրբ Գրքերը պետք է արձանագրվեն, դրանց պիտի կցվեն տեղեկագրեր և պահվեն տեղում: Երբ տարագրված բնակչությունը որևէ տեղ կհաստատվի, յուրաքանչյուր գյուղին պատկանող եկեղեցական ունեցվածքը պետք է նրան ուղարկվի:

Հոդված 11 – Տարագրված հայերի գյուղերում, բնակարաններում և հողերի վրա պիտի բնակեցվեն թուրք մուհաջիրներ, որոնց պիտի տրվեն համապատասխան վկայաթղթեր:

Հոդված 22 (հետագայում լրացված- Ա.Հ.) – Ծախված կամ վարձով տրված կայվածքների գումարները տերերի անուններով պիտի հանձնվեն պետեկամուտների զանձարկղին... որոնք հետագայում... իրենց տերերին պետք է հանձնվեն:

Օրենքն ընդունվել է 1331(1915)թ. սեպտեմբերի 13-ին

Ստորագրել են՝ Վարչապետ Մեհմեդ Ռեշադը, Ներքին գործերի և ֆինանսների նախարար Թալեաթը, սուլթանական Վարուժների տնօրեն Իբրահիմը, Արդարադատության նախարար Հայրին

Աղբյուր՝ Salahaddin Kardeş, *Tehcir ve Emval-I Metruke Mevzuatı* (Ankara: Maliye Bakanlığı Strateji Geliştirme Başkanlığı), 2008, s.23-30.

Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք/տուն վերադառնալու արգելքի մասին որոշումը (Sait Çetinoğlu, Ankara'nin ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org)

* Շրջանակի մեջ առնված է Մուսթաֆա Քեմալի ստորագրությունը:

N 1



Անկարայի կառավարության՝ հայերի հայրենիք/տուն վերադառնալու արգելքի մասին որոշումը (Sait Çetinoğlu, Ankara'nin ilk kararı: Ermenilerin ülkelerine/evlerine dönmeleri yasaktır, www.mavidefter.org) Հայերեն թարգմանությունը՝ Ա.Հ.

* Թիվ 1 փաստաթղթի վերևի մասում առկա արխիվի կնիքը:

** Փաստաթուղթը թվագրված է հիջրեթի տոմարով, փակագծերում բերված է տարերթիվն ըստ Գրիգորյան օրացույցի:

*** Թիվ 1 փաստաթղթում առկա անընթեռնելի ստորագրություն:

**** Փակագծերում ներկայացված ազգանունները թիվ 1 փաստաթղթում բացակայում են : Այդ ազգանունները թվարկված թուրք բաղաբական գործիչները ստացան 1934թ. «Ազգանունների մասին» օրենքի ընդունումից հետո և նշվել են՝ նրանց նույնականացնելու նպատակով:

***** Թիվ 1 փաստաթղթի ներքևի մասում առկա արխիվի ձեռագիր նշումները:

*Պետական արխիվների Գլխավոր վարչություն
Հանրապետական արխիվ**

Փաստաթղթերի ձևակերպումը դադարեցվում է

Մեր հանձնաժողովը, ծանոթանալով Ներքին գործերի նախարարության հունիսի 14/336 թվագրված համար 769 գրությանը, հաշվի առնելով, որ մոտակա բնակավայրերում գտնվող հայերը խումբ-խումբ Մտամբուլից անցնում են սահմանը, նրանցից զենք կրելուն ընդունակները օտարների կողմից զինվում և չարամիտ ոտնձգություններ են կատարում մուսուլմանների հանդեպ, որոշում է և տեղեկացնում, որ տվյալ հանգամանքներում նրանցից ոչ մեկի ազատ տեղաշարժը կամ ճանապարհորդությունն այսուհետ նպատակահարմար չի դիտվում:

18 հունիսի 336 (18 հունիսի 1920) **

Արտաքին գործերի նախարարի անունից՝ ստորագրություն ***
Արդարադատության նախարար

Ջելալեդդին Արիֆ բեյ

Շարիաթական գործերով նախարար

Մուսթաֆա Ֆեհմի էֆենդի

/Գերչեքեր/ ****

Գլխավոր շտաբի պետ՝

Իսմեթ բեյ /Ինյոնյու/ ****

Էկոնոմիկայի նախարար՝

Յուսուֆ Քեմալ բեյ /Թենգիրշենք/ ****

Կրթության նախարար՝

Դոկտոր Ռեզա Նուր բեյ

Ներքին գործերի նախարար՝

Հաքքը Բեհիշ բեյ /Բայիշ/ ****

Ազգային պաշտպանության նախարար՝

Ֆելվզի փաշա /Չաքմաք/ ****

Ազգային Մեծ Ժողովի նախագահ՝

Մուսթաֆա Քեմալ փաշա

Առողջապահության նախարար՝

Ադնան բեյ /Ադրվար/ ****

Հասարակական աշխատանքների նախարար

Իսմաիլ Ֆազլի փաշա /Ջեբետյ/ ****

Ֆինանսների նախարար՝

ստորագրություն ***

030.18.01.01/01.04.10 *****

Հայերի տեղաշարժը

արգելվում է*****

Հրապարակախոս Մուրադ Բարդաքչյան Haberturk ներկայացրել է կառավարության որոշման արխիվային մի փաստաթուղթ, որը թիվ 5559 համարով ուժի մեջ է մտել 1925թ. դեկտեմբերին՝ Աթաթուրքի և կառավարության բոլոր անդամների ստորագրությամբ:




Այդ փաստաթղթով որոշվել է, որ 1923թ. 19 սեպտեմբերի թիվ 339 որոշմամբ պետության կողմից բռնագրավված հայերի անշարժ գույքը Ստամբուլի Բեյոլլու, Ֆարիքքյոյ և ֆրանսիական գերեզմանոցի դիմաց Թաթավլա պողոտայի Վիզեն Հոկույանի կողմից թողնված անշարժ գույքը տրամադրել հայ վրիժառուների կողմից սպանված թուրք պետական գործիչների ընտանիքներին:

Փաստաթղթից պարզ է դառնում, որ 1450 քառ.մ. հողատարածքը և 200 քառ.մ. շինությունները տրամադրվել են Թիֆլիսում գտնված Ջեմալ Փաշայի ընտանիքին:

Աղբյուր՝ Murat Bardakci, "Atatürk, 1915'e 'soykırım' diyen Hasan ağabeyin ailesine 'kan parası' olarak Ermeni gayrimenkullerini bağışlamıştı" <http://www.haberturk.com/yazarlar/murat-bardakci/793024-ataturk-1915e-soykirim-diyen-hasan-agabeyin-ailesine-kan-parasi-olarak-ermeni-gayrimenkullerini-bagislamisti>

Հայերի ունեցվածքները Ստամբուլում

«Հրանտ Դինք հիմնադրամը» նշում է, որ Ստամբուլում 661 հայկական համայնքային կալվածք է առգրավվել թուրքական կառավարության կողմից, 53 հայկական հիմնադրամներին պատկանող 1,328 միավոր գույքերից թողնելով միայն 580-ը (դպրոցներ, եկեղեցիներ, հիվանդանոցներ և այլն): Հետագայում 143 (21.6%) են վերադարձվել:



Աղբյուր՝ <http://www.istanbulermenivakiflari.org/tr/harita>

Հրանտ Դինք Հիմնադրամի կողմից առգրավումների հետազոտությունները և նկարագրությունները, լուսանկարները և սահմանագծերը տեղադրված են առցանց [interactive mapping resource](#) կայքում:

Հայոց ցեղասպանությամբ պատճառված կորուստները

Վնասի հաշվարկ 100 տարի անց

Ցեղասպանությունն այնպիսի ծանր ոճրագործություն է, որ անգամ 100 տարի անց դժվար է գնահատել նրա ավերածությունները: Այդ ավերածության զգալի մասը հնարավոր չէ վերականգնել սպանված ազգեր, կորած սերունդներ, արմատախիլ արված համայնքներ, կողոպտված հայրենիք, ոչնչացված մշակութային ժառանգություն, բռնազավթված ունեցվածք և թալանված բնական ռեսուրսներ:

Մույն վերլուծությունը նվիրված է հայոց ցեղասպանության հարյուրամյակին: Սա ավելի շուտ ոչ թե իրավապահանջ է, այլ վերլուծություն, որն ընդհանուր սահմաններով ուրվագծում է պատճառված կորուստը, այն համոզմունքով, որ վնասի չափի ավելի լավ գիտակցումը կօգնի առաջ ընթանալու ուղիների որոնմանը: Շատ երկրներ և տարբեր շահեր դերակատարում են ունեցել հայոց ցեղասպանության իրականացման մեջ և էլ ավելի շատերը վերջին հարյուրամյակում իրենց սեփական արտաքին քաղաքական և տնտեսական նպատակներն առաջ մղելու համար օգուտ են քաղել Հայկական հարցի և հայոց ցեղասպանության շահարկումից:

Անգործությունն ու անտարբերությունն արմատավորում են այն պատկերացումը, որ ցեղասպանությունը շահավետ գործ է: Սա անընդունելի է, քանի որ այդպիսով ցածրացվում է բարբարոսության դեմ խոչընդոտը ողջ մարդկության համար:

Հանցագործությունը կիսադատապարտված և անհատույց թողնելը ցանում է անկայունության և խառնակության սերմեր: Հարևանները պետք է ի վիճակի լինեն ապրելու կողք-կողքի առանց իրենց անցյալի կողմից հալածվելու:

Առաջ ընթանալու ուղին պարզ է: Վերականգնելի վնասը պետք է վերականգնվի: Անվերականգնելի վնասը պետք է փոխհատուցվի: Սա է այն առաջարկը, որն արվեց հայկական պատվիրակության կողմից 1919թ. Փարիզի խաղաղության վեհաժողո-

վում և որը տակավին ի գորու է մատնանշել առաջ ընթանալու ուղին:

1919 թվականին քննարկվող բանաձևն իրենից ներկայացնում էր հայրենիքի վերականգնման և հայ ժողովրդի կողմից կրած անվերականգնելի կորուստների փոխհատուցման համակցությունը: Փոխհատուցման գնահատականները էլնում էին այն կանխադրությից, որ հայերի հայրենիքը Մև ծովից մինչև Միջերկրական ծով, պետք է վերադարձվի հայերին: Մակայն, ինչպես հայտնի է, ոչ անվերականգնելի կորուստները փոխհատուցվեցին, ոչ էլ հայրենիքը վերականգնվեց:

Ստորև բերված աղյուսակներն իրենցից ներկայացնում են 1919թ. հատուցման պահանջի արդիականացված տարբերակը: Թեպետ կորուստների մի մասն ակնհայտորեն անվերականգնելի է, այնուհանդերձ վերականգնելի և անվերականգնելի միջև սահմանը հաճախ սոսկ քաղաքական կամքի խնդիր է: Ուստի ստորև բերվող աղյուսակներում վերականգնելի և անվերականգնելի վնասի զանազան համակցությունները ներկայացվում են վնաս պատճառած կողմերի միջև խիստ մոտավոր մասնաբաժիններով: Այդ գնահատումները չեն հավակնում դառնալ այն 20 միլիոն հայերի չկայացած արարումների հաշվարկ, որոնք կապերին ցեղասպանությունը չլինելու դեպքում:

Աղբյուր՝

http://armeniangenocidelosses.am/pdf/Armenian_Genocide_Losses_Arm.pdf

Սույն կայքը պատրաստվել է հայաստանյան հետազոտական խմբի կողմից հիմնախնդրի հասարակական քննարկմանը նպաստելու համար: Խմբի կազմում են Թովմաս Մամուլեյանը, Դավիթ Դավիթյանը, Հովհաննես Ասրյանը, Տիգրան Սահակյանը և բազում այլոք որոնց ներդրումը սույն աշխատանքում գնահատվում է երախտագիտությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
«Հայկական կապիտալը» Օսմանյան կայսրությունում	8
Հայերի ունեզրկման գործընթացը օսմանյան ժամանակաշրջանում	15
Հայոց «լքյալ գույքի» խնդիրը քեմալական շարժման շրջանում	30
Հայերի նյութական կորուստների խնդիրը միջազգային աստիաններում Առաջին աշխարհամարտից հետո	41
Մշակութային ժառանգության ոչնչացումը որպես ցեղասպանության բաղկացուցիչ մաս	68
Թուրքայի Հանրապետությունում ոչ մուսուլմանների համայնքային կալվածքների խնդիրը . ունեզրկման քաղաքականության շարունակականությունը	90
Վերջաբան	118
Օգտագործված գրականության ցանկ	124
Резюме.....	136
Summary.....	139
Հավելված.....	140

ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԵՐԻ ՈՒՆԵԶԴԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ
ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր № 692
Ստորագրված է տպագրության՝ 05.05.2016թ.:
Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, տպագր. 9.5 մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24


[1500pp.]

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0414336

Անուշ Հովհաննիսյան



Աշխատում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության
ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող:
Զբաղվում է Թուրքիայի նոր և նորագույն
պատմության հիմնախնդիրներով, տարածա-
շրջանային քաղաքականությամբ, ինչպես նաև
Հայոց ցեղասպանության հարցերով:

Ануш Ованнисян

Старший научный сотрудник отдела
Турции Института востоковедения НАН РА.

Занимается изучением вопросов новой и новейшей истории и
региональной политики Турции, а также проблемой Геноцида армян в
Османской империи.

Anush Hovhannisyan

Senior research fellow of the department of Turkey at the Institute of
Oriental Studies, NAS RA. Main fields of her research include the problems
of modern and contemporary history and regional policy of Turkey, as well as
the problems of Armenian genocide.